ՀՀ Շիրակի մարզի Ամասիա համայնքի Արդենիս և Բերդաշեն բնակավայրերի, «Արփի լիճ»Ազգային Պարկ»ՊՈԱԿ-ի տարածքում՝ էստակադի և նավամատույցի կառուցման շրջակա միջավայրի վրա ադզեցության գնահատման հաշվետվություն

ԼՐԱՄՇԱԿՎԱԾ



Պատվիրատու՝ «Արփի լիճ»Ազգային Պարկ» ՊՈԱԿ
Տնօրենի պ/կ Ա. Ֆարզադյան

Պատվիրատուի իրավաբանական հասցեն՝ Հայաստան, Շիրակի մարզ, Բերդաշեն գյուղ
Հեռախոս, էլեկտրոնային փոստ՝ lakearpisnco@env.am

ՇՄԱԳ հաշվետվության կազմող՝ Ա/Ձ Հրանուշ Ալեքսանյան

Երևան 2026

Բովանդակություն

1.Ընդհանուր տեղեկատվություն ..... Error! Bookmark not defined.

2. Օգտագործվող հապավումները 81

3. Հավելվածներ ..... Error! Bookmark not defined.

4.Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ փորձաքննական գործընթացների վերաբերյալ. 4

5. Նախաձեռնողի անվանումը, գործունեության գտնվելու վայրը, իրականացման նպատակը. 5

6. Գնահատման հաշվետվության մշակման հիմքերը. ..... Error! Bookmark not defined.

7. Նախագծային փաստաթղթով նախատեսվող գործունեության տարածքի, այդ թվում՝ շրջակա միջավայրի, բնական պայմանների, ռեսուրսների բնութագիրը. 6

7.1 Ենթակա տարածք. 6

7.2. Շրջակա միջավայրի և «Դիլիջան» ազգային պարկի և համառոտ նկարագիրը. 8

8. Նախատեսվող գործունեության բնութագիր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումները, օգտագործվող բնական ռեսուրսներ և նյութեր, (շինարարության շահագործման , փակման փուլեր). 33

- Թույլատրելի բարձրությունը՝ 12մ ..... Error! Bookmark not defined.
- Կառուցապատում՝ 7% ..... Error! Bookmark not defined.
- Բարեկարգում՝ 13% ..... Error! Bookmark not defined.
- Կանաչապատում/ներառյալ բնական լանդշաֆտը/՝ 80% ..... Error! Bookmark not defined.

8.1 Շահագործմոն փուլ. 34

8.2 Շինարարության փուլ. 34

8.3 Ժամանակացույց 35

9. Օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր. 38

9.1Ջուր. ..... Error! Bookmark not defined.

9.2 Նյութեր. 38

10. Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները, ռիսկերը 40

(շինարարության և շահագործման փուլ). 40

10.1 Օդային ավազան 41

10.2 Հողային ռեսուրսներ 49

10.3 Ջրային ռեսուրսներ. 49

10.4 Կենսաբազմազնություն. 49

10.5 Թափոններ. 50

10.6 Պատմամշակութային և բնության հուշարձաններ. 51

10.7 Աղմուկ և թրթռում.....51
10.8.Արտակարգ իրավիճակներ.....53
10.9 Մարդու առողջության վրա հնարավոր ազդեցությունները, գործոնները, ռիսկերը.....54
10.10 Սոցիալական գործոններ......54
10.12 Բարեկարգում և կանաչապատում.....55
11.Շրջակա միջավայրի, մարդու առողջության վրա վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումները(Բնապահպանական կառավարման պլան).....55
11.1.Օդային ավազան.....55
11.2.....56
9.3 Ջրային ռեսուրսներ.....57
9.4 Կենսաբազմազանություն......58
9.5 Թափոններ......59
9.6 Աղմուկ և թրթռում.....59
9.7 Արտակարգ իրավիճակներ......59
9.8 Պատմամշակութային և բնության հուշարձաններ.....60
9.9 Աշխատանքի կազմակերպում և անվտանգություն, մարդու առողջություն.....60
9.10 Սոցիալական գործոններ.....61
9.11 Լանդշաֆտ. բարեկարգում, կանաչապատում.....61
13. Նախատեսվող գործունեության ազդեցության մշտադիտարկման ծրագիրը.....61
(Մոնիթորինգ)..... Error! Bookmark not defined.
14.Բողոքների ընթացակարգ.....62
15.Բնապահպանական միջոցառումների կառավարման պլան.....64
16.Մշտադիտարկման (մոնիթորինգի) միջոցառումներ.....76
Աղյուսակ 10.....76
13. Հանրային քննարկումներ..... Error! Bookmark not defined.
Գնահատման հաշվետվության կազմման իրավական հիմքերը.....81

1. Հավելվածներ

Հավելված 1. Համայնքի կողմից տրված Ճարտարապետա-հատակագծային առաջադրանքը:

Հավելված 2. Տարածքի հատակագիծը՝ WGS կոորդինատներով:

Հավելված 3. Ամասիա համայնքի Էլ. ցանցի համաձայնությունը:

Հավելված 4. «Գազպրոմ Արմենիա»ՓԲԸ-ի համաձայնությունը

Հավելված 5. Համայնքի ավագանու որոշումը գործունեության վերաբերյալ:

Հավելված 6. Հանրային քննարկման արձանագրություն, մասնակիցների ցանկ:

Հավելված 7. Պետական տուրքի անդորրագիրը:

2. Տեղեկատվություն ՇՄԱԳ փորձաքննական գործընթացի վերաբերյալ.

Հայաստանում Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումն իրականացվում է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ- 110-Ն Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին (Փոփոխությունները 2023թ)Օրենքի(այսուհետ՝ Օրենք) համաձայն: Գործունեություն, որը կարող է ունենալ ազդեցություն շրջակա միջավայրի վրա, մինչև իրականացումը ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) և փորձաքննության:

Համաձայն Օրենքի, գործունեությունները դասակարգվում են 2 կատեգորիաների՝ Ա և Բ: Ներկայացվող նախատեսվող գործունեությունը համաձայն՝ ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության համաձայն՝ Օրենքի 12-րդ հոդվածի 6-րդ մասի՝ «Փորձաքննության ենթակա են նաև սույն հոդվածի 3-րդ և 4-րդ մասերում չթվարկված՝ Կառավարության հաստատած գործունեության տեսակները, որոնք իրականացվելու են բնության հատուկ պահպանվող տարածքներում կամ անտառային հողերում կամ բնակավայրերի կանաչ գոտիներում կամ պատմամշակութային հուշարձանների սահմաններում կամ բնապահպանական հողերում, և որոնք ներառված չեն պետական փորձաքննական դրական եզրակացություն ստացած հիմնադրույթային փաստաթղթերում: Այս դեպքում փորձաքննությունն իրականացվում է Բ կատեգորիայի ընթացակարգով»: Նախատեսվող գործունեությունն իրականացվում է««Արփի լիճ»Ազգային Պարկ»ՊՈԱԿ-ի տարածքում, ուստի ՇՄԱԳ հաշվետվությունը ներկայացվում է Բ կատեգորիայով:

ՇՄԱԳ հաշվետվությունը կազմվել է Օրենքի 15-րդ հոդվածի Բ կատեգորիայի նախատեսվող գործունեության ՇՄԱԳ հաշվետվությանը ներկայացվող պահանջներին համապատասխան, որը ներառում է.

1) նախաձեռնողի անունը (անվանումը) և բնակության (գտնվելու) վայրը.

2) նախատեսվող գործունեության անվանումը՝ սույն օրենքի 12-րդ հոդվածին համապատասխան.

3) նախագծային փաստաթղթով նախատեսվող գործունեության տարածքի, այդ թվում՝ շրջակա միջավայրի, բնական պայմանների, ռեսուրսների նկարագիրը, ինչպես նաև դրանց օգտագործման նպատակը, ենթակառուցվածքները, ազդակիր համայնքը և դրանց տեղադիրքն արտացոլող իրավասու մարմնի տրամադրած տարածական պլանավորման փաստաթղթերը, իրադրության սխեման կամ քարտեզը՝ Հայաստանի Հանրապետությունում գործող միասնական գեոդեզիական կոորդինատային համակարգով.

4) նախագծային փաստաթղթով նախատեսվող գործունեության բնութագիրը շինարարության, շահագործման, փակման և հետփակման փուլերում (արտադրական հզորություններ, օգտագործվող բնական ռեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ).

5) շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները շինարարության, շահագործման և փակման փուլերում.

6) մարդու առողջության վրա հնարավոր ազդեցությունները, գործոնները, ռիսկերը.

7) նախագծային փաստաթղթով նախատեսված բնապահպանական կառավարման պլանը.

8) հաստատված հիմնադրույթային փաստաթղթերին նախագծային փաստաթղթով նախատեսվող գործունեության համապատասխանության հիմնավորումները.

9) նախագծային փաստաթղթով նախատեսվող գործունեության ազդեցության մշտադիտարկման ծրագիրը:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նպատակն է բացահայտել նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները, նախատեսել համապատասխան միջոցառումներ՝ հնարավոր բացասական ազդեցությունները նվազագույնի հասցնելուն կամ բացառելուն ուղղված:

3. Նախաձեռնողի անվանումը, գտնվելու վայրը, գնահատման հաշվետվության (ՇՄԱԳ) մշակման հիմքերը, նպատակը.

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Շիրակի մարզի Ամասիա համայնքի ՝ Բերդաշեն և Արդենիս բնակավայրերի տարածքում, 08-028-0105-0002 հասցեում՝ «Արփի լիճ»ԱՊ ՊՈԱԿ-ի նախաձեռնությամբ: Գործունեությունն իրականացվելու է ՀՀ Շիրակի մարզի Ամասիա համայնքի «Արփի լիճ»Ազգային Պարկ»ՊՈԱԿ-ի տարածքում՝ 0.07704հա մակերեսով տարածքի վրա:

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է հողամասի կառուցապատման իրավունքով՝ «Արփի լիճ»ԱՊ ՊՈԱԿ-ի կողմից: Գործունեությունն իրականացվելու է ազգային պարկի ռեկրացիոն գոտում:

Նախատեսվող գործունեության կառուցման նախագծի շրջակա միջավայրի վրա ադեցության գնատաման հաշվետվությունը մշակված է հիմք ընդունելով.

- Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ անհատույց օգտագործում «ԱՐՓԻ-ԼԻՃ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿ» ՊՈԱԿ՝ N 16112022-08-0033
- Ամասիա համայնքապետարանի կողմից տրված նախագծման թույլտվությունը N ՆԹ-4839-26, տրված 20.04.2026թ.
- Կառուցապատման նախագծային փաստաթուղթը:
- Համապատասխան համաձայնությունները և թույլտվությունները:

Կառուցման նախագիծն իրականացվում է՝ համաձայն Պատվիրատուի առաջադրանքի և համապատասխանում է ՀՀ գործող նորմերին և տեխնիկական կանոնակարգի պահանջներին:

Նախատեսվող գործունեության նպատակը. նախատեսվում է «Արփի լիճ»Ազգային Պարկ»ՊՈԱԿ-ի տարածքում, մասնակիորեն լճի վրա, կառուցել հետիոտնային էստակադա և նավամատույց՝ «Արփի լիճ» ազգային պարկի տարածքում տուրիզմի զարգացման և տուրիզմի համար բարենպաստ պայմանների ստեղծման, բնակչության հանգստի և տարածքում զբոսաշրջության խրախուսման համար:

Այս նախաձեռնության համար հիմք է ծառայել 2024թ.հոկտեմբերի 18-ի ՀՀ վարչապետի հանձնարարականը՝ /ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N Վ/142-2024, կետ 6/, որով Ամասիա համայնքի Բերդաշեն բնակավայրում զբոսաշրջությունը զարգացնելու և Արփի լճի գրավչությունը բարձրացնելու նպատակով պետք է ապահովել՝ «նավավարության ծառայություններ ձեռք բերելու ու Արփի լճում նավավարության նպատակով զբոսաշրջիկներին նավակներ

հատկացնելու հնարավորության հարցը և արդյունքների վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն ներկայացնել Վարչապետի աշխատակազմ»:
Ներկայացվող նախատեսվող գործունեությունը չի առաջացնում ԱՊ-ի ռեժիմի խախտումներ, որը կարող է սպառնալ պարկի էկոհամակարգերի կայունությանը, բուսական և կենդանական աշխարհի ներկայացուցիչների, գիտական կամ պատմամշակութային արժեք ունեցող օբյեկտների պահպանությանը:

4. Նախատեսվող գործունեության ենթակա տարածքի և շրջակա միջավայրի նկարագիրը.

4.1 Ենթակա տարածք.Նախատեսվող գործունեության ենթակա տարածքը գտնվում է ՀՀ Շիրակի մարզի Ամասիա համայնքի Բերդաշեն բնակավայրի՝ «Արփի լիճ» ԱՊ-ի տարածքը: Գործունեությունն իրականացվելու է ցամաքային և լճային տարածքներում: ԱՊ-ի տարածքը մասնակի կառուցապատված է: Ազգային պարկի տարածքի կենտրոնական մասում, Լճի պատվարից դեպի արևելք, Պաղակն համայնքի վարչական սահմաններում գտնվում են «Արփի լիճ»ՊՈԱԿ-ին պատկանող շենք և շինություններ: Տարածք մոտենալու համար առկա է գրունտային ճանապարհ: Պարկն ունի 3 պաշտոնական մուտքեր, որոնցից 2 գտնվում են արևմտյան տեղամասում և 1-ը արևելյանում: Արփի լճի ափին մուտքը գտնվում է Պաղակն գյուղից դեպի արևմուտք: Երկրորդ մուտքը գտնվում է Շաղիկ գյուղի մոտ և օգտագործվում է հիմնականում սահմանապահ անձնակազմի կողմից՝ որպես սահմանամերձ գոտու հարավային մասի հիմնական մուտք: Երրորդ դարպասը տեղադրված է Սիզավետ գյուղից դեպի արևելք:


Նավամատույցի կառուցման սկզբնական կոորդինատներ են.

X - 31^0 4 ′ 1.387* 41° 3′ 59,7 ″

Y - $43^0$39′ 1.387* 43 ° 39 ′ 10.01″

Z -2051 , 2034

Քարտեզ 5 «Արփի լիճ» ազգային պարկի ենթակառուցվածքը



Լճի անմիջական շրջակայքը, այդ թվում նաև նախատեսվող գործունեության առափնյա հատվածը բնութագրվում է հարթ կամ մեղմ ալիքավոր տեղանքով, ունի ոչ մեծ թեքություն: Նավամատույցի սկզբնական բացարձակ նիշը 2051.0մ է: Տեղանքն ունի բաց, քամահարվող և գրեթե անտառազուրկ լանդշաֆտ: Նախատեսվող գործունեությունը իրականացվելու է Արփի լիճ – ջրամբարի պատվարից մոտ 100 մետր հեռավորության հատվածում: Տվյալ տեղանքում ծառեր և թփեր առկա չեն, տարածքը խոտածածկ է: ԱՊ-ի տարածքում առկա են ենթակառուցվածքներ՝ ջրամատակարարման, ջրահեռացման, էլեկտրամատակարարման, գազամատակարարման ինժեներական համակարգերով: Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում ենթակառուցվածքների փոփոխություններ չեն կատարվելու, նոր ճանապարհներ չեն կառուցվելու: Գործունեության ենթակա տարածք հնարավոր է մոտենալ գոյություն ունեցող գրունտային ճանապարհով:

Գործունեությունն իրականացնելու համար «Արփի լիճ» ԱՊ ՊՈԱԿ-ը դիմել է «Գազպրոմ Արմենիա»ՓԲԸ-ի Շիրակի ԳԳՄ-ին և Ամասիա համայնքի էլ. ցանցին, ստացել համապատասխան գրություններ, որով չեն առարկում գործունեության իրականացմանը:



Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Ռ-67 հանրապետական ճանապարհից՝ 821մ, մոտակա բնակավայրից 138մ, Ախուրյան գետից՝ 131մ հեռավորության վրա:

Գործունեության ենթակա և հարակից տարածքում ՀՀ Կարմիր գրքերում ներառված բուսական և կենդանական տեսակները բացակայում են, քանի որ տարածքն արդեն ենթարկվել է մարդածին ազդեցությանը, գտնվում ակտիվ զբոսաշրջության գոտում: Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում ծառեր չեն հատվելու: Բուն գործունեության տարածքը չի առնչվում պատմամշակութային, ինչպես նաև բնության հուշարձանների հետ:

4.2. Շրջակա միջավայրի և «Արփի լիճ» ազգային պարկի համառոտ նկարագիրը.


Մարզի աշխարհագրական դիրքը, ռելիեֆը. Երկրաբանությունը. Ֆիզիկաաշխարհագրական տեսակետից մարզի տարածքը Շիրակի լեռներով բաժանված է երկու մասի՝ հարավում՝ Ախուրյանի միջին հոսանքի շրջանում գտնվում է Շիրակի դաշտը, իսկ հյուսիսում՝ Ախուրյանի վերին հոսանքի շրջանում՝ Աշոցքի համեմատաբար բարձրադիր սարահարթն է: Շիրակի մարզում հյուսիսից հարավ առանձնացվում են Աշոցքի սարահարթը, Շիրակի գոգավորությունը և Արագածի հյուսիս-արևմտյան լեռնալանջերը: Աշոցքի շրջանը գտնվում է բարձրադիր սարահարթի վրա, բարձրությունը տատանվում է 1500-3042 մ

սահմաններում: Երկրաբանական կառուցվածքի տեսակետից Շիրակի մարզն ունի համեմատաբար երիտասարդ հասակ և միատարր հրաբխային կազմություն: Սարահարթի երկրաբանական կառուցվածքում առկա են միոցենի, վերին պլիոցենի և պլեյստոցենի դարաշրջանների հրաբխային ապարներ: Սարահարթի ռելիեֆը հարթ է և թույլ ալիքավոր: Սարահարթը բաղկացած է փոքր բլրաթմբերով միմյանցից առանձնացող մի շարք գոգավորություններից: Բլրաթմբերը մեծ մասամբ անդեզիտաբազալտային լավային հոսքերի առաջացրած պատվարներ են, որոնք առանձին դեպքերում փակելով գետակների ընթացքը ձևավորել են փոքր լճակներ: Աշոցքի սարահարթի հյուսիս-արևելքում՝ միջօրեականի ուղղությամբ, տարածվում է Ջավախքի լեռնաշղթայի հարավային մասը, հարավ-արևելքում՝ Բազումի լեռնաշղթայի ճյուղավորումներն են, որոնք Ջավախքի լեռնաշղթայից բաժանվում են Քարախաչի (2273 մ) լեռնանցքով, արևմտյան մասում՝ Եղնախաղի լեռնաշղթան է, հյուսիսում՝ Ջարիշատի, իսկ հարավում՝ Շիրակի լեռները: Մարզի սահմանում է գտնվում Արագածի հյուսիսային, հյուսիս-արևմտյան և մասամբ արևմտյան լանջերը, ընդհուպ մինչև գագաթը: Շիրակի լեռնաշղթան տարածվում է Ախուրյան գետի հովտից մինչև Փամբակ գետի վտակ Չիչկան գետի հովիտ (36 կմ), որի առավելագույն բարձրությունը Ցուլասար գագաթն է՝ 2556 մ: Շիրակի լեռնաշղթայի հարավային լանջերը զառիթափ են և խիստ քայքայված, իսկ հյուսիսային լանջերը փոքրաթեք են և թույլ քայքայված:

Շիրակի դաշտն ունի 1500-1600 մ բացարձակ բարձրություն, և սահմանակցում է արևելքում՝ Փամբակի, հյուսիսում՝ Շիրակի լեռնաշղթաներին, հարավում և հարավ-արևելքում՝ Արագածի լեռնազանգվածին ու Շարայի լեռանը, իսկ արևմուտքում՝ Կարսի սարահարթին: Մարզի զգալի տարածություններ ծածկված են տուֆային լավաներով:

Տարածաշրջանի լճերն/ Արդենիս, Արփի/ ունեն հրաբխային ծագում:

Սեյսմիկա և երկրաբանություն. Համաձայն ՀՀՇՆ 20.04-2020 «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր» շինարարական նորմերում ներդրված 1:500000 մասշտաբի ՀՀ տարածքի սեյսմիկ գոտիների քարտեզի և դրան կից հաստատված ցանկի՝ Գյումրի քաղաքի և Ամասիայի տարածքը գտնվում է սեյսմիկ 2-րդ գոտում, արագացման առավելագույն մեծությունը՝ Amax=0,4g:



Կլիման և օդային ավազանի իրավիճակը: Շիրակի մարզի կլիման, ընդհանուր առմամբ, բարեխառն է, սակայն աչքի է ընկնում ցամաքայնությամբ և ըստ բարձրության դառնում ավելի խիստ: Մարզի տարածքի հարավային և հյուսիսային մասերի միջև կլիմայական մեծ տարբերություններ կան: Ձմեռը ցուրտ է և ձյունառատ, սառնամանիքներով: Մարզի լեռների բարձրադիր վայրերը տարվա մեծ մասը ծածկված են ձյունով: Վերընթաց գոտիականության շնորհիվ Շիրակի մարզում ձևավորվում են հետևյալ կլիմայական տիպերը.

- Բարեխառն, համեմատաբար տաք ամառով և չափավոր ցուրտ ձմեռով
- Բարեխառն՝ մեղմ ամառներով և ցուրտ ձմեռներով կլիմայի տիպը բնորոշ է Շիրակի դաշտին և Արագածի հյուսիսարևմտյան լանջերին՝ մինչև 1800 մ բարձրությունները:
- Բարեխառն՝ մեղմ ամառներով և ցուրտ ձմեռներով կլիմայի տիպը բնորոշ է Շիրակի դաշտին և Արագածի հյուսիսարևմտյան լանջերին՝ մինչև 1800 մ բարձրությունները:
- Չափավոր ցուրտ, կարճատև զով ամառներով և ցուրտ ձմեռներով կլիմայի տիպը հատուկ է մարզի հյուսիսային շրջաններին և Արագածի արևմտյան լանջերին:
- Բարձրալեռնային ցուրտ կլիման ձևավորվում է մարզի հյուսիսային շրջանների և Արագածի լեռնազանգվածի 2400-3000 մ բարձրություններից վեր:

Գործունեության ենթակա տարածքի կլիմայական բնութագրի համար հիմք է ծառայել ՀՀ քաղաքաշինության նախարարության ՀՀՇՆ 22-01-2024 «Շինարարական կլիմայաբանություն» նորմատիվային փաստաթուղթը՝ Ամասիա օդերևութաբանական կայանի դիտարկումները և համապատասխան կլիմայական ցուցանիշները: Ամասիայում

ձմռան տևողությունը կազմում է 129 օր: Տեղումների տարեկան քանակը կազմում է 663մմ, միջին տարեկան հարաբերական խոնավությունը՝ 75%, գրունտի սառչման առավելագույն խորությունը կազմում է 104սմ:

Օդի միջին ջերմաստիճանը, ^{0}C

Աղյուսակ 1

ՕԴԻ ՄԻՋԻՆ ԵՎ ԷՔՍՏՐԵՄԱԼ ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆԸ,

ՁՄՌԱՆ ՍԿԻԶԲԸ, ՎԵՐՋԸ ԵՎ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Աղյուսակ 1 **Օդի միջին ջերմաստիճան**

Բնակավայրի անվանումը	Միջին ջերմաստիճանն ըստ ամիսների, ˚C												Միջին տարեկան, ˚C	Բացարձակ նվազագույն, ˚C	Բացարձակ առավելագույն, ˚C
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
1. Ամասիա	-8.6	-7.3	-2.8	4.0	9.2	13.0	16.4	16.7	12.8	7.0	0.5	-5.7	4.6	-31.1	34.6

Օդի հարաբերական խոնավությունը (%)

Աղյուսակ 2

ՕԴԻ ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԽՈՆԱՎՈՒԹՅՈՒՆԸ

Աղյուսակ 10 **Օդի հարաբերական խոնավությունը**

Բնակավայրի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %																
	ըստ ամիսների												Միջին տարեկան	Ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %		Ամենատաք ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %	
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր		Միջին ամսական	Միջին ամսական, ժամը 15-ին	Միջին ամսական	Միջին ամսական, ժամը 15-ին
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18
1. Ամասիա	82	81	78	74	72	71	69	66	67	72	79	82	75	82	76	66	55

Մթնոլորտային տեղումները

ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՏԵՂՈՒՄՆԵՐԸ

Աղյուսակ 12 **Մթնոլորտային տեղումները**

Բնակավայրի անվանումը	Տեղումների քանակը միջին ամսական / օրական առավելագույն, մմ													Տեղումների քանակը նոյեմբեր-մարտ ամիսներին, մմ	Տեղումների քանակը ապրիլ-հոկտեմբեր ամիսներին, մմ
	ըստ ամիսների												Տարեկան		
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
1. Ամասիա	42	42	46	74	110	87	53	44	33	49	40	43	663	213	450
	33	49	34	42	49	62	41	38	31	38	51	51	62		


Քամի

Աղյուսակ 15 **Քամի** (արդիականացման ենթակա)

Բնակավայրի անվանումը	Ամիսներ	Կրկնելիությունը, % Միջին արագությունը, մ/վ ըստ ուղղությունների								Անդորրի կրկնելիությունը, %	Միջին արագությունը, մ/վ	Գերակշռող ուղղությունը - ռոզայի ուղղություններ	Միջին արագությունները ցրտահովիկային շրջանում, մ/վ	Առավելագույն միջին արագությունը վերջին տասնամյակում, մ/վ	Միջին արագությունը ցրտահովիկային շրջանում, մ/վ
		Հյուսիսային	Հյուսիս-արևելյան	Արևելյան	Հարավ-արևելյան	Հարավային	Հարավ-արևմտյան	Արևմտյան	Հյուսիս-արևմտյան						
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
1. Ամասիա	հունվար	-	-	-	-	-	-	-	-	71	1.3	Արլ	3.4	Հս	3.1
		3.1	2.7	3.0	1.9	1.9	3.0	2.7	1.9						
	ապրիլ	37	7	12	3	18	4	13	6	46	2.3				
		3.4	3.4	3.5	2.6	2.3	2.1	2.7	2.0						
	հուլիս	42	21	24	1	4	1	4	3	28	3.6				
		3.5	3.8	3.4	3.0	1.9	2.6	2.3	2.1						
	հոկտեմբեր	38	6	16	2	20	4	10	4	61	1.6				
		3.1	3.1	3.6	3.0	1.8	2.5	2.4	1.9						

Активация Windows
Чтобы активировать Windows, перейдите в разде

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՇՐՋԱՆԱՑՈՒՄԸ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ



Օդային ավազան. Մթնոլորտային օդի աղտոտման հիմնական աղբյուրներ են հանդիսանում տրանսպորտը, արդյունաբերությունը, էներգետիկան, քաղաքաշինությունը: Փոշով աղտոտվածություն կարող է առաջանալ տրանսպորտային միջոցների, ճանապարհային փոշու, շինարարության, գյուղատնտեսական և այլ գործողությունների հետևանքով: Ծծմբի երկօքսիդը մթնոլորտային օդում առաջանում է ծծումբ պարունակող վառելիքների այրման, ինչպես նաև արդյունաբերական այլ գործընթացների ժամանակ:

Մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի առաջացման գլխավոր աղբյուրն ավտոտրանսպորտն է:

Հայաստանի հանրապետության տարածքում օդային ավազանի աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից:

Մթնոլորտային օդի որակի գնահատումը կատարվում է ՀՀ կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի N 160-Ն որոշմամբ հաստատված աղտոտիչների սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների (ՍԹԿ) հետ համեմատությամբ:

Համաձայն «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի **«Վնասակար նյութերի ֆոնային կոնցենտրացիաներ բնակավայրերում, որտեղ բացակայում են մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտարկումներ»-ի** բնակավայրերի մթնոլորտային օդն աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաների (հնգամյա միջին) մինչև 10 000 բնակիչ ունեցող բնակավայրերի համար, որոնց մեջ մտնում է

Ամասիա համայնքի Արդենիս բնակավայրը /185 մարդ/, օդային ավազան աղտոտող նյութերի միջին հնգամյա ֆոնային կոնցենտրացիաները սահմանվել են.

- Փոշի՝ 0.071 մգ/մ^3
- Ծծմբի երկօքսիդ **(SO_2)**՝ 0,006 մգ/մ^3
- Ազոտի երկօքսիդ **(NO_2)**՝ 0,023մգ/մ^3
- Ածխածնի օքսիդ **(CO)**՝ 0.8 մգ/մ^3

Հողային *ռեսուրսներ*. հողածածկույթի ձևավորման վրա մեծ ազդեցություն են ունեցել ռելիեֆն ու մայրական ապարները: Հողերի բնութագիրը փոխվում է՝ կախված վերընթաց գոտիականությունից: Լեռնային սևահողային գոտին, տարածվում է ծովի մակերևույթից 1500-2200 մ բարձրությունների վրա, ունի միջին և ավելի մեծ կլանունակություն, ծանր մեխանիկական կազմ, 36-85 սմ հզորություն: Լեռնային սևահողերի ենթատիպերից են կարբոնատային, թույլ կարբոնատային և տարալվացված հողերը: Լեռնամարգագետնային հողերը հիմնականում տարածված են Ջավախքի, Փամբակի, Արագածի լեռնալանջերի վրա, ծովի մակերևույթից 2200 մ և ավելի բարձրությունների վրա: Տվյալ հողատիպի սահմաններում առանձնացվել են դարչնագույն, ճմատորֆային, մարգագետնային ենթատիպեր, որոնք նկատելի են Արփի լճի մերձակայքում: Արագածի ցածրադիր լանջերին տարածված են լեռնաշագանակագույն հողերը: Շիրակի մարզը եզերող լեռնաշղթաների մերձգագաթային մասերում: 3200-3300 մ-ից բարձր գտնվող տարածությունների վրա, խիստ կլիմայով պայմանավորված հողածածկույթ չի ձևավորվում:



Մարդու գործունեության հետևանքով առաջանում է հողային ծածկույթի աղտոտում ծանր մետաղներով (պղինձ, ցինկ, արսեն, կապար, մոլիբդեն, մանգան, նիկել, կադմիում, քրոմ և այլն) և ցիանական միացություններով: Հողերի որակի գնահատումն իրականացվում է ՀՀ

Առողջապահության նախարարի 2010 թվականի հունվարի 25-ի N 01-Ն հրամանի և ՀՀ Առողջապահության նախարարի 2015թ. հունիսի 16-ի «ՀՀ Առողջապահության նախարարի 2010 թվականի հունվարի 25-ի N 01-Ն հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 25-Ն հրամանի համաձայն:

Համաձայն Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի 2025թ. և 2026թ. տեղեկագրերում Շիրակի մարզի Ամասիա համայնքի բնակավայրերի ծանր մետաղներով հողային ծածկույթի աղտոտվածության ուսումնասիրման դիտարկումները բացակայում են:

Նախատեսվող գործունեությունն իրականացվում է «Ափի լիճ»ԱՊ-ի տարածքում,լճի ամբարտակից 100մ հեռավորության վրա, որտեղ հիմնակում առկա է մարդկային ազդեցությունը: Գործունեությունն իր բնույթով չի պարունակում մարդու կողմից վտանգավոր գործողությունների իրականացում, ուստի գործունեության իրականացումը հողային ծածկույթի աղտոտվածության տեսակետից ոչ մի տիսկեր չի պարունակում:

Ջրային ռեսուրսներ. Ռելիեֆի, կլիմայի և ջրաերկրաբանական կառուցվածքի առանձնահատկությունների շնորհիվ Շիրակի մարզն ունի համեմատաբար թույլ զարգացած ջրագրական ցանց: Մարզի գետային ցանցը գրեթե ամբողջությամբ պատկանում է Արաքս գետի ավազանին: Շիրակի սարահարթի առանձին տեղամասերը ներկայացված են բազալտային լավաներով, որոնց ճեղքերով Ախուրյան գետը առաջացրել է մինչև 130 մ խորությամբ կիրճ: Աշոցքի սարահարթում է գտնվում Արփի լիճ-ջրամբարը**:** Շիրակի մարզի խոշոր գետը Ախուրյանն է: Այն հանդիսանում է Արաքսի ձախակողմյան վտակը, որը սկիզբ է առնում Արփի լճից՝ 2017 մ բարձրությունից: Գետի ակունքում կառուցվել է ամբարտակ՝ Ախուրյանի ջրամբարը, որն իր ծավալով խոշորագույնն է: Վերին հոսանքում հոսում է ՀՀ տարածքով, միջին և ստորին հոսանքներում սահմանային գետ է Հայաստանի հանրապետության և Թուրքիայի միջև: Գետի ավազանը 9700 կմ^2, ընդհանուր երկարությունը երկարությունը 186 կմ , որից Շիրակի մարզում մոտ՝ 105 կմ է: Գետի սնումը խառն է, գերակշռում է ստորերկրյան (59%) սնումը: Գետի վարարում է լինում է գարնանը: Ախուրյանի վտակներից են՝ Կարախանը, Կումայրին, Կարկաչանը, Աշոցքը, Ջաջուռը, Մանթաշը, Գեղաձորը, որոնք ամռանը գրեթե ցամաքում են: Առավել սելավաբեր են Կումայրի, Հացիկ, Ջաջուռ, Մուսայելյան, Կամո, Հովիտ վտակները, որոնք որպես սելավներ գործում են հատկապես ամառային հորդառատ անձրևների պատճառով: Սելավաբեր է նաև Կարկաչան գետի Արթիկջուր վտակը:

Աշոցք գետը սկիզբ է առնում Ջավախքի լեռնաշղթայի Քարախաչի լեռնանցքի մոտա-կայքից՝ 2350 մ բարձրությունից: Գետի երկարությունը 20 կմ է, ջրհավաք ավազանը՝ 197 կմ2: Գետահովիտը վերին հոսանքում կիրճանման է, տեղ-տեղ՝ ճահճապատ, ստորինում հոսանքում առաջացնում է բազմաթիվ գալարներ: Գետի սնումը հիմնականում ստորերկրյա (85 %) և հալոցքային (14%) է, վարարումը լինում է մայիս-հունիսին ամիսներին:

Ջրային ռեսուրսների աղտոտման հիմնական աղբյուրներ են հանդիսանում կոմունալ-կենցաղային, սննդի արդյունաբերության, հանքարդյունաբերության և գյուղատնտեսության կեղտաջրերը: Ջրային ռեսուրսների որակի գնահատումն իրականացվում է ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N75-Ն որոշման համաձայն, գնահատվելով «միջակից» «վատ» է (3-5րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում, ֆոսֆատ և նիտրիտ իոններով:

Հայաստանի հանրապետությունում ջրային ռեսուրսների մոնիթորինգն իրականացվում է շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և

մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից՝ դիտացանցերի միջոցով: Կազմակերպության 2025թ. 3-րդ եռամսյակի տեղեկագրի համաձայն՝ Ախուրյանի ՋԿՏ-ում մակերևութային հիդրոլոգիական դիտարկումներն իրականացվում են 11 դիտակետում. այդ թվում՝ 9 գետային և 2 ջրամբարային: Ախուրյան գետի ջրի որակը Ամասյա գյուղից վերև հատվածում սեպտեմբերին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), Ամասյա գյուղից ներքև և Գյումրի քաղաքից ներքև հատվածներում՝ հուլիսին և սեպտեմբերին՝ «վատ» (5-րդ դաս), Գյումրի քաղաքից վերև հատվածում՝ հուլիսին և սեպտեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս), Բագարան գյուղից ներքև հատվածում ջրի որակը հուլիսին և սեպտեմբերին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս): Աշոցք գետի ջրի որակը Մուսայելյան գյուղից վերև հատվածում հուլիսին և սեպտեմբերին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), գետաբերանի հատվածում՝ հուլիսին՝ «վատ» (5-րդ դաս), սեպտեմբերին՝ «միջակ» (3-րդ դաս): Կարկաչուն գետի ջրի որակը հուլիսին և սեպտեմբերին գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Լանդշաֆտ. Կենսաբազմազանություն. Շիրակի մարզի բնական լանդշաֆտները միատարր են, գրեթե բացակայում են բնական անտառները: Լեռնալանջերի ձորակների ստվերոտ հատվածներում շատ փոքր կղզյակներով հանդիպում են կաղամախու ծառուտներ, որոնցից Ամասիա գյուղից 3 կմ դեպի արևմուտք հանդիպոում է ՀՀ կառավարության կողմից բնության հուշարձանների ցանկում հաստատված «Դողդոջուն կաղամախու ծառուտները, որպես կենսաբանական հուշարձան: Համաձայն բնության հուշարձանների հաստատված ցանկի՝ մեկ այլ կենսաբանական հուշարձան՝ «Փետրախոտային տափաստան» անվանումով, տարածվում է Ամասիա գյուղից 3 կմ հյուսիս-արևմուտք:

Մարզում տիրապետողը լեռնային տափաստաններն են՝ հումուսով հարուստ սևահողերով և խոտային բուսականությամբ: Բարձրադիր գոտում ընդարձակ տարածություններ են զբաղեցնում մերձալպյան ու ալպյան մարգագետինները: Լեռնային տափաստանները տարածվում են Շիրակի դաշտում և Աշոցքի սարահարթում: Ալպյան լանդշաֆտները տարածվում են լեռնալանջերում և սարավանդներում՝ Եղնախաղի և Ջավախքի լեռնավահանների լանջերին մինչև 2700-2800 մ բարձրությունները տարածված են ստորին ալպյան, իսկ ավելի բարձր՝ ալպյան մարգագետինները:



Բուսականություն. Շիրակի մարզն աչքի է ընկնում հարուստ բուսական աշխարհով՝ պայմանավորված բնական պայմանների առանձնահատկություններով: Մարզում, ըստ վերընթաց գոտիականության իրար են հաջորդում բուսականության հետևյալ տիպերը.

- Լեռնատափաստանային բուսականությունը, որը ձևավորվում է 2300-2400 մ բարձրությունների վրա, տարածված են տարատեսակ խոտաբույսեր՝ փետրախոտը, սեզը, շյուղախոտը, կծմախոտը, թիթեռնածաղիկը, լոբազգիները, ինչպես նաև օշինդրը, դաշտավլուկը, անթառամը և այլն: Փետրախոտային տափաստաններից ավելի բարձր՝ տափաստանային բուսականության մի առանձին տիպ են կազմում հացազգատարախոտային բույսերը, որոնք հաճախ կոչվում են տարախոտային տափաստաններ:
- Մարգագետնատափաստանային բուսականությունը տարածված է 2300 մ-ից վեր/ալպյան և մերձալպյան ենթագոտիներ/, համեմատաբար խոնավ վայրերում, ունի փարթամ խոտային ծածկ, տարածված են ցորենազգիները, լոբազգիները և տարախոտերի այլ տեսակներ՝ ցորնուկ, դաշտավլուկ, ինչպես նաև երեքնուկ, խատուտիկ, մեխակ և այլն:

Կենդանական աշխարհ. Կենդանական աշխարհը բազմազան է, հանդիպում են նապաստակը, գայլը, աղվեսը, խայտաքիսը, կզաքիսը, աքիսը և այլն: Կրծողներից տարածված է դաշտամուկը, ճագարամուկը, գետնասկյուռը, փոքրասիական համստերը, կույր մուկը, թռչուններից՝ արծիվ, գառնանգղ, եղջերավոր արտույտ, լեռնային հնդկահավ, ճնճղուկ, կաքավը, արտույտը,

սոխակը, ծիծեռնակը, կաչաղակը, ագռավը և այլն: Տարածված են միջատների և թիթեռների տարատեսակ տիպեր: Ջրամբարներում ու գետերում կան ձկների մի քանի տեսակներ՝ ծածանը, խրամուլը և այլն: Մարզում սողուններից հետաքրքրություն է ներկայացնում Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակում գրանցված Դարևսկու իժը:

Պատմամշակութային հուշարձաններ. Մարզում առկա են տարբեր ժամանակաշրջանների վանական համալիրներ, եկեղեցիներ, փոքրիկ մատուռներ, ամրոցներ, բնակատեղիներ, գյուղատեղիներ, հուշաղբյուրներ, հուշակոթողներ և այլ օբյեկտներ: Համաձայն ՀՀ կառավարության 2007թ. մարտի 15-ի «ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ՈՉ ԵՆԹԱԿԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 385-Ն որոշման՝ Ամասիա քաղաքի, Արդենիս բնակավայրի վարչական տարածքի համար սահմանվում է հուշարձանների հետևյալ ցանկը՝

Աղյուսակ 5.

7.10 ԱՄԱՍԻԱ գյուղ

1	2	3	4	5	6	7	8
1			ԱՄՐՈՑ	Ք.ա. 3-1 հազ.	գյուղից հս-ամ, Ախուրյան գետի աջ ափին, «Չատին դարա» վայրում	Հ	1
	1.1		Բնակատեղի	Ք.ա. 3-1 հազ.	ամրոցի մոտ	Հ	1.1
2			ԲՆԱԿԱՏԵՂԻ	Ք.ա. 2 հազ.	գյուղից ամ	Հ	2
3			ԳՅՈՒՂԱՏԵՂԻ	18-19 դդ.	գյուղից 5 կմ ամ, «Մամուխան» վայրում	S	3
4			ԳՅՈՒՂԱՏԵՂԻ «ՆՈՐԱԳՅՈՒՂ»	18-19 դդ.	գյուղից 2-3 կմ ամ	S	4
5			ՀՈՒՇԱՐՁԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏՈՒՄ ԶՈՀՎԱԾՆԵՐԻՆ	1967 թ.	գյուղից 500 մ հվ-ամ	S	5
6			ՔԱՐԱՅՐ - ԿԱՑԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԱԼԻՐ	13-14 դդ.	գյուղից 3 կմ հվ, Ախուրյանի ձորի աջ ափին	Հ	7

7.17 ԱՐԴԵՆԻՍ գյուղ

1	2	3	4	5	6	7	8
1			ԱՄՐՈՑ	Ք.ա. 1 հազ.- Ք.հ. 3 դ.	գյուղից 1 կմ ամ, բլրի գագաթին	Հ	1
	1.1		Դամբարանադաշտ	Ք.ա. 1 հազ.- Ք.հ. 3 դ.	ամրոցից հս	Հ	1.1
2			ԳՅՈՒՂԱՏԵՂԻ	18-20 դդ.	գյուղից 2.5 կմ ամ, «Խանչալի» վայրում	Տ	2

Բնության հուշարձաններ. Համաձայն ՀՀ կառավարության 2008 թվականի 14 օգոստոսի «Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N 967-Ն որոշմամբ սահմանվել է Շիրակի մարզում առկա են 16 բնության հուշարձաններ, որոնցից 2-ը՝ երկրաբանական, 8-ը՝ ջրաերկրաբանական, 4-ը՝ ջրագրական, 2-ը՝ կենսաբանական:

Աղյուսակ 7

Հ/հ	Անվանումը	*Տեղադիրքը*	*Դասակարգում*
1	«Ամասիայի» քարանձավ	Ամասիա գյուղից 1.5 կմ արլ., Ախուրյան գետի կիրճի աջ ափին, նրա հունից 80 մ բարձրության վրա, ծ.մ-ից 2000 մ բարձրության վրա	Երկրաբանական հուշարձան
2	«Կրիա» քարե բնական քանդակ	Երևան-Գյումրի խճուղու ձախ կողմում, Լանջիկ և Մարալիկ բնակավայրերի միջև	Երկրաբանական հուշարձան
3	«Ամասիայի աղբյուր N 1»	Ամասիա գյուղից 1.5 կմ հվ-արմ., Ախուրյան գետի կիրճի ձախ ափին, ծ.մ-ից 1735 մ բարձրության վրա	Ջրաերկրաբանական հուշարձան
4	«Ամասիայի աղբյուր N 2»	Ամասիա գյուղից 1.5 կմ հվ-արմ, Ախուրյան գետի կիրճի ձախ ափին, ծ.մ-ից 1750 մ բարձրության վրա	Ջրաերկրաբանական հուշարձան

Հ/հ	Անվանումը	*Տեղադիրքը*	*Դասակարգում*
5	«Ամասիայի աղբյուր N 3»	Ամասիա գյուղից 1.8 կմ հվ-արմ., Ախուրյան գետի կիրճի ձախ ափին, ծ.մ-ից 1745 մ բարձրության վրա	Ջրաերկրաբանական հուշարձան
6	«Գոմերի տակի աղբյուր»	Աշոցք գյուղի հվ-արլ. ծայրամասում, ծ.մ-ից 1980 մ բարձրության վրա	Ջրաերկրաբանական հուշարձան
7	«Աչքասար աղբյուր»	Բավրա գյուղից 5 կմ հս-արլ, ծ.մ-ից 2430 մ բարձրության վրա	Ջրաերկրաբանական հուշարձան
8	«Ջույգաղբյուր» աղբյուր	Ջույգաղբյուր գյուղից 200 մ արմ, Աշոցք գետակի աջ ափին, ծ.մ-ից 2015 մ բարձրության վրա	Ջրաերկրաբանական հուշարձան
9	«Լուսաղբյուր» աղբյուր	Հարթաշեն գյուղից 1.2 կմ արլ., Գյումրի-Տաշիր ավտոճանապարհից 150 մ ձախ, ծ.մ-ից 2030 մ բարձրության վրա	Ջրաերկրաբանական հուշարձան
10	«Անանուն» աղբյուր	Հարթաշեն գյուղի դպրոցից 1.8 կմ հս-արլ, ծ.մ-ից 2180 մ բարձրության վրա	Ջրաերկրաբանական հուշարձան
11	«Անանուն» լիճ	Արթիկի ենթաշրջան, Ախուրյանի ջրավազանում, ծ.մ-ից 3200 մ բարձրության վրա	Ջրագրական հուշարձան
12	«Թագավորական» լիճ	Մանթաշ գետի վերին հոսանքում, ծ.մ-ից 3050 մ բարձրության վրա	Ջրագրական հուշարձան
13	«Ամասիայի» ջրվեժ	Ախուրյան գետի աջակողմյան վտակի վրա, համանուն գյուղից արլ.	Ջրագրական հուշարձան

Հ/հ	Անվանումը	*Տեղադիրքը*	*Դասակարգում*
14	«Մանթաշի» ջրվեժներ	Մեծ Մանթաշ գյուղից 16 կմ հվ-արմ, համանուն գետի աջ վտակի վրա	Ջրագրական հուշարձան
15	«Դողդոջուն կաղամախու ծառուտներ»	Ամասիա գյուղից 3 կմ արմ., ծ.մ-ից 2300 մ բարձրության վրա	Կենսաբանական հուշարձան
16	«Փետրախոտային տափաստան»	Ամասիա գյուղից 3 կմ հս-արմ.	Կենսաբանական հուշարձան

Գործունեության տարածքը չի առնչվում վեր նշված պատմամշակութային և բնության հուշարձանների հետ:


«Արփի լիճ» ազգային պարկ, Արփի լիճ. «Արփի լիճ» ազգային պարկը ստեղծվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի ապրիլի 16-ի «Արփի լիճ» ազգային պարկ ստեղծելու, «Արփի լիճ» ազգային պարկի և «Արփի լիճ» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունները հաստատելու մասին» № 405-Ն որոշմամբ: «Արփի լիճ» ազգային պարկի պահպանությունն իրականացնում է «Արփի լիճ»ազգային պարկ» ՊՈԱԿ-ը: ԱՊ-ն ստեղծվել է Արփի, Արդենիս լճերի և Ախուրյան գետի վերին հոսանքի ձախակողմյան վտակների ավազանների, ինչպես նաև Ջավախքի լեռնաշղթայի հարավ-արևմտյան լեռնալանջերի ջրային ու ցամաքային էկոհամակարգերի տարածքներում լանդշաֆտային ու կենսաբանական բազմազանության, գենոֆոնդի, բնության ժառանգության պահպանության և դրանց գիտական ուսումնասիրության ապահովման նպատակով: Համաձայն ՀՀ կառավարության 2011 թվականի 21 հուլիսի ««ԱՐՓԻ ԼԻՃ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ, ՀԱՏԱԿԱԳԻԾԸ, ՏԱՐԱԾՔԻ ՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ»» N 1151-Ն որոշման, ինչպես նաև ՀՀ կառավարության 2017 թվականի հունվարի 19-ի N 36-Ն որոշմամբ ՝ Արփի լճի մակերեսը կազմում է 21039,3հա:

Համաձայն՝ «Արփի լիճ» ազգային պարկի կանոնադրության ազգային պարկը բաժանվում է հետևյալ երեք տարածագործառնական գոտիների՝

1) արգելոցային՝ 9919.3 հա
2) ռեկրեացիոն՝(452.2 հա)
3) տնտեսական՝(10807.6 հա):

Արգելոցային գոտին բնութագրվում է ամենախիստ բնապահպանական ռեժիմով՝ ազգային պարկի կարևոր էկոհամակարգերի պահպանության համար:

«ԱՐՓԻ ԼԻՃ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿ
ԳՈՏԵՎՈՐՄԱՆ ՍԽԵՄԱ




Արփի լիճը գտնվում է Շիրակի մարզում, ունի տեկտոնահրաբխային ծագում: Արփի լիճը ՀՀ-ում մեծությամբ երկրորդն է, գտնվում է 2023 մ բարձրության վրա: «Արփի լիճը գտնվում է «Արփի լիճ» ազգային պարկի արևմտյան մասում: Լճից սկիզբ է առնում Ախուրյան գետը: Լճի միջին խորությունը կազմում է 1.6 մ:
1951 թ-ին լիճն արհեստականորեն մեծացրել են՝ դարձնելով այն ջրամբար, որի ծավալը հասնում է 100մ³: Լիճն օղակող 30 մ լայնությամբ բուֆերային գոտին փակ է անասունների համար և սահմանակցում է «Արփի լիճ» ազգային պարկի պահպանման և տնտեսական գոտիների հետ:



Համաձայն ՀՀ կառավարության 22 դեկտեմբերի 2011 թվականի «ԱՐՓԻ ԼԻՃ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿԻ 2011-2015թթ. կառավարման պլանը հաստատելու մասին N

1854-Ա որոշման՝ «Արփի լիճ» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպության ենթակայության տակ է գտնվում «Արփի լիճ» ազգային պարկը իր հինգ տեղամասերով՝ Արևմտյան, Արևելյան, «Արդենիս», «Ալվար» /գտնվում է Ախուրյան գետի խոնավ տարածքներից դեպի հարավ), «Ախուրյանի կիրճ»: «Արփի լիճ» ազգային պարկի պահպանման գոտում ընգրկված են 19 համայնքների վարչական տարածքներ՝ Ամասիա, Աղվորիկ, Արդենիս, Ալվար, Արավետ, Բերդաշեն (Պաղակն), Ձորակերտ (Դարիկ), Ծաղկուտ (Լորասար), Գառնառիճ (Եղնաջուր), Ջառիշատ (Երիզակ), Բավրա, Ղազանչի, Փոքր Սեպասար, Մեծ Սեպասար, Սարագյուղ, Շաղիկ, Սիզավետ, Թավշուտ, Կրասար, որոնց ընդհանոր պահպանման գոտին ունի 35448.8 հա տարածք:



Կլիման. Աշոցքի սարահարթը բնորոշվում է խիստ, մեծամասամբ ցամաքային խիստ կլիմայով:

Հողեր. Հողերի կազմն ու կառուցվածքը կախված են բարձրությունից, լանջերից և այլ պայմաններից: Եղնախաղի և Ջավախքի լեռնաշղթաների ամենաբարձր գագաթները ծածկված են բարձրալեռնային մարգագետնային հողերով, որոնք նախալեռներում անցնում են մարգագետնային գորշ կիսաանապատային հողերի: Արփի լճի սարահարթը մեծամասամբ ծածկված է սևահողերով, իսկ ցածրավայրերում և Ախուրյան գետի հին հունում տարածված են մարգագետնաճահճային հողերը: Ախուրյանի կիրճի կողային լանջերը ծածկված են մայրական ապարներով:

Ջրագրություն. Լիճը գտնվում է Շիրակի մարզում, Ամասիայի և Աշոցքի տարածաշրջաններում, Եղնախաղի լեռնաշղթայի արևելյան և Ջավախքի լեռնաշղթայի հարավ-արևմտյան լանջերին: Աշոցքի սարահարթը համարվում է Հայաստանի կարևոր ջրհավաքներից և ջրամատակարարման շրջաններից մեկը, որտեղից Գյումրի քաղաքը և բազմաթիվ գյուղական համայնքները ստանում են խմելու ջուր, իսկ հոսանքն ի վար գտնվող մի շարք համայնքները, ներառյալ Արարատյան դաշտավայրը՝ նաև ոռոգման ջուր: Ազգային պարկի տարածքում առկա են տարբեր տիպի ջրային էկոհամակարգեր, որոնցից են

Արփի լճի հինգ բնական վտակները (Ձորակերտ, Ծաղկուտ, Գառնարիճ, Շաղիկ, Ղարաբուլաղ) և Բողորան չորացնող ջրանցքը, Արփի լիճը, Ախուրյան գետը, Արփի լճի ակունքը, Ախուրյան գետի երկու ձախ վտակները՝ Թավշուտը և Աշոցքը, Ախուրյան գետի նախկին ակունքի շրջակայքի ճահիճները և խոնավ մարգագետինները, Արդենիս գյուղի վերևում գտնվող գարնանային ճահճուտները և Արդենիս լճակը: Համաձայն ՀՀ կառավարության 22 դեկտեմբերի 2011 թվականի «ԱՐՓԻ ԼԻՃ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿԻ 2011-2015թթ. կառավարման պլանը հաստատելու մասին N 1854-Ա որոշման ՝ Արփի լճի ջրատարողությունը մինչև պատվարի կառուցումը կազմում էր 5 մլն մ^3, լճի միջին խորությունը 50-70 սմ-ից քիչ էր, իսկ հայելու ընդհանուր մակերեսը կազմում է մոտ 5 կմ2 էր: 1956 թվականին Արփի լիճը վերածվեց ջրամբարի: Արփի լճի մակերեսը մեծացել է մինչև 22.1 կմ2, ջրատարողությունը ավելացել է մինչև 90 մլն մ3, իսկ միջին խորությունը դարձել է 1-1.5 մ: Ձմռանը լիճն ամբողջությամբ սառցակալում է: Լճի ափին է գտնվում Պաղակն բնակավայրը, որտեղ գրանցվել է ՀՀ ամենացածր ջերմաստիճանը (-46):Ջրամբարի առավելագույն ջրատարողությունը կազմում է 110 մլն մ^3: Ջուրն առավելագույն մակարդակի է հասնում հունիս ամսին: Արփի լճի /ջրամբարի/ 6 վտակներից ամենախոշորը և գլխավորը ջրամբարի հյուսիս-արևմտյան մասում գտնվող Չիվի գետակն է, որը ապահովում է լճ ջրի ներհոսքի գրեթե 30%-ը:



Արդենիս լիճը (10 հա) ևս մեկ բնական լիճ է, որը գտնվում է Աշոցքի սարահարթում: Արդենիս լիճը համարվում է ջրլող թռչունների համար կենսական նշանակություն ունեցող ապրելավայր, իսկ ամառվա ժամանակ այս լճից գոյացող խոնավ տարածքներում բնադրվում է հազվագյուտ մոխրագույն կռունկը:Արևելյան տեղամասում գտնվող Աշոցք և Ղուկասյան գետերն իրենց վտակներով ունեն առավել մեծ ջրհավաք տարողություններ: Այս երկու գետերը միանում են Ախուրյանի կիրճից դեպի հյուսիս և ոռոգում են սարահարթը կիրճի միջով: «Արփի լիճ» ազգային պարկի պահպանման գոտու բոլոր համայնքներն իրենց խմելու ջուրն ստանում են «Արփի լիճ» ազգային պարկի սահմաններում գտնվող բնական աղբյուրներից:

Ռելիեֆ, Լանդշաֆտ, Կենսաբազմազանություն.Արփի լիճը գտնվում է Շիրակի մարզում՝ բարձրադիր Աշոցքի սարահարթում (Ջավախք-Շիրակ բարձրավանդակ), ծովի մակարդակից մոտ 2023–2025 մետր բարձրության վրա: Լճի արևելյան մասում բարձրանում է Արփի լեռը (2200 մ բարձրությամբ), իսկ ընդհանուր ազգային պարկի տարածքը ձգվում է մինչև 1500-3100 մ բարձրությունների վրա:Պարկն ունի բլրապատ, ալիքավոր մակերևույթ, ծածկված հրաբխային տուֆերով և լավաներով: Լիճը տեղադրված է տեկտոնահրաբխային ծագում ունեցող ընդարձակ գոգավորությունում, որը շրջապատված է հյուսիսից ու արևմուտքից՝ Եղնախաղի, իսկ հարավ-արևելքից՝ Ջավախքի լեռնաշղթաների լանջերով: Լճի անմիջական

շրջակայքը բնութագրվում է հարթ կամ մեղմ ալիքավոր տեղանքով, որտեղ տարածված են լայնարձակ, զգալիորեն ճահճացած մարգագետիններ և տորֆահանդակներ: Տեղանքն ունի բաց, քամահարվող և գրեթե անտառազուրկ լանդշաֆտ: Լճի բնական հատակը հարթ է, տղմոտ, հարուստ ստորջրյա բուսականությամբ: Այն չունի կտրուկ ժայռոտ անկումներ կամ խորշեր: Լճի գոգավորությունից է սկիզբ առնում Ախուրյան գետը:

Աշոցքի սարահարթը դեռ հոլոցենի դարաշրջանից զուրկ է եղել անտառային բուսականությունից: Կուսական լանդշաֆտները գտնվում են 2000 մ-ից բարձր բարձրություններում, որտեղ գերակշռում են լեռնային տափաստանները: Մեծ բարձրությունների պատճառով, Ջավախքի սարահարքում տարածված են անտառազուրկ լեռնային տափաստանները՝ 1500 մ-ից բարձր (հյուսիսում՝ մինչև 2000 մ և հարավում՝ մինչև 2400-2500 մ): Մերձալպյան մարգագետինները տարածված են լեռնային տափաստանների անցումային գոտուց դեպի վեր (2000 մ-ից բարձր) և փոխարինվում են ալպյան մարգագետիններով, որոնք ձգվում են մինչև 3000 մ բարձրությունները: Ամբողջ սարահարթով ցրված են սոճու տնկադաշտերը: Ազգային պարկի տարածքը ծածկված է տափաստաններով, մարգագետնատափաստաններով, մերձալպյան և ալպյան մարգագետիններով և ջրաճահճային տարածքներով: Լեռնային տափաստանները իշխող լանդշաֆտային գոտիներն են «Արփի Լիճ» ազգային պարկում և ներկայացված են մարգագետնային տափաստաններով, որոնք գտնվում են Եղնախաղի և Ջավախքի լեռնաշղթաների վերին լանջերին: «Արփի Լիճ» ազգային պարկի Ախուրյան գետի կիրճում՝ ափերի երկայնքով հանդիպում են բնական կաղամախու անտառապատ նշանակալի հատված: Կան նաև գաճաճ գիհիների կտորներ և տնկած սոճիներ անտառագծի վերևում: Արփի լճի ջրահավաք ավազանի մշակովի լանդշաֆտները կազմված են հիմնականում հացահատիկի և վուշի դաշտերից: Տարածքին բարձր բնապահպանական նշանակություն է տալիս Հայաստանի, Հարավային Կովկասի և Կովկասի (էկոտարածաշրջանի) բազմաթիվ էնդեմիկ տեսակների առկայությունը:

Բուսական աշխարհ. Աշոցքի սարահարթը կազմում է Շիրակ-Ջավախքի կենսաաշխարհագրական շրջանի մասը և ծածկված է տափաստաններով, մարգագետնատափաստաններով, մերձալպյան և ալպյան մարգագետիններով և խոնավ տարածքներով: Տափաստանային համակեցությունները տարածված են 1800-2500 մ բարձրության վրա, մեծ մասամբ աճում են սևահողերի վրա: Գերակշռող ներկայացուցիչներից են՝ շյուղախոտ ակոսավորը *(Festuca sulcata,* փետրախոտ մազիկավորը *(Stipa capillata)* խոտատեսակները, ոզնախոտ կծկավորը (Dactylis glomerata), երեքնուկ ալպյանը (Trifolium alpestre), առվույտ Ջավախքի (Medicago dzavakhetica), սագասոխուկ, պապլոր և այլ տեսակները: Մարգագետնատափաստանները տարածված են միայն հյուսիսային լանջերի վրա, որտեղ հիմնական տեսակներն են հանդիսանում փետրախոտ նեղատերև (Stipa tirsa), թթվիճ խոշորածաղիկը (Betonica macrantha), աստղածաղիկ վրացականը (Aster ibericus): Տարածաշրջանի բուսականությունն ունի մեզոֆիլ հատկանիշներ:

Մինչև 2000 մ բարձրության վրա աճող ջրասեր բարձրլեռնային տափաստաններում հիմնական տեսակներն են եղեգ հարավայինը (Phragmites australis), կեռոն լայնատերևը (Typha latifolia), կեռոն նեղատերևը (Typha angustifolia), կամ կեռոն Լաքսմանին (Typha laxmanii), ճլախոտ Թաբերնեմոնթանին (Schoenoplectus tabernaemontani): Հազվագյուտ և անհետացման եզրին գտնվող տեսակներից են հիրիկ սիբիրյանը (Iris sibirica), թրաշուշան բարակ (Gladiolus tenuis), տրաունշտայներա գնդաձևը (Traunsteinera shpaerica) և մկնասոխ Ռոզենին (Scilla rosenii), որոնք գրանցված են Հայաստանի Կարմիր գրքում, մինչև այժմ սովորական են Արփի լճին հարակից բարձրադիր տափաստաններում և Ախուրյանի խոնավ տարածքներում: Ջրասեր ցածրադիր տափաստանները ձևավորվել են 2300 մ-ից բարձր բարձրություններում և ունեն սահմանափակ տարածվածություն: Հիմնական բուսատեսակները պատկանում են Equisetes ցեղին: Մատիտեղ երկկենցաղ (Polygonum

amphibium) գերակշռում է Արփի լճի բուսականության մեջ: Աշոցքի տարածաշրջանի բնական էկոհամակարգերում զգալի տարածում ունեն նաև ուտելի, համեմունքային և դեղատու բույսերը՝ եղինջ երկտուն (Urtica dioica L.), ավելուկ գանգուր (Rumex crispus L.), ուրց անդրկովկասյանը (Thymus transeaucasicus Ronn), ուրցադաղձը (ռեհան ուրցանման) (Ziziphora clinopodioides Lam.), մարիամ խոտը (Teucrium polium L.), անանուխը (դաղձ դաշտային) (Mentha piperita arvensis), մարգագետնային սինձը (Tragopogon pratensis L.), սինձ հացազգիատերևը (Tragopogon graminifolius DC.), խատուտիկ դեղատու (Taraxacum officinalis Wild), արյունխմիկ դեղատու (Samguisorba officinalis L.), հազարատերևուկ հատվածատերև (Achilla millefolium), փիփերթ (Malva silvrstris L.), եզան լեզու մեծ (Plantago maior L.), մատիտեղը (Polygonum carneum Koch.), առյուծագին (Leonurus cardiaceae L.), ձիաձետ դաշտայինը (Eguisctum arvense L.), հատապտղավորներից մեծ տարածում ունի մասրենին (Rosa L) և այլն:

Համաձայն Համաձայն ՀՀ կառավարության 22 դեկտեմբերի 2011 թվականի «ԱՐՓԻ ԼԻՃ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿԻ 20112015 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ N 1854-Ա որոշման՝ Ազգային պարկում աճում են մոտ 80 ընտանիքի, 269 ցեղի մոտ 670 տեսակի բարձրակարգ, դրանցից 22-ը էնդեմիկ տեսակներ են: Բազմատեսակ ընտանիքներից են՝ Հովանոցազգիները (Apiaceae), Բարդածաղկազգիները (Asteraceae), Մեխակազգիները (Caryophyllaceae), Լոբազգիները (Fabaceae), Շրթնածաղկավորները (Lamiaceae), Հացազգիները (Poaceae), Գորտնուկազգիները (Ranunculaceae), Վարդազգիները (Rosaceae), Խլածաղկազգիները (Scrophulariaceae):19 տեսակները ներառված են Հայաստանի Կարմիր Գրքում՝ գետնասող ցեղակից (Asperula affinis), գազ կորասերմ (Astragalus campylosema), կատվախոտ բրդատերև (Valeriana eriophylla), եզնակող Սոսնովսկու (Bupleurum sosnowsky), հիրիկ սիբիրյան (Iris sibirica), հաղարջենի հայկական (Ribes armenum), կարծրածաղիկ բազմամյա (Scleranthus perennis), դորոնիկում Բալանզայի (Doronicum balansae), գրամոսցիադիում տևապտուղ (Grammosciadium pterocarpum), հապալասենի ճահճային (Vaccinium uliginosum), թրաշուշան Ջավախքի (Gladiolus dzhavakheticus), սոխ ժայռի (Allium rupestre), կատվատոտիկ կովկասյան (Antennaria caucasica), անթեմ կովկասյան (Anthemis caucasica), գազ գնդաձև (Astragalus globosus), ջրաշուշան դեղին (Nuphar lutea), գազ չորասեր (Astragalus xerophylus), հաղարջենի Ախուրյանի (Ribes achurjani), մկնասոխ Ռոզենի (Scilla rosenii): Այս բույսերի շարքում Հայաստանի համար էնդեմիկ են հաղարջենի Ախուրյանի (Ribes achurjani), 2-ը էնդեմիկ են անդրկովկասի համար՝ եզնակող Սոսնովսկու (Bupleurum sosnowsky), կատվախոտ բրդատերև (Valeriana eriophylla), 6-ը էնդեմիկ են Հայկական բարձրավանդակի՝ գազ կորասերմ (Astragalus campylosema), գազ պարսկական (Astragalus persicus), դորոնիկում Բալանզայի (Doronicm balansae), անթեմ կովկասյան (Anthemis caucasica), գազ գնդաձև (Astragalus globosus), գազ չորասեր (Astragalus xerophylus), Խոլորձներ (Orchids) տրաունշտայներա գնդաձև (Traunsteinera shpaerica), 5-ը էնդեմիկ են Կովկասի համար՝ թրաշուշան կովկասյան (Gladiolus caucasicus), թրաշուշան բարակ (Gladiolus tenuis), հիրիկ եղանի (Iris furcata), կատվատոտիկ կովկասյան (Antennaria caucasica), ինչպես նաև հազվադեպ հանդիող՝ մկնասոխ Ռոզենի (Scilla rosenii), կակաչ հայկական (Papaver armeniacum), կակաչ արևելյան (Papaver orientale), շուշան Շովիցի (Lilium szovisianum)և այլն: Հայաստանում աճում է՝ միայն Արփի լճի շրջակայքում աճում է Ջրաշուշան դեղին (Nuphar luteum), շատ հազվադեպ հանդիպող ցինգերիա Բիբերշտեյնին (Zingeria biebersteiniana): Ախուրյան գետի կիրճում՝ կողային կիրճերի փոքրիկ գետակների մոտ/, կաղամախու (Populus tremula) բաց անտառներում և ժայռերի լանջերի վրա տարածված գիհի սեղմված (Juniperus depressa): Գնարբուկ ականջավորն (Primula auriculata) մանուշակագույն ծաղիկներով: Կարմիր գրքում է գրանցված Դեղին ջրաշուշանը:



Դեղին ջրաշուշանի (դեղին կոկոռ

Կենդանական աշխարհ. ըստ գրականության տվյալների՝ Հայաստանի ֆաունայի 17000 տեսակներից տարածաշրջանի անողնաշար կենդանիների տեսակային կազմը մոտ 2500-3000 տեսակ է: Արփի լիճը և դրան անմիջապես հարող տարածքները (մինչև մոտավորապես 2080-2100 մ բարձրության վրա Ֆաունան հիմնականում ներկայացված է ջրային և մերձջրային համակեցությունների տեսակներով: Տարածաշրջանից հայտնի են անողնաշար կենդանիների 65 կարգի ներկայացուցիչներ, առավել բազմաքանակ են միջատները՝ 26 կարգ, փափկամարմինները, սարդակերպերը և բազմոտանիները՝ 6-ական կարգ, խեցգետնանմանները՝ 5 կարգ: Ազգային պարկում կան կաթնասունների 30 տեսակ (եվրոպական ջրասամույր, խայտաքիս):Հանդիպում են հանդիպում են 249 տեսակ ողնաշարավոր կենդանիներ, որոնցից.

- ձկներ - 12 տեսակ (որից 1-ը գրանցված է ՀՀ Կարմիր գրքում),
- երկկենցաղներ – 3 տեսակ,
- սողուններ - 10 տեսակ (որից 2-ը գրանցված է ՀՀ Կարմիր գրքում),
- թռչուններ – 193 տեսակ (որից 33-ը գրանցված է ՀՀ Կարմիր գրքում),
- կաթնասուններ – 31 տեսակ (որից 4-ը գրանցված է ՀՀ Կարմիր գրքում):

Արփի լճում և հարակից տարածքներում բնակվում են ջրային կամ ջրասեր տեսակները: Այստեղ գրանցված են 10 տեսակի ճպուռներ, 8 տեսակի ուղղաթևներ, 139 տեսակի բզեզներ, 14 տեսակի թիթեռներ, այդ թվում՝ Հայաստանի 1 էնդեմիկ բզեզի (*Elaphrus hypocrita araxellum* - արաքսյան գնայուկ) և հարավային Կովկասի 3 էնդեմիկ բզեզների ենթատեսակները (*Silpha carinata armeniaca* – հայական լեշակեր, *Pachnephorus tesselatus armenus* - հայկական տերևակեր, *Bembidion nitidulum fraxator* - փայլուն առվակային գնայուկ), Կովկասի էկոտարածաշրջանի 2 էնդեմիկ բզեզները (*Carabus cribratus* – մահաթև ցայտագնայուկ, *Omophlus caucasicus* - կովկասյան ծաղկեփոշեկեր) և Կովկասի էկոտարածաշրջանի 3 էնդեմիկ թիթեռները (*Pieris pseudorapae suffossa* – կեղծ կաղամբի ճերմակաթիթեռ, *Meleageria daphnis versicolor* – խայտաբղետ մելեագերիա): Այստեղ հայտնաբերվել է նաև Բնության Պահպանության Միջազգային Միության կարմիր ցուցակում, Բերնի կոնվենցիայում և ՀՀ Կարմիր գրքուն գրանցված Արիոն կապտաթիթեռը (Maculinea arion): «Արփի լիճ» ազգային պարկի արևելյան տեղամասի արևմտյան լանջերի վրա հայտնաբերվել են 2 տեսակի

ճպուռներ, 8 տեսակի ուղղաթևներ, 18 տեսակի թիթեռներ ու ուտիճներ և 202 տեսակի բզեզներ:

Ջրային անողնաշար կենդանիների էկոլոգիական ենթախմբերի՝ Կենդանական պլանկտոն՝ մոտ 27 տեսակ (Rotatoria 14, Cladocera 10 և Copepoda 3, Կենդանական բենթոս ենթախմբի(ավելի քան 50 տեսակ, հայտնաբերված է Արփի լճի վերին հատվածի վտակներում:

Տարբեր ժամանակաշրջաններում Արփի լճում գրանցվել է 9 տեսակի ձկներ՝ կարմրախայտը (*Salmo trutta fario*), կովկասյան թեփուղը (*Leuciscus cephalus orientalis*), կարմրաշուրթ հաշամը (*Aspius aspius taeniatus*), ենթաբերանը (*Chondrostoma oxyrhynchus*), կողակը (*Capoeta capoeta ssp*.,), արևելյան տառեխիկը (*Alburnoides bipunctatus eichwaldi*), ծածանը (*Cyprinus carpio*), արծաթափայլ կարասը (*Carassius auratus gibelio*) և ամուրյան նրբաձկնիկը (*Pseudorasbora parva*) և անգորական լերկաձուկը (*Barbatula angorae*):

«Արփի լիճ» ազգային պարկում է միայն հանդիպում Դարևսկու իժը:

Արփի Լիճ ԱՊ-ի տարածքում փաստացի գրանցվել է թռչունների 193 տեսակ, որոնցից 32 տեսակ՝ Հայաստանի Հանրապետության կարմիր գրքում և 11 տեսակ՝ ԲՊՄՄ կարմիր ցանկում: Այստեղ բնակվող թռչունների որոշ տեսակներ ընդգրկված են «Բնության Պահպանության Միջազգային Միության» (IUCN) Կարմիր ցուցակում: «Արփի Լիճ» ազգային պարկի լեռնային տափաստանների յուրահատուկ տեսակներից են՝ դաշտային արտույտը (Alauda arvensis), մոխրագույն կաքավը (Perdix perdix), կանեփնուկը (Carduelis cannabina), սովորական քարաթռչնակը (Oenanthe oenanthe) և այլն:

Ազգային պարկում՝ Արփի լճի հարևանությամբ, գտնվում է հայկական որորի ամենամեծ գաղութն աշխարհում: Սա նաև գանգրափետուր հավալուսնի միակ բնադրավայրն է Հայաստանում: Գանգրափետուր հավալուսնը բնադրող-չվող թռչուն է, որը պատկանում է հավալուսների ընտանիքին: Գանգրափետուր հավալուսնը գրանցված է Հայաստանի Հանրապետության Կարմիր գրքում:



Գանգրափետուր հավալուսնը

Արփի լճի տարածքը միջազգայնորեն ճանաչվել է որպես աշխարհում թռչունների ապրելավայրի կարևոր տարածքներից մեկը: Այլ տեսակները չվող են, ամառվա այցելուներ են կամ էլ ունեն անորոշ կարգավիճակ: Թռչնատեսակների մեծ մասը կապված է սարահարթի լճերի և խոնավ տարածքների հետ:

«Արփի Լիճ» ազգային պարկի խոնավ տարածքներին բնորոշ տեսակները ներառում են 91 տեսակ, որից 18 տեսակները գրանցված են Հայաստանի Կարմիր գրքում և 3-ը ԲՊՄՄ

Կարմիր ցուցակում: Պատկերն ընդգրկում է 88 բնադրող և նստակյաց տեսակներ (9 հավանական կամ հնարավոր բբնադրողներով), 69 –չվողներ և 12 ձմեռողներ: Այստեղ հանդիպում են սպիտակ արագիլը (Ciconia ciconia), սովորական կաչաղակը (Pica pica), մոխրագույն ագռավը (Corvus corone), սովորական ճայը (Corvus monedula), սովորական սարյակը (Sturnus vulgaris), սպիտակ խաղտտնիկը (Motacilla alba), գյուղական ծիծեռնակը (Hirundo rustica) և տնային ճնճղուկը (Passer domesticus):


«Ալվար» և «Արդենիս» տեղամասերի խոնավ տարածքները մտնում են Արփի լճի կազմի մեջ և Ռամսարի կոնվենցիայով ճանաչվել են որպես միջազգային նշանակության տարածքներ և հանդիսանում են ՝ ապրելավայրեր ջրլող թռչունների ու չվող թռչունների համար և բնադրման վայրեր՝ հազվագյուտ և անհետացման եզրին գտնվող մի շարք տեսակների համար: Հիմնական խնդիրն է՝ պահպանել այս խոցելի խոնավ տարածքներն և թռչունների բնադրման վայրերը՝ հողերի և այլ ռեսուրսների անկայուն օգտագործման ազդեցություններից: Խոնավ տարածքները, ճահիճները գտնվում են հիմնականում Ախուրյան գետի երկայնքով՝ Բերդաշեն գյուղից ներքև: Գործունեության տարածքը չի առնչվում նշված տեղամասերի հետ:

Պատմամշակութային հուշարձաններ. «Արփի լիճ» ազգային պարկում և պահպանման գոտում գտնվող պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկը.



1	Դամբարանադաշտ	15	Գյուղատեղի	30	Գյուղատեղի	45	Հուշարձան
2	Ամրոց		'Աշոցք'	31	Ջիթհան	46	Հուշարձան
3	Գյուղատեղի	16	Գյուղատեղի	32	Եկեղեցի	47	Եկեղեցի, Սբ.
4	Դամբարանադաշտ	17	Ամրոց	33	Գերեզմանոց		Գևորգ
5	Ամրոց	18	Եկեղեցի	34	Գերեզմանոց	48	Հուշարձան
6	Գյուղատեղի	19	Գերեզմանոց	35	Ամրոց	49	Մատուռ
7	Ամրոց	20	Գերեզմանոց	36	Բացօդյա	50	Խոյատապան
8	Ամրոց	21	Խաչքար		կայան	51	Խաչքար
9	Գերեզմանոց	22	Եկեղեցի	37	Կամուրջ	52	Հուշաղբյուր
10	Ամրոց 'Սև	23	Մատուռ	38	Գերեզմանոց	53	Դամբարանադաշտ
	Բերդ'	24	Գերեզմանոց	39	Դամբարանադաշտ	54	Գերեզմանոց
11	Ամրոց	25	Եկեղեցի	40	Գյուղատեղի	55	Հուշաղբյուր
12	Գյուղատեղի	26	Գերեզմանոց	41	Հուշարձան	56	Ամրոց
13	Եկեղեցի	27	Գյուղատեղի	42	Կամուրջ	57	Գյուղատեղի
14	Դամբարանադաշտ	28	Գերեզմանոց	43	Գերեզմանոց	58	Ամրոց
		29	Խաչքար	44	Գերեզմանոց		

Սոցիալ-տնտեսական. Շիրակի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության հյուսիս-արևմուտքում: Այն արևմուտքից պետական սահմանով սահմանակից է Թուրքիային, իսկ հյուսիսից՝ Վրաստանին, արևելքից սահմանակից է Լոռու և հարավից՝ Արագածոտնի մարզերին:



Մարզի սոցիալ-տնտեսական ցուցանիշները ներկայացված են ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական կայքի տեղեկատվության հիման վրա.

Աղյուսակ 8

Տարածքը Territory	2 680 քառ.կմ/ sq. km
Հայաստանի Հանրապետության տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը,% Territory share of the marz in the territory of the Republic of Armenia, %	9.0
Համայնքներ, 2025թ. տարեսկզբի դրությամբ Communities, as of he beginning of 2025	6
Քաղաքներ Towns	3
Գյուղեր Villages	127
Բնակչության թվաքանակը 2025թ. տարեսկզբի դրությամբ Population number as of the beginning of the year, 2025	242.4 հազ.մարդ/ ths. person
այդ թվում՝ *including:*	
քաղաքային urban	138.3 հազ. մարդ/ ths. person
գյուղական rural	104.1 հազ.մարդ ths. person
ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակում մարզի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը 2024թ.,% Share of marz population in the total population of the RA 2024, %	7.9
Քաղաքային բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը 2024թ.,% Share of urban population size 2024, %	57.1
Գյուղատնտեսական նշանակության հողեր, 2023թ. հուլիսի 1-ի դրությամբ Agricultural land, as of July 1, 2023	210 954.5 հա/ ha
այդ թվում՝վարելահողեր, 2023թ. հուլիսի 1-ի դրությամբ including: arable land, as of July 1, 2023	78 139.8 հա/ ha

Активация

Գյուղատնտեսական նշանակության հողեր, 2023թ. հուլիսի 1-ի դրությամբ կազմում է 210 954.5 հա, որից 78 139.8 հա վարելահողեր են:

Շիրակի մարզի բնակչության թվաքանակը 2025թ. տարեսկզբի դրությամբ կազմում է 242.4 հազ.մարդ:

2024թ.-ին մարզի տնտեսության հիմնական ոլորտների տեսակարար կշիռները ՀՀ տնտեսության համապատասխան ոլորտների ընդհանուր ծավալում կազմել են.

- արդյունաբերություն 4.1 %,
- գյուղատնտեսություն 9.3 %,
- շինարարություն 4.5 %,
- մանրածախ առևտուր 4.0 %,
- ծառայություններ 1.7 %:

Շիրակի մարզի արդյունաբերության առաջատար ոլորտներն են սննդամթերքի ու խմիչքների և ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրությունը: Հայտնի են Արթիկի, Անիի տուֆն ու պեմզան: Բեռնաուղևորափոխադրումները մարզում իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով: Մարզում են գտնվում Շիրակի օդանավակայանը և Բավրայի մաքսակետը: Մարզի տարածքով են անցնում Հայաստանի հանրապետությունը Վրաստանին կապող գլխավոր երկաթգիծը և ավտոմոբիլային խճուղին: Այստեղ իրար են միանում Հայաստանի և Թուրքիայի երկաթուղային և ավտոճանապարհային ցանցերը: Մարզկենտրոնը Գյումրի քաղաքն է, գտնվում է Երևանից 118 կմ հեռավորության վրա, բարձրությունը ծովի մակերևույթից շուրջ 1 550 մ է: Քաղաքը գտնվում է Ախուրյան գետի ձախ ափին: Քաղաքում զարգացած է մշակող արդյունաբերությունը:

Բնակչությունը 2025թ. տարեսկզբին կազմում է 114.7 հազ. մարդ): Այն բնակչության թվաքանակով և իր նշանակությամբ համարվում է Հայաստանի Հանրապետության երկրորդ քաղաքը: Գյումրիում է գտնվում «Կումայրի» արգելոց-թանգարանը, որը խթան է զբոսաշրջության զարգացման համար:

Ամասիա համայնք. «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ Ամասիա համայնքը կազմում մտնում են 25՝ Ամասիա, Արեգնադեմ, Բանդիվան, Բյուրական, Գտաշեն, Հովտուն, Մեղրաշատ, Ողջի, Ջրաձոր, Ալվար, Աղվորիկ, Արավետ, Արդենիս, Բերդաշեն, Գառնառիճ, Դարիկ, Եղնաջուր, Երիզակ, Զարիշատ, Ձորակերտ, Լորասար, Ծաղկուտ, Հողմիկ, Շաղիկ, Պաղակն բնակավայրերը: Համայնքն իր վարչական սահմաններով սահմանակից է Աշոցք, Արփի, Սարապատ, Հայկավան, Մարմաշեն, Վահրամաբերդ և Կապս համայնքներին: Համայնքի համար տնտեսական առումով առավելություն է Գյումրի-Վրաստան միջպետական նշանակության ճանապարհին մոտ գտնվելը: Խիստ կլիմայի ու անբարենպաստ պայմանների պատճառով, բնակչության խտությունը այստեղ համեմատաբար ցածր է և շարունակվում է իջնել արտագաղթի հաշվին: Ձմռանը համարյա 4 ամսով տարածքի արևմտյան հատվածի մի շարք համայնքներ գործնականում անջատված է լինում Հայաստանի մնացած բնակավայրերից՝ խորը ձնածածկի (1.5 մ և ավելի) և ճանապարների անանցելիության պատճառով:

2025թ. տարեսկզբի դրությամբ Ամասիա բնակավայրի բնակչության կազմում է 1651 մարդ: ԲՆակավայրը գտնվում է Ախուրյան գետի աջ ափին, մեղմաթեք հարթավայրում՝ ծովի մակարդակից 1870մ բարձրության վրա: Կլիման բարեխառն լեռնային է, ձմեռը տևական,

ցուրտ, հաստատուն ձնածածկույթով: Լինում են ուժեղ քամիներ, հաճախակի են մառախուղները և ձնաբքերը: Ամառը տաք է, համեմատաբար խոնավ: Բնական լանդշաֆտները սևահողային լեռնատափաստաններ են, որոնք նպաստում են գյուղատնտեսության զարգացման համար: Գյուղատնտեսության մասնագիտացման ուղղությունը կաթնամսատու անասնապահությունն է, հիմնականում, պահվում են խոշոր եղջերավոր անասուններ և ոչխարներ: Զբաղվում են հացահատիկային, կարտոֆիլի, կերային կուլտուրաների մշակությամբ, մեղվաբուծությամբ, թռչնաբուծությամբ: Ունի պանրի գործարան՝ Լոռի, Չանախ պանիրներ, կաթ, կաթնաշոռ, կարագ, որոնց արտադրանքը սպառվում է ինչպես մարզի, այնպես էլ մարզի սահմաններից դուրս: Բնակավայրը գազաֆիկացված է: Համայնքի տարածքում առկա են ընդերքօգտագործման ձեռնարկություններ: Ամասիայում գործում է «Ամասիայի առողջության կենտրոն»-ը, հանրակրթական դպրոց, մանկապարտեզ, մարզադպրոց, մարզադաշտ և խաղահրապարակ, ինչպես նաև հասարարակական նշանակության այլ կազմակերպություններ: Համայնքի բոլոր բնակավայրերի հարակից տարածքներում կան գեղատեսիլ վայրեր, բնական աղբյուրներ և հուշաղբյուրներ, Ամասիայից 2կմ արևմուտք կա հին գյուղատեղի, որտեղ համայնքի բնակիչները և զբոսաշրջիկներն անցկացնում են իրենց հանգիստը, ինչպես նաև այն խթանում է զբոսաշրջության զարգացման համար: Համայնքի վարչական սահմաններում գտվող հատուկ պահպանվող տարածքնեում է գտնվում «Արփի լիճ» ազգային պարկի հողերը:

Համայնքում բնակչության զբաղվածության հնարավորությունները շատ սահմանափակ են: Տեղի բնակչության փոքր մասն է զբաղված է ծառայությունների և այլ ոլորտներում:

Բնակչությունը զբաղված է մեղվաբուծությամբ, «Արփի լիճ» ազգային պարկի պահպանման գոտում՝ սնկերի և ուտելի խոտաբուսերի հավաքմամբ: Համայնքում լայն տարածում ունեն տարբեր բուսական ընտանիքներին պատկանող տարախոտային այնպիսի տեսակներ, որոնք բնակչության կողմից օգտագործվում են կերային, պարենային և դեղագործական նպատակներով:

Տարածքում գտնվող Արփի Լիճը բնակիչների և ձկնորսների համար ստեղծում է ձկնորսության լայն հնարավորություններ:

Համայնքի հիմնախնդիրներից են խմելու ջրագծերի, գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը, փողոցային լուսավորության ցանցի ընդլայնումը, կոյուղու համակարգի, աղբավայրի արդիականացումը, գյուղատնտեսական մթերքի իրացումը, գազաֆիկացումը, այլ խնդիրներ:

Արդենիս գյուղը գտնվում է Աշոցքի սարավանդում, Ախուրյան գետի վերին հոսանքում՝ ծովի մակարդակից 2050մ բարձրության վրա: Արդենիս գյուղը մարզկենտրոն Գյումրիից գտնվում է մոտ 28 կմ հյուսիս-արևմուտք: Կլիման ցուրտ լեռնային է, ձմեռը տևական, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով: Լինում են ուժեղ քամիներ, հաճախակի են ձնաբքերը և սառնամանիքները: Ամառը զով է, համեմատաբար խոնավ: Բնական լանդշաֆտները սևահողային լեռնատափաստաններ են և մերձալպյան մարգագետիններ: Գյուղի գյուղատնտեսական հողահանդակները գրեթե ամբողջությամբ օգտագործվում են որպես վարելահողեր, խոտհարքեր, արոտավայրեր: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և դաշտավարությամբ: Բնակավայրն ունի կեղտաջրերի և անձրևաջրերի հեռացման համակարգեր: Արդենիսի տարածքում պահպանվել են հայկական

հին ամրոցի և եկեղեցու հետքեր: 2025թ. տարեսկզբի դրությամբ կազմում է 185 մարդ: Գյուղատնտեսության մասնագիտացված ուղղությունը անասնապահությունն է: Բնակչությունը զբաղվում են խոշոր և մանր եղջերավոր անասնաբուծությամբ, թռչնաբուծությամբ, մեղվաբուծությամբ: Զբաղվում են նաև հացահատիկային, կուլտուրաների մշակությամբ:

Բերդաշեն գյուղ. մտնում էԱրդենիս համայնքի մեջ, գտնվում է մարզկենտրոն Գյումրիից 38 կմ հյուսիս-արևմուտք, Ախուրյան գետի ափին, Արփի լճի արևելյան ափից ոչ հեռու: Ծովի մակարդակից բարձրությունը կազմում է 2020մ, զբաղեցնումէ 19.7կմ^2 մակերես: Բնակչության հիմնական մասը տեղափոխվել է Ջավախքից: բնակչությունը 2025թ. հունվարի 1-ի դրությամբ կազմում է 221 մարդ: Բնակլիմայական պայմանները բարդ են, որի պատչառով բնակչությունը հիմնականում զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ: Գյուղի համար գերտխնդիր է գործազրկությունը, հիմանկանում գնում են արտագնա աշխատանքի: Բերդաշենն ունի պանրի գործարան: Բերդաշենում է գտնվում “Ավազնոց” վանական կառույցը (միջնադար):

5. Նախատեսվող գործունեության բնութագիր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումները, օգտագործվող բնական ռեսուրսներ և նյութեր, (շինարարության շահագործման , փակման փուլեր).

Կառուցապատումը կատարվելու է հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2011 թվականի 21 հուլիսի ««ԱՐՓԻ ԼԻՃ» ազգային պարկի սահմանների նկարագիրը, հատակագիծը, տարածքի չափը հաստատելու և հողերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին»» N 1151-Ն և ՀՀ կառավարության 22 դեկտեմբերի 2011 թվականի ««ԱՐՓԻ ԼԻՃ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿԻ 2011-2015թթ. կառավարման պլանը հաստատելու մասին»» N 1854-Ա որոշումներում ամրագրված պահանջներին համապատասխան:

Նախատեսվող գործունեությունն իրականացվում է պարկի ռեկրացիոն գոտում, որտեղ թույլատրվում է ռեկրեացիայի նպատակով հողերն օրենքով սահմանված կարգով վարձակալության տրամադրելը և համապատասխան սպասարկման ծառայությունների կազմակերպումը:

Համաձայն Ջրային Օրենսգրքի /Հոդված 5՝ «Ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի կառավարման, օգտագործման և պահպանության հիմնական սկզբունքները»-ից թույլատրվում է.

«7) ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման խթանումը՝ ի շահ հասարակության, որով խթանում է զբոսաշրջության և լճի տեսարանային հնարավորությունները օգտագործելու նպատակով»:

Համաձայն Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին Օրենքի /հոդված 26՝ «Բնության հատուկ պահպանվող տարածքների օգտագործումը», ինչպես նաև Ազգային Պարկի կանոնադրության՝ թույլատրվում է ռեժիմով չարգելված գոտիներում գործունեության իրականացումը, 10. Պարկի ռեկրեացիոն գոտու տարածքում թույլատրվում են՝

5) սիրողական և մարզական ձկնորսությունը՝ այդ նպատակով առանձնացված վայրերում.

6) ռեկրեացիայի նպատակով հողերն օրենքով սահմանված կարգով վարձակալության տրամադրելը և համապատասխան սպասարկման ծառայությունների կազմակերպումը.

10) տրանսպորտային միջոցների մուտքն ու կանգառը՝ այդ նպատակով առանձնացված վայրերում.

Կառուցապատումը կատարվելու է պահպանելով «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ Օրենքի հոդված 17. կետ 2-ով սահմանված՝ ԱՊ-ի ռեկրացիոն գոտու, ինչպես նաև կանոնադրությամբ ամրագրված, ինչպես նաև ՀՀ Ջրային Օրենսգրքի 99-րդ հոդվածի պահանջները, բացառելով ԱՊ-ի բնական տեսքի խախտումները, առանց ծառահատման, ջրային ռեսուրսի աղտոտման, լճի ափերի փոփոխության և շրջակա միջավայրին վնաս հասցնելու:

5.1.Շինարարության և շահագործման փուլեր.

Շինարարության փուլ. Գործունեության ենթակա տարածքում քանդման աշխատանքներ չեն նախատեսվում: Կատարվելու են միայն հողային աշխատանքներ: Գործունեության իրականացման ընթացքում շինհրապարակ չի ձևավորվելու: Գործունեությունն իրականացվելու է «Արփի լիճ» ազգային պարկ» ՊՈԱԿ-ին պատկանող գոյություն ունեցող շենքի հարակից տարածքում, որտեղ առկա են ջրամատակարարման, ջրահեռացման, էլեկտրամատակարարման համակարգերը: Շինարարության փուլում բանվորներն օգտվելու են շենքում առկա համակարգերից, ինչպես նաև խոհանոցից:

Տարածքն ապահովված է գիշերային լուսավորության և հրդեհաշիջման համակարգերով՝ առկա է հրդեհաշիջման վահանակ, կրակմարիչ: Առա են աղբահեռացման արկղեր՝ 5 հատ:

Հողային և այլ աշխատանքներ կատարելու համար նախատեսված մեքենաները կտեղակայվեն գոյություն ունեցող գրոնտային ճանապարհի վրա: Իսկ անհրաժեշտ սարքավորումները տարածք կբերվեն ըստ անհրաժեշտության և կտեղադրվեն տակդիրների վրա՝ ափից հեռու: Գործունեության ընթացքում պահպանվելու են աշխատողների անվտանգության և հակահրդեհային պայմանները:

Բոլոր տիպի շին-մոնտաժային աշխատանքները կկատարվեն պահպանելով շինարարական նորմերը, կանոնները, ստանդարտները և նախագծի տեխնիկական պայմանները:

Շինարարական տեխնիկա, տրանսպորտային միջոցներ. գործունեության իրականացման փուլում նախատեսվում է օգտագործել հետևյալ տեխնիկա-տրանսպորտային միջոցները.

- Էքսկավատոր՝ 1 հատ
- Մանիպուլյատոր
- Ռեդուկտոր
- Բուլդոզեր՝ 1 հատ
- Բետոնամղիչ
- Պողպատե լինգ
- Էլ. Եռակցման սարք

- Շվելեր
- Հիդրավլիկ ռոտատոր
- Ձեռքի էլեկտրական, մեխանիկական գործիքներ և այլն:

Շինտեխնիկան լինելու է ընկերության սեփական տեխնիկան կամ Կապալառու կազմակերպության մեքենաները: Շինտեխնիկան կայանվելու է գոյություն ունեցող գրունտային ճանապարհի եզրին: Օգտագործվելու է հերթականությամբ: Որոշ շինարարական սարքավորումների կիրառման դեպքում վերջիններս կտեղադրվեն մետաղական կամ փայտյա տակդիրների վրա: Շարժիչային տրանսպորտային միջոցներն օգտագործվելու են միայն ցցային հիմքերի տեղադրման համար:

Հողային աշխատանքներ. կառուցապատման ժամանակ կատարվելու են հողային աշխատանքներ՝ հանույթ՝ 88մ^3, որն առաջանալու է նավամատույցի և էստակադայի հենասյուների տեղադրման արդյունքում: Հանված հողային զանգվածով կատարվելու է հետլիցք և հարթեցում:

Էլեկտրամատակարարումը կատարվելու է համաձայն՝ «ՀԷՑ» ՓԲԸ –ի հետ համաձայնեցված, քանի որ համաձայն «ՀԷՑ»-ի կողմից տրված գրության գործունեության վերաբերյալ առարկություն չունի: Էլեկտրամատակարարումը նախատեսվում է իրականացնել «Արփի լիճ» ազգային պարկ» ՊՈԱԿ-ին պատկանող գոյություն ունեցող հարակից շենքից Շինթույլտվություն ստանալուց հետո կհամաձայնեցվեն նավամատույցի լուսավորության համակարգի անցկացման և միացման պայմանները:

Աղբահեռացում. թափոններ. շինարարության ընթացքում առաջանալու են նյութերի մնացորդներ՝ աղբի և թափոնների/պարկեր, ավազ, բետոնյա մնացորդ, յուղոտված լաթեր/ տեսքով: Վերջիններս կտեսակավորվեն, կառանձնացվեն առանձին տարաների կամ պարկերի մեջ, իսկ կենցաղային աղբի հեռացման համար տարածքում առկա են 5 հատ աղբամաններ:

Սոցիալական. շինարարության ընթացքում ներգրավվելու են 12 մարդ՝

- Ինժեներատեխնիկական անձնակազմ՝ 2 մարդ/գեոդեզիստ, աշխղեկ/
- Մեքենավարներ և բանվորներ՝ 10 մարդ

Բարեկարգում, Կանաչապատում. շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է գործունեության և կից տարածքների բարեկարգում:

Ժամանակացույց. Շինարարական աշխատանքների ընդհանուր տևողություն կազմելու է 4 ամիս՝ 120 օր:

Շինարարական աշխատանքները ներառելու են.

- Տարածքի մաքրում քարերից և աղբից:
- Հողային աշխատանքներ:
- Ցցային հիքերի մոնտաժում:
- Ցցային հիմքերի բետոնացում:
- Մետաղական հիմանկմախքի կառուցում:
- Հականեխիչ նյութով մշակված տախտակամածի կառուցում:

- Լուսամփոփների մոնտաժում:
- Նստարանների և ծաղկամանների տեղադրում:

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/Հ	Աշխատանքների անվանումը	Օրեր											
		1-ին 10-ն օրյակ	2-րդ 10-ն օրյակ	3-րդ 10-ն օրյակ	4-րդ 10-ն օրյակ	5-րդ 10-ն օրյակ	6-րդ 10-ն օրյակ	7-րդ 10-ն օրյակ	8-րդ 10-ն օրյակ	9-րդ 10-ն օրյակ	10-րդ 10-ն օրյակ	11-րդ 10-ն օրյակ	12-րդ 10-ն օրյակ
1	Տարածքի մաքրում քարերից և աղբից												
2	Հողային աշխատանքների կատարում												
3	Ցցային հիմքերի մոնտաժում հիդրավլիկ ռոտատորի միջոցով												
4	Ցցային հիմքերի միջուկի բետոնացում և գլխամասում պողպատե թերթի տեղադրում												
5	Մետաղական հիմնակմախքի կառուցում հիմքերի վրա												
6	Հակաճեխիչ նյութով մշակված տախտակամածի կառուցում												
7	Աստիճանների մետաղական հիմնակմախքի կառուցում												
8	Աստճանաքայլերի կառուցում հակաճեխիչ նյութով մշակված տախտակներով												
9	Անվտանգության բազրիքների կառուցում պողպատե քառակուսի խողովակներից												
10	Լուսամփոփների մոնտաժում բազրիքների վրա												
11	Նավամատույցի կառուցում փայտե գերաններից և տախտակներից												
12	Նստարանների ծաղկամանների տեղադրում												

5.2.Օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր. շինարարության փուլում նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում բնական ռեսուրսներից օգտագործվելու միայն ջուր:

Ջուրն օգտագործվելու է աշխատողների խմելու ջրի և կենցաղային կարիքները հոգալու համար: Շինարարության փուլում աշխատողներն օգտվելու են տարածքում առկա ջրամատակարարման համակարգից:

Շինարության ընթացքում աշխատելու են 12 աշխատող, որից 2 ԻՏՈ:

ա) Շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝

WË.ï. = (n x N + n1 x N1) x T, որտեղ

n – ԻՏ աշխատողների, ծառայողների թվաքանակն է՝2 մարդ

N– ԻՏԱ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 մ^{3}օր/մարդ

n1– սպասարկող աշխատողների թվաքանակն է՝ 10 մարդ

N1 – սպասարկողների ջրածախսի նորմատիվն է ՝ 0.025 մ^{3}օր/մարդ

T – աշխատանքային օրերի թիվն է՝ 120օր:

Wխ.տ.= (2 x 0.016 + 10 x 0.025) x 120 = 33.84 մ^3/շին. ժամ. կամ 0,282մ^3/օր:

Շինարարության փուլում շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը կկազմի 0,282 մ^3/օր:

Տարածքում շինհրապարակ չի ձևավորվելու, ուստի ջրցանման աշխատանքներ չեն նախատեսվում:

Կեղտաջրեր. Շինարարության և շահագործման փուլերում աշխատողները օգտվելու են «Արփի լիճ» ՊՈԱԿ-ի կեղտաջրերի հեռացման համակարգերից, զուգարաններից:

Նյութեր. շինարարության ընթացքում օգտագործվելու են.

- փայտ, գերան
- պողպատե թերթ
- պողպատե անկյունակ
- բետոնանյութ
- բարձրորակ ներկ
- հականեխիչ լուծույթ և այլն:

Օգտագործվելու է B 12.5 տիպի բետոն՝ մետաղական սյուների ամրացման նպատակով: Այն բերվելու է պատրաստի վիճակում մասնագիտացված կազմակերպություններից՝ բետոնախառնիչ մեքենաներով՝ բնետոնաշաղախային հանգույցներից: Բետոնի առաքումը կատարվելու է պարբերաբար, ելնելով աշխատանքների անընդհատության ապահովման անհրաժեշտությունից:

Տարածքում շինանյութերը կտեղադրվեն տակդիրների վրա: Տարածքի կառուցապատումն իրականացվելու է այնպիսի նյութերով, որոնք չեն վնասի շրջակա միջավայրին: Բոլոր կառուցապատման լուծումները կլինեն համահունչ և ներդաշնակ

գոյություն ունեցող լանդշաֆտին և բնությանը, չխաթարելով տարածքի էկոհամակարգը և հարակից շրջակա միջավայրը:

Շահագործման փուլ. Համաձայն նախագծային լուծումների նախատեսվում է կառուցել ուղղանկյուն հատակագծով, մետաղական հիմնակմախքով, 50.2x3.1մ արտաքին չափերով կառույց: Նավամատույցի երկայնական հատվածը պայմանականորեն բաժանվել է 10-ոց հատվածների, որոնք միմիանցից բաժանվում են 50մմ-ոց կայաններով: Նշված հատվածների հիմքերի նիշերը փոխվում են 10մ-ը մեկ: Տեղադրվելու են 40 հատ հենասյուներ, որոնցից 38-ը ջրում, 2-ը՝ ցամաքում: Հենասյուների առանցքային չափերը փոփոխական են երկայնական ուղղությամբ՝ 3.025-3.124մ, լայնական ուղղությամբ՝ 2.667մ:

Նավամատույցի սկզբնական բացարձակ նիշը 2051.0մ է:

Կառույցի չափերը համաձայնեցվել են «Արփի Լիճ»ԱՊ ՊՈԱԿ-ի հետ: .

Համաձայն նախագծային լուծումների նախատեսվող կառուցապատման ցուցանիշներն են.

- ✓ Հողամասի մակերեսը՝ 0.07704հա
- ✓ Կառուցապատվող մակերեսը՝ 150մ^2:

Նավամատույցը կառուցվելու է հետևյալ պարամետրերով.

- ➢ Նավամատույցի հիմքերը լինելու են մետաղական հորատանցքային-ցցային՝ Փ 325մմ/հաստությունը՝ 8մմ, L=2000 մինչև 7000մմ:
- ➢ Շրջանակը- օգտագործվելու է մետաղական պողպատե անկյունակ 100 x4:
- ➢ Հատակները -լինելու են փայտյա՝ 30մմ հաստության:
- ➢ Աստիճանները՝- լինելու է փայտյա 30մմ հաստության՝ մետաղական շրջանակով պողպատե անկյունակ/50x3, շվելեր N8/:

Նավամատույցի հորատային-ցցային հիմքերի համար օգտագործվելու է պողպատե թերթ, պողպատե խողովակ, կրող պտուտակ, պողպատե կոնաձև ծայրապանակ: Հիմքերն ունենալու են ջրամեկուսիչ շերտ, որոնց ամրացման համար օգտագործվելու է B 12.5 դասի բետոն:

Հիմքերի ջրամեկուսացման տեխնոլոգիան.

- նախապես անկյունային հղկիչ սարքով մաքրվում է ժանգը և եռակցումից առաջացած խարամը:
- Այնուհետև փոշեպատվում է ամբողջ մակերեսը՝ 3մմ հաստությամբ պոլեուրեթանի հիմքով պոլիմերային ծածկույթով:
- Մետաղական մասերը ներկվում է մետաղի համար նախատեսված ջրակայուն ներկով:

Առանց հիմքի լողացող նավամատույցները (2,0 x 1.2մ և 0,7 x 1,5մ) նախատեսվում է իրականացնել փայտե գերանների և տախտակների միջոցով: Հետիոտնային էստակադան 3.1 x 50.2մ չափերով և 8 հատ աստիճաններով կառուց է: Այն կառուցվելու է հորատային-ցցային մետաղական հիմքերով, կրող կոնստրուկցիաները լինելու են մետաղական, իսկ ծածկը՝ փայտե: Պողպատե անյունակներն ամրացվում են սեյսմիկ կարաններով: Աստիճանները և հատակը լինելու են 30մմ հաստության փայտյա, աստիճաններին ամրացվելու են մետաղական շրջանակներ: Մետաղական մասերը ներկվելու են հակակոռոզիոն ներկով, իսկ փայտյա մասերը պատվելու են հականեխիչ շերտով:

Ջրի տակ բարձր ճնշման պայմաններում կատարվելու են զոդման՝ չոր եռակցման եղանակով, աշխատանքներ: Եռակցումը կատարվելու է ՝ հատուկ ջրակայուն էլեկտրոդներով՝ փակ հերմետիկ խցերում, որն ապահովվում է չոր աշխատանքնային միջավայր:

Նավամատույցի վրա լինելու են նստարաններ՝ 10 հատ, ծաղկամաններ՝ 20 հատ, հետիոտնային էստակադա: Լճում նախատեսվում են 4 հատ նավակներ՝ երկու թիավարվող և երկու էլ.մարտկոցով: Նավամատույցի վրա ամրացված է լինելու ներկված պողպատե խողովակներ/ բռնաձող մարդկանց բռնվելու և անվտանգությունն ապահովելու համար:

Նավամատույցի կառուցման համար նախատեսված փայտյա մասերը հղկվում է, ներկվում է հականեխիչ լուծույթով, յուղաներկվում է: Բոլոր մետաղական և փայտյա մասերի հետ կատարվող մշակման, զոդման, ջրամեկուսացման, ներկման աշխատանքները կատարվելու են տարածքից դուրս, տարածք են բերվելու արդեն մշակված վիճակում: Միայն ցցային հիմքերի միջև կապերի զոդումն է իրականացվելու տեղում՝ ջրի ցածր մակարդակի դեպքում:

Էլեկտրամատակարարում. Շահագործման փուլում նավամատույցի լուսավորության համար օգտվելու են միայն ԱՊ-ում գոյություն ունեցող էլեկտրամատակարարման համակարգից՝ նավամատույցի լուսավորությունն ապահովելու համար: Տեղադրվելու է 30ՎՏ հզորությամբ 10 հատ LED լուսատու լամպեր:

Տարածք մտնելու համար նախատեսվում է երեք մուտքեր:

Նախատեսվող գործունեության նախագիծը կազմվել է ՀՀ-ում գործող նախագծային և շինարարական նորմերին համապատասխան: Նախագծային լուծումներում ապահոված են հակահրդեհային պահանջները՝ ՀՀՇՆ «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգության» նորմերին համապատասխան:

6. Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները, ռիսկերը (շինարարության և շահագործման փուլ).

Գործունեության իրականացման ենթակա տարածքը գտնվում է Շիրակի մարզի Ամասիա համայնքի վարչական տարածքում՝ «Արփի լիճ»ԱՊ-ի ռեկրեացիոն գոտում: Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է 0.07704հա մակերեսի վրա, որը ներառում էջրային և ցամաքային հատվածները: Ռամսարի կոնվենցիայով ԱՊ-ի տարածքը լճի շրջակայքով ճանաչվել են որպես միջազգային նշանակության տարածքներ և հանդիսանում են ՝ ապրելավայրեր ջրլող թռչունների ու չվող թռչունների համար և բնադրման վայրեր՝ հազվագյուտ և անհետացման եզրին գտնվող մի շարք տեսակների համար: Նախատեսվող շինարարական աշխատանքները ընթանալու են Ազգային պարկի ռեկրացիոն գոտում՝ ջրամբարի ջրածածկ և ափամերձ հատվածում, որտեղ կենդանիների և թռչունների բնադրավայրեր առկա չեն:

Բոլոր կառուցապատման լուծումները կլինեն այնպիսին, որպեսզի լինեն համահունչ և ներդաշնակ գոյություն ունեցող բնությանը և լանդշաֆտին՝ չխաթարելով տարածքի էկոհամակարգը և հարակից շրջակա միջավայրը:

Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում հնարավոր են աշխատողների արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության հնարավոր ռիսկերի առաջացում՝ կապված հրդեհների, աշխատողների

վնասվածքների և տեխնիկա-տրանսպորտային միջոցների շահագործման ընթացքում հնարավոր վթարների, ինչպես նաև շինարարական աշխատանքների և շահագործման ընթացքում մարդու առողջության և անվտանգության հետ:

Նախատեսվող գործունեության շրջանակներում ծառահատումներ չեն կատարվելու: Շինարարական աշխատանքները /հիմնականում հավաքովի սարքավորումներով/ կրելու են կարճաժամկետ բնույթ: Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունների մեղմանն ուղղված հաշվետվությունում նախատեսվող միջոցառումների ճիշտ կիրառման արդյունքում՝ հնարավոր ազդեցությունները կլինեն նվազագույնը:

6.1 Օդային ավազան. Գործունեության իրականացման շինարարության փուլում տրանսպորտային միջոցների աշխատանքի ընթացքում լինելու են օդային ավազան արտանետումներ՝ ծխագազերի և հողային աշխատանքների ընթացքում՝ փոշու տեսքով:

Օդային ավազան արտանետումների առաջացումը կապված է շինարարական աշխատանքների իրականացման փուլում հողային աշխատանքներից անօրգանականփոշու՝ հողային զանգվածի փորման, բեռնման, բեռանաթափման, կոմունիկացիաների անցկացման, ճանապարհների բարեկարգման հետ: Արտանետումներն առաջանալու են նաև նյութերի տեղափոխման և բեռնատարների տեղաշարժման հետ: Վնասակար արտանետումներ առաջանում են նաև բեռնատարների ու սարքավորումների աշխատանքի արդյունքում այրվող վառելիքից: Ներկայացվող բոլոր արտանետումները կրելու են ժամանակավոր բնույթ և չեն գերազանցում սահմանային թույլատրելի արտանետումները:

<u>Ելակետային տվյալներ</u>

Նախատեսվող աշխատանքները նախատեսվում է իրականացնել առավելագույնը 120 օրվա ընթացքում: Շինարարության իրականացման յուրաքանչյուր փուլ ունի իր ժամկետը, համաձայն որի իրականացվել է արտանետվող նյութերի հաշվարկը:

Շինարարական աշխատանքների ընթացքում իրականացվելու են հետևյալ ծավալով հողային աշխատանքներ՝

- Գրունտի հանույթ – 88 մ^3
- Հետ լիցք/համահարթեցման աշխատանքներ – 88 մ^3

Շինարարության ժամանակ օգտագործվող հիմնական շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների ցանկը, որոնք կարող են օդային ավազան արտանետումներ առաջացնել հետևյալն է, որիղ միաժամանակ կարող են աշխատել 2 շինմեքենա.

- Էքսկավատոր՝ 1 հատ
- Մանիպուլյատոր
- Ռեդուկտոր
- Բուլդոզեր՝ 1 հատ
- Բետոնամղիչ
- Բետոնախառնիչ:

Մթնոլորտ արտանտվող նյութերի հաշվարկ

Գործունեության վայրում անօրգանական փոշու արտանետման առավելագույն սահմանաչափը որոշվում է հետևյալ բանաձևով.

$$Q=\frac{C_1 x C_2 x C_3 x K_5 x N x L x C_7 x q_1}{3600} + C_4 x C_5 x K_5 x q_1^{\,2} x S x n, \text{ գ/վրկ}$$

$$M_{\text{տարի}}=0.0864*M_{\text{վրկ}}*(365-(Tcn+Tд)), \text{ տ/տարի}$$

Որտեղ,

C_1 – գործակից, որը հաշվի է առնում տեղանքում տրանսպորտի միջին բեռունանկությունը

C_2 - գործակից, որը հաշվի է առնում տեղանքում տրանսպորտի տեղաշարժման միջին արագությունը

C_3 - գործակից, որը հաշվի է առնում ճանապարհների վիճակը

K_5 - գործակից, որը հաշվի է առնում նյութի մակերևույթային շերտի խոնավությունը

N- ամբողջ տրանսպորտի վազքընթացների թիվն է ժամում

L- մի վազքի միջին երկարությունն է

C_7 - գործակից, որը հաշվի է առնում մթնոլորտ արտանետվող փոշու բաժնեմասը

q_1 -1կմ վազքի դեպքում փոշու արտանետումները մթնոլորտ

C_4 - գործակից, որը հաշվի է առնում պլատֆորմի մակերեսի նյութի պրոֆիլը

C_5 - գործակից, որը հաշվի է առնում նյութի շրջափչման արագությունը

K_5 - գործակից, որը հաշվի է առնում նյութի մակերևույթային շերտի խոնավությունը

$q_1^{\,2}$ - նյութի փաստացի մակերևույթի միավորից փոշու արտանետումները

S- պլատֆորմայի միջին մակերեսն է ,

n- ավտոմեքենաների առավելագույն թիվն է՝ 2

Tcn – ձնածածկ օրերի թիվն է

Tд – անձրևային օրերի թիվն է

Աղյուսակ 9.

Կատարվող աշխատանքի բնույթը	C_1	C_2	C_3	N	L	C_7	q_1	C_4	C_5	K_5	q_1^2	S	n	Q, գ/վրկ
Մեքենաների շարժը	1	0.6	0.1	2	0,2	0,01	1025	1,3	1.0	0,01	0,002	3	7	0.00054668
Գրունտի հանույթը	1	0.6	0.1	2	0,2	0,01	1025	1,3	1.0	0,01	0.002	1	2	0.00005268
Գրունտի հետլիցք	1	0.6	0.1	2	0,2	0,01	1025	1,3	1.0	0,01	0.002	1	2	0.00005268

Արտանետումների վերջնական տարբերակը ներկայացվում է Աղյուսակ 10-ում

Աղյուսակ 10.

Աշխատանքի բնույթը	Q, գ/վրկ
Մեքենաների շարժը փոշի՝ 70-20% SiO_2)	0.00054668

Գրունտի հանույթը փոշի՝ 70-20% SiO_2)	0.00005268
Գրունտի հետլիցք՝ 70-20% SiO_2)	0.00005268
Արտանետվող փոշու ընդհանուր քանակը	0.00065

Փորման աշխատանքների իրականացման արդյունքում արտանետվելու է անօրգանական փոշի՝ 20-70% SiO_2 պարունակությամբ: Նախատեսվող գործունեության նախագծային տվյալների համաձայն գրունտի հանույթի համար օգտագործվելու է 1 էքսկավատոր՝ համապատասխանաբար 0.2մ^3 աշխատանքային շերեփի տարողությամբ: Ելնելով գործող մեթոդակարգից՝ արտանետվող փոշու ծավալը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$Q=\frac{P_1 \times P_2 \times P_3 \times P_4 \times P_5 \times P_6 \times B_1 \times G \times 10^6}{3600}$$ գ/վրկ

P1 - փոշու ֆրակցիայի բաժնեմասն է, 0,04
P2 0-50 մկմ չափերով մասնիկների բաժնեմասն է տարածվող փոշու աերոզոլում, 0.02
P3 - գործակից, որը հաշվի է առնում շինարարական տեխնիկայի աշխատանքի գոտում քամու արագությունը, 1.2
P4 - գործակից, որը հաշվի է առնում նյութի խոնավությունը, 0.01
P5 - գործակից, որը հաշվի է առնում նյութի խոշորությունը, 0.5
P6 - գործակից, որը հաշվի է առնում տեղանքի պայմանները, 1.0
B1 - գործակից, որը հաշվի է առնում նյութի բեռնաթափման բարձրությունը, 0.5
G վերամշակվող գրունտի քանակն ըստ աշխատանքային շերեփի տարողության՝ 12տ/ժ
Այսպիսով,

$$Q=\frac{0,04 \times 0,02 \times 0.2 \times 0,01 \times 0,5 \times 1 \times 0,5 \times 6 \times 10^6}{3600}= 0,0006$$ գ/վրկ

Մեկանգամյա համախառն արտանետումը (70-20% SiO_2).
M=0,0036 x 0,004 x 72 = 0,001տ/շինժամ

Դիզելային շարժիչով աշխատող մեքենաներից արտանետվող ընդհանուր գազերի և վնասակար նյութերի հաշվարկն իրականացվել է համաձայն գործող մեթոդակարգի: Հաշվարկի բանաձևը արտանետվող գազերի ընդհանուր ծավալի համար իրականացվում է հետևյալ բանաձևով.

$$M'=\frac{G_4*q_i*n*10^3}{3600}$$

Որտեղ, G_4 – դիզ. վառելիքի ժամային ծախսն է
q_i – i-րդ աղտոտող նյութի սահմանային ցուցիչն է՝ տ/վ
n –միաժամանակ աշխատող մեքենաների առավելագույն թիվն է:
Հետևաբար,

$$G_4*q_i*n*10^3$$

M'=----------= 0.026*0.002*3*10^3/3600=0,000043$м^3$ գազային արտանետման ծավալն է:
3600

Դիզելային շարժիչով մեքենաներից արտանետվող վնասակար նյութերի հաշվարկն իրականացվում է հետևյալ բանաձևով.

$$Gi = \sum_{k=1}^{k} (m_{ՍԹԱi} \cdot t_{ՍԹԱ} + 1,3 \cdot m_{ՍԹԱik} \cdot t_{ՍԹԱk}) \cdot N_k / 1800, \text{ г/с}$$

rдe mՍԹԱi – i-րդ նյութի սահմանային արտանետումն է չծանրաբեռնված մեքենայի շարժման ժամանակ գ/ր

1,3 · $m_{ՍԹԱik}$ - i-րդ նյութի սահմանային արտանետումն է ծանրաբեռնված մեքենայի շարժման ժամանակ գ/ր

$t_{ՍԹԱ}$ – մեքենային շարժման ժամանակահատվածն է 30ր. կտրվածքով՝ չծանրաբեռնված ր.

$t_{ՍԹԱk}$ – մեքենային շարժման ժամանակահատվածն է 30ր. կտրվածքով՝ ծանրաբեռնված ր.

N_k – k-րդ խմբի մեքենաների վ միաժամանակ աշխատող մեքենաենների առավելագույն թիվն է

i-րդ նյութի համախառն արտահանման հաշվարկն իրականացվում է հետևյալ բանաձևով.

$$Mi = \sum_{k=1}^{k} (mՍԹԱi \cdot t_{ՍԹԱ} + 1,3 \cdot m_{ՍԹԱik} \cdot t_{ՍԹԱk}) \cdot 10\text{-}6, \text{ տ/տարի}$$

Շինմեքենաների անվանացանկ	Քանակը	Մեկ մեքենայի միջին աշխատաժամանակը							Աշխատանքային օրերի թիվը	Միաժամանակ աշխատող մեքենաների առավելագույն թիվը
		Օր/ժ				30ր/ր				
		ընդամենը	չծանրաբեռնված	ծանրաբեռնված	Ազատ ընթացք	չծանրաբեռնված	ծանրաբեռնված	Ազատ ընթացք		
Բեռնատար ավտոբետոնախառնիչ СБ-69Б	1 (1)	1	0,433	0,5	0, 333	12	13	5	95	+
Բեռնատար ինքնաթափ МАЗ 5550	1 (1)	1	2,875	3,2	1,3	12	13	5	110	+
Մանիպուլյատոր	1 (1)	1	2,875	3,2	1,3	12	13	5	110	+
Բուլդոզեր KOMATSU D37-EX-22	1 (1)	1	2,875	3,2	1,3	12	13	5	110	+

Էքսկավատոր Hyundai 170W	1 (1)	1	2,4	2,6	1	12	13	5	320	+

Աղյուսակ 12.

Դիզելային շարժիչներից արտանետվող նյութի ընդհանուր ծավալը ըստ յուրաքանչյուր աղտոտող նյութի և ըստ աշխատող մեքենայի

Աղտոտող նյութի անվանումը	i-րդ նյութի արտանետման ծավալը միաժամանակ աշխատող առավելագույն թվով մեքենաներից յուրաքանչյուրի համար համաձայն $Gi = \sum_{k=1}^{k} (m_{\text{ստաu}i} \cdot t_{\text{ստաu}} + 1,3 \cdot m_{\text{ստաu}ik} \cdot t_{\text{ստաu}k}) \cdot N_k / 1800$, բանաձևի, գ/վրկ
Ածխածնի օքսիդ	0.000012
Ածխաջրածիններ	0.00002
Ազոտի օքսիդներ	0.000302
Ծծմբի երկօքսիդ	0.0000404
Մուր	0.000055

Իրականացնելով շինարարության ժամանակ աղտոտող նյութերի սահմանայինթույլատրելի արտանետման ծավալների հաշավարկները, ներկայացնենք Աղյուսակ 8-ի տեսքով դրանց ամբողջական վերլուծությունը և նկարագիրը

Աղյուսակ 13.

Շինարարական աշխատանքների փուլերը	Մթնոլորտ վնասակար արտանետումների քանակը, գ/վրկ	ժամանակահատված)							
	Անօրգանական փոշի 70-20% SiO_2	Անօրգանական փոշի > 70 SiO_2	Ածխածնի օքսիդ	Ածխաջրածիններ (CH)	Ազոտի օքսիդներ	Ծծմբի երկօքսիդ	Մուր	Դիմեթիլբենզոլ	Կախյալ մասնիկներ
1	2	3	4	5			6	7	
Շինտեխնիկայի տեղեշարժ	0.00065	-	-	-	-	-	-	-	-
Գրունտի հանույթ/հետլիցք	0.00065								
Փորման աշխատանքներ	0.0006		-	-	-	-	-	-	-
Դիզելային շարժիչից առաջացող արտանետումներ	-	-	0.000012	0.00002	0.000302	0.0000404	0.000055	-	-
Ընդհանուր	0.055481	-	0.000012	0.00002	0.000302	0.0000404	0.000055	-	-

Օդային ավազանի հնարավոր աղտոտվածությունը լինելու է ժամանակավոր և կարճատև, շինարարարական աշխատանքերը տևելու են 4 ամիս:

Հաշվետվությունում նախատեսվում են համապատասխան միջոցառումներ՝ օդային ավազան արտանետումները կանխարգելելու, մեղմելու նպատակով:

6.2 Հողային ռեսուրսներ. Նախատեսվող գործունեության ընթացքում հողային աշխատանքները շատ փոքրածավալ են: Համաձայն նախագծային լուծումների՝ նախատեսվող գործունեության իրականացման համար նախատեսվում է 88մ^3 ծավալի հողային աշխատանքներ, որոնք առաջանալու են ցամաքային հատվածում հենասյուների տեղադրման համար հորատանցքերի փորման արդյունքում: Տարածքի բուսահողային շերտը ավազային խառնուրդով է, ուստի չի տարանջատվելու է հողային գրունտից:

Հողային աշխատանքների արդյունքում կարող են առաջանալ հողային ռեսուրսների աղտոտում քսայուղերի արտահոսք՝ շինտեխնիկայի աշխատանքից: Հողային զանգվածն ամբողջությամբ կուտակվելու է անմիջապես հորատվող մասում, չտարածելով տարածքում, օգտագործվելու է հետլիցքի և հարթեցման համար: Հողային ռեսուրսների վրա ազդեցությունները կբացառվեն հաշվետվությունում նախատեսված միջոցառումների կատարմամբ:

Շահագործման փուլում հողային ռեսուրսների վրա ազդեցություններ չեն նախատեսվում:

6.3 Ջրային ռեսուրսներ. գործունեության իրականացումը պարունակում են ռիսկեր ջրային ռեսուրսի՝ լճի վրա, քանի որ շինարարական աշխատանքները կատարվելու են նաև Արփի լճում: Կարող են առաջացնել լճի ջրերի աղտոտում շինարարական նյութերով և թափոններով: Հողաշինական աշխատանքների պատճառով կարող են առաջացնել լճի ափային հատվածների խախտումներ: Այդ ռիսկերից խուսափելու համար հենասյուների ներկման, հղկման, զոդման աշխատանքները կատարվելու են տարածքից դուրս: Լճում հենասյուները տեղադրվելու են պատրաստի վիճակում: Շինարարական աշխատանքների ժամանակ աշխատողներն օգտվելու են տարածքում առկա հարակից շենքերում առկա ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերից: Գործունեության ընթացքում շինհրապարակ չի ձևավորվում, ուստի ջրցանման աշխատանքներ չեն նախատեսվում:

Շահագործման փուլում ջրային ռեսուրսների աղտոտում հնարավոր է առաջանա մոտորանավակների աշխատանքից, ուստի դրանց կիրառումը պետք է լինի ազգային պարկի վերահսկողությամբ:
Հաշվետվությունում նախատեսվում են բնապահպանական միջոցառումներ և մոնիթորինգ՝ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները բացառելու կամ մեղմելու նպատակով:

6.4 Կենսաբազմազնություն. Արփի լճի տարածքը Ռամսարի կոնվենցիայի համաձայն համարվում է միջազգային կարևորության օբյեկտ, հանգստյան վայր՝ աշնանային և գարնանային շրջանում չվող թռչունների և վերջիններիս բազմացման վայր: Ուստի տարածքի պահպանությունը կարևոր է բուսական և կենդանական աշխարհի պահպանության համար: Նախատեսվող գործունեությունն վայրը չի առնչվում պահպանության տակ գտնվող տարածքների հետ: Գործունեությունն իրականացվելու է ազգային պարկի ռեկրացիոն գոտում, որտեղ համաձայն՝ պարկի կանոնադրության թույլատրվում է. «ռեկրեացիայի նպատակով հողերն օրենքով սահմանված կարգով վարձակալության տրամադրելը և համապատասխան սպասարկման ծառայությունների կազմակերպումը»: Նախատեսվող գործունեության վայրը

գտնվում է «Արփի լիճ» ազգային պարկի «Արևմտյան»տեղամասի ռեկրացիոն գոտում, որտեղ կենդանիների և թռչունների բնադրավայրեր առկա չեն:

Գործունեությունն իրականացվելու է առանց ծառահատումների, պահպանելով տարածքի բնական էկոհամակարգը: Իրականացվելու է շատ կարճ ժամանակմիջոցում, վերահսկվելու է ազգային պարկի կողմից, պահպանելով պարկի գոտուն համապատասխան պահանջները:

Շինարարական տեխնիկայի և սարքերի աշխատանքի արդյունքում առաջացած աղմուկի և թրթռումների մակարդակը կարող է ազդեցություն ունենալ ջրային և ցամաքային կենսաբազմազանության՝ կենդանական աշխարհի վրա:

Շահագործման փուլում կենսաբազմազանության վրա ազդեցություններ չեն նախատեսվում:

Կենսաբազմազանության վրա ազդցեությունները մեղմելու նպատակով հաշվետվությունում նախատեսվում են բնապահպանական միջոցառումներ:

6.5 Թափոններ. Գործունեության իրականացման հետևանքով շինարարության փուլում առաջանալու են կոշտ թափոններ.

- Կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի) (ծածկագիր՝ 91200400 01 00 4) կառուցապատման փուլում՝ 12 կգ/120 օրվա ընթացքում/:
- յուղոտված լաթեր(58200600 01 01 4)՝ մոտ 1կգ:
- Հալանյութի թափոններ/ավտոմատ. կիսավտոմատ եռակցում, տպատախտակների զոդում/՝ (ծածկագիրը՝ 39901500 01 00 5, 5-րդ դաս/- մոտ 18.9կգ ՝

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում մասնակի կատարվելու են զոդման աշխատանքներ: Զոդումը կատարվելու է զոդման ապարատով՝ չոր եղանակով, որի ընթացքում կիրառվելու է չոր խցիկներ, ինչը բացառում է ջրի պղտորման և աղտոտման խնդիրը:

Գործունեության ընթացքում օգտագործվելու են փայտանյութե հենասյուններ, բայց դրանք բերվելու են պատրաստի վիճակում, ուստի փայտանյութի թափոններ չեն առաջանալու:

Կենցաղային աղբի հաշվարկները

Կենցաղային աղբի ծավալը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$M=n*m$$

m – 1 հերթափոխում կենցաղային աղբի ծավալն է մեկ մարդու հաշվով՝ 120կգ/տարի

n – աշխատողների թիվն է,

հետևաբար,

M=12*120=1440կգ/տարի, աշխատելու են 120 օր, աղբի քանակը կկազմի օրական՝ 12կգ/օր հաշվարկն իրականացվել է աշխատողների միաժամանակյա առավելագույն ծանրաբեռնվածությունը հաշվի առնելով:

Շինարարության և շահագործման փուլերում կենցաղային աղբը հավաքվելու է տարածքում առկա աղբահավաք տարողությունների մեջ:

Առաջացող հնարավոր թափոնների բնութագիրը.

- Յուղոտված լաթերը միկրոֆիբիայից կտորներ են, կարող են լինել կտորից ձեռնոցներ, որոնք օգտագործվում են շինարարության մեջ, հնարավոր է աղտոտվում են յուղով կամ կարող են վնասվել: Դյուրավառ են:

- Կենցաղային չտեսակավորված աղբի կազմությունը խառը կենսաբանական և այլ մնացորդներ են, որի տարանջատումը ՀՀ-ում դեռևս չի կատարվում:
- Եռակցման խարամ՝ հալանյութի թափոններ, որոնք առաջանում են մետաղների եռակցման արդյունքում: Պատկանում են 5-րդ դասին, անվտանգ են, կարող են տեղափոխվել աղբավայր:

Գործունեության ընթացքում առաջացող թափոնները համաձայն՝ ՀՀ բնապահպանության նախարարի 2006թ. դեկտեմբերի 25-ի N430-Ն և 2006 թվականի հոկտեմբերի 26-ի N342-Ն հրամանների՝ պատկանում են 4 և 5-րդ դասերին: Վտանգավոր թափոնները պետք է լիցենզավորվեն համաձայն՝ «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի, ուստի վերջիններիս համապատասխան տեսակավորումը և տեղափոխումը պետք է իրականացվի լիցենզավորված կազմակերպությունների կողմից: Առաջացող թափոները կտեսակավորվեն, կառանձնացվեն, կհավաքվեն համապատասխան տարաների և պարկերի մեջ, կհանձնվեն համապատասխան լիցենզավորված կազմակերպություններին կամ համայնքի համաձայնությամբ կտեղափոխվեն աղբավայր:

Շահագործման փուլում կառաջանա միայն կենցաղային աղբ, որը կկուտակվի գոյություն ունեցող աղբամաններում:

Թափոնների ազդեցությունը հողային ռեսուրսների մեջ կանխարգելելու նպատակով շինարարության և շահագործման փուլերում հաշվետվությունում նախատեսվում են համապատասխան միջոցառումներ:

6.6 Պատմամշակութային և բնության հուշարձաններ. Բուն գործունեության տարածքում բացակայում են պատմամշակութային և բնության հուշարձանները:

Գործունեության իրականացման ընթացքում Արդենիս և Բերդաշեն բնակավայրերի վարչական, ինչպես նաև ազգային պարկի տարածքում գտնվող պատմամշակութային արժեքների հետ, ուստի գործունեությունը բացասական ազդեցություն չի ունենալու վերջիններիս վրա:

Միաժամանակ՝ շինարարական աշխատանքների ընթացքում որևէ հնագիտական շերտի կամ հուշարձանի շինարարական աշխատանքներն անմիջապես դադարեցվելու և տեղեկացվելու են համապատասխան պետական մարմնին (Պատմական և մշակութային հուշարձանների պահպանության վարչությանը)՝ համաձայն ՀՀ գործող օրենսդրության հետագա գործողությունները կազմակերպելու համար: Շինարարական աշխատանքները հնարավոր կլինի շարունակել միայն համապատասխան թույլտվության տրամադրման դեպքում:

Շահագործման փուլում Պատմամշակութային և բնության հուշարձանների վրա ազդեցություններ չեն կանխատեսվում:

6.7 Աղմուկ և թրթռում. Շինարարության ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակը կապված է լինելու շինարարական տեխնիկայի, սարքավորումների և տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: ՀՀ-ում աղմուկի մակարդակը կանոնակարգվում է համաձայն՝ ՀՀ Առողջապահության նախարարի 2002թ. մարտի 6-ի՝ «ԱՂՄՈՒԿՆ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐՈՒՄ, ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ» N2-III-11.3 ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ N2-

III-11.3 ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ N 138 հրամանի և ՀՀ Քաղաքաշինության նախարարի 2014թ. մարտի 17-ի՝ ՀՀՇՆ 22-04-2014 «ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՂՄՈՒԿԻՑ» ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2001 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի N 82 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ N79-Ն հրամանի պահանջներին համապատասխան: Ավտոմեքենաների և սարքավորումների աշխատատեղերում աղմուկի մակարդակը գերազանցելու դեպքում աշխատողները պետք է օգտագործեն անհատական պաշտպանական միջոցներ (գլխարկներ, ականջակալներ և այլն):

Շինարարության ընթացքում աղմուկը և թրթռումները կապված են լինելու շինարարական տրանսպորտային միջոցների և սարքավորումների աշխատանքի հետ: Վերջիններս աշխատելու են հերթականությամբ: Գործունեության ենթակա մոտակա բնակելի տնից գտնվում է 138մ հեռավորության վրա: Սակայն գործունեության տարածքը գտնվում է անտառային գոտում, ցանկապատված տարածքում, մեկուսացված բնակելի տներից, որը հանդիսանում է պաշտպանիչ շերտ մեղմելու աղմուկի և թրթռումների հասանելիությունը և ազդեցությունը բնակչության վրա: Բացի այդ նախատեսվող շինարարական աշխատանքները կարճաժամկետ են/4 ամիս/, իսկ հողային աշխատանքները տևելու են 10 օր: Հիմնական աշխատանքները կատարվելու են ջրում, շին. տեխնիկան աշխատելու է ոչ միշտ, ըստ անհրաժեշտության, ուստի աղմուկի մակարդակի հաշվարկ չի կատարվել:
Շինարարության փուլում աղմուկի և թրթռումների մակարդակը նվազեցնելու նպատակով հաշվետվությունում նախատեսվում են միջոցառումներ:

Աշխատելու է միայն փոքր Էքսկավատոր, որն աշխատելու է 10 օր աղմուկի մակարդակը՝ Lաէկվ, կազմում է 80 դԲ: Աղմուկի մակարդակի հաշվարկը կատարվել է համաձայն ՀՀՇՆ 22-04-2014: Տարածքն ամբողջությամբ կանաչապատ է, ինչն ապահովում է պաշտպանիչ էկրանի դերը մոտակա բնակելի տների համար:

Պաշտպանիչ էկրանի արդյունավետությունը հաշվարկում են հետևալ բանաձևով.

Lաղ = 23 lg mէ – 10 դԲ, երբ m ≥ 200 կգ/մ2

Lաղ = 13 lg mէ – 13 դԲ, երբ m ≤ 200 կգ/մ2

Որտեղ m = Km – մակերեսի խտության էկվիվալենտն է,

m – մակերեսի խտությունն է, կգ/մ2,

K –գործակից է , որը հաշվի է առնում պատնեշի խտությունը, որը

200կգ/մ2 K=1,3

M = 1,3 x 200=260

Lաղ = 13lg mէ -13 = 18,2 դԲ

Շինությունից դուրս աղմուկի մակարդակը կկազմի՝

LAտար = LAէկվ - Lաղ = 80– 18,2 = 61,8 դԲ

Հարակից բնակելի շինությունների պատերը, պատուհանները, մուտքի դռները, տանիքը, կանաչապատ տարածքը հադիսանում են որպես պաշպանիչ էկրան: Ձայնամեկուսացումը RԱտր ըստ աղուսյակ 16-ի՝ կազմում է միջինը 50 դԲ:

LAտար = 61,8 – 50 = 11,8 դԲ

Մոտակա հասարակական շինությանների ներսում աղմուկի մակարդակն էքսկավատորի աշխատանքի դեպքում կկազմի 11,8 դԲ, ինչը նորմայից բավականին ցածր է: Աշխատանքներն իրակացվելու են միայն ցերեկային ժամերին:

Շինարարական աշխատանքների ընթացքում թրթռման հիմնական աղբյուրը հանդիսանալու է թեթև հողային աշխատանքների համար նախատեսված 1 փոքր էքսկավատորը: Հարվածային և բարձր ինտենսիվության թրթռումներ առաջացնող սարքավորումների կիրառություն չի նախատեսվում:

Մոտակա բնակելի տունը գտնվում է շինարարական հրապարակից 138 մ հեռավորության վրա: Թրթռման տարածման նախնական հաշվարկի համաձայն՝ ընդունելով 10 մ հեռավորության վրա թրթռման առավելագույն արագությունը 2 մմ/վ և մարման գործակիցը՝ 1.5, բնակելի տան մոտ թրթռման հաշվարկային արագությունը կազմում է շուրջ 0.039 մմ/վ:

Հաշվի առնելով աշխատանքների բնույթը, տեխնիկայի սահմանափակ քանակը և բնակելի տան հեռավորությունը՝ թրթռման ազդեցությունը գնահատվում է որպես ցածր և ոչ էական:

Շահագործման փուլում աղմուկի և թրթռումների ազդեցություն չի նախատեսվում, ելնելով գործունեության բնույթից:

6.8.Արտակարգ իրավիճակներ. Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում հնարավոր են արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերի առաջացում, կապված՝

- բնական աղետների (պայմանավորված երկրաշարժով, սողանք, ջրհեղեղ և այլն) և անբարենպաստ օդերևութաբանական պայմանների փոփոխության (քամու ուժեղացում, փոթորիկ):
- Աշխատանքի ընթացքում շահագործվող շինտեխնիկայի հնարավոր վթարային իրավիճակների:
- Հրդեհների առաջացման, հեղուկ նյութերի արտահոսքի հետ:

Արատակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերը գնահատելու, կանխարգելու համար կառուցապատումը պետք է կատարել, ելնելով ՀՀ-ում գործող համապատասխան նորմերի, սկզբունքների, պարտադիր պահանջներից: Ազգային պարկում կատարվող աշխատանքերը

պետք է բխեն Հատուկ պահպանվող տարածքների համար ՀՀ օրենքի և կառավարության որոշման պահանջներով:

Շինարարության և շահագործման փուլերում արտակարգ իրավիճակների հետևանքով հնարավոր ազդեցությունները նվազեցնելու նպատակով հաշվետվությունում նախատեսվում են բնապահպանական միջոցառումներ:

6.9 Մարդու առողջության վրա հնարավոր ազդեցությունները, գործոնները, ռիսկերը. (Աշխատանքի կազմակերպում և անվտանգություն). Գործունեության իրականացման ընթացքում հնարավոր են մարդու առողջությանը և աշխատանքի անվտանգությանը սպառնացող վտանգներ՝ կապված.

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ քաղաքաշինական, առողջապահական, բնապահպանական և այլ նորմերի խախտման:
- Թափոնների հավաքման, կուտակման, տեղափոխման, օգտագործվող նյութերի օգտագործման, պահպանման, տեղափոխման:
- Շինտեխնիկայի շահագործման, արտակարգ իրավիճակների առաջացման:
- Շինարարության ընթացքում ոչ բավարար աշխատանքային պայմանների, մարդու անվտանգությանը, առողջությանը սպառնացող այլ երևույթների հետ:

Շինաշխատանքները կկատարվեն պահպանելով շինարարության ժամանակացույցը և աշխատանքի անվտանգության կանոններն՝ ըստ ՇՆևԿ-3-480* նորմերի:

Մարդու առողջության և աշխատանքի անվտանգության ռիսկերը նվազեցնելու նպատակով հաշվետվությունում նախատեսվում են բնապահպանական միջոցառումներ՝ շինարարության և շահագործման փուլերում:

6.10 Սոցիալական գործոններ. Ազգային պարկում նախատեսվող գործունեության իրականացումը կնպաստի Ազգային պարկ այցելուների և զբոսաշրջիկների համար ավելի նպաստավոր պայմանների ստեղծմանը, ավելացմանելով համայնքում զբոսաշրջային հնարավորությունների զարգացմանը:

Գործունեության իրականացումն ունենալու է տարածաշրջանի համար որոշակի դրական ազդեցություն, քանի որ այն կխթանի էկոտուրիզմի, զբոսաշրջության զարգացմանը, հետևաբար և համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական պայմանների բարելավմանը:

Շինարարական աշխատանքներին ներգրավվելու են 12 մարդ, որից 2 ինժեներ՝ մասնագետներ և բանվորներ՝ 12 մարդ: Ներգրավվելու են հիմնականում համայնքի բնակիչները, որոնք տարածք են հասնելու սեփական տրանսպորտային միջոցներով: Աշխատելու են 6 օր՝ 8 ժամյա աշխատանքային գրաֆիկով:

Շահագործման փուլ. շահագործման փուլում որպես նավամատույցը սպասարկող անձնակազմ ներգրավելու են 2 մարդ:

6.11 Լանդշաֆտ. Գործունեության իրականացումը լանդշաֆտի վրա ունենալու է ոչ էական ազդեցություն, որոշակի ազդեցություն կունենա լճային լանդշաֆտի վրա, առաջացնելով

որոշակի լրացուցիչ ծանրաբեռնվածություն: Նախատեսվող կառուցապատումը կատարվելու է ժամանակակից նյութերով, թեթև կոնստրուկցիաներով, պահպանելով ազգային պարկի և լճի էկոհամակարգը, լճի ափերի փոփոխությունները:

Շինարարության փուլում լանդշաֆտի վրա ազդեցությունը մեղմելու նպատակով հաշվետվության բնապահպանական կառավարման պլանով նախատեսված են միջոցառումներ:

6.12 Բարեկարգում և կանաչապատում. Կառուցապատման ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում, թափոնների, քարերի հեռացում, տարածքի հնարավորինս նախկին տեսքի բերում, ճանապարհի կարգաբերում: Տարածքում լրացուցիչ կանաչապատում չի նախատեսվում, քանի որ այն ազգային պարկի տարածք է:

7.Շրջակա միջավայրի, մարդու առողջության վրա վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումները(Բնապահպանական կառավարման պլան)

Նախատեսվող գործունեության գնահատման հաշվետվությունում նախատեսվում է Բնապահպանական կառավարման պլան, որը սահմանում է Շիրակի մարզի Ամասիա համայնքի, «Արփի լիճ»ԱՊ-ի վարչական տարածքում էստակադի և նավամատույցի կառուցման հետևանքով շրջակա միջավայրի բաղադրիչների՝ օդային ավազան, հողային, ջրային ռեսուրսների, կենսաբազմազանության, արտակարգ իրավիճակների, աղմուկի մակարդակի, ինչպես նաև թափոնների կառավարման, մարդու առողջության և աշխատանքի անվտանգության հետ կապված հնարավոր ազդեցությունների մեղմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ: Շինարարության և շահագործման փուլերում նախատեսվող միջոցառումների ճիշտ կիրառման արդյունքում գործունեության իրականացման հետևանքները շրջակա միջավայրի վրա կլինեն նվազագույնը:

7.1.Օդային ավազան.

Գործունեության իրականացման ընթացքում շինհրապարակ չի ձևավորվում, ուստի օդային ավազանի հնարավոր ազդեցությունը մեղմելու համար նախատեսվող միջոցառումները համապատասխանեցվել են գործունեության բնույթին: Օդային ավազան արտանետումների քանակը մեղմելու, մթնոլորտային օդի որակի վրա հնարավոր ազդեցությունը կրճատելու նպատակով նախատեսվում է.

- օդի դրական ջերմաստիճանի դեպքում շինարարական հրապարակը, բացառությամբ վերանորոգվող և վերակառուցվող փողոցների, օրվա ընթացքում պարբերաբար ջրել՝ բացառելով կեղտաջրերի թափանցումը շինարարական հրապարակի սահմաններից դուրս:
- Ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև

շինարարական աղբը տեղափոխել փոշու համար անթափանց ծածկոցներով ծածկված տրանսպորտային միջոցներով:

- Ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը պահեստավորել փակ տարածքներում կամ ծածկել անթափանց թաղանթներով:
- Շինարարական աղբը տեղափոխել դրանց հեռացման համար հատուկ հատկացված վայրեր և հատուկ սահմանված երթուղով:
- Բացառել տարածքում թափոնների բաց այրումը:
- Բացառել անսարք վիճակում գտնվող և արտահոսքեր ունեցող մեքենաների օգտագործումը: Այդ նպատակով իրականացվելու են պարբերաբար ստուգումներ:
- Անհրաժեշտության դեպքում կիրառել փոշեորսիչ և փոշեճնշիչ սարքավորումներ՝ համաձայն քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2026 թվականի հունվարի 15-ի «ՀՀՇՆ 13-05-2026 «շինարարական արտադրության կազմակերպում» Հայաստանի Հանրապետության շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2008 թվականի հունվարի 14-ի N11-Ն ու Հայաստանի հանրապետության քաղաքաշինության նախարարի 2008 թվականի հունվարի 14-ի N07-ն հրամաններն ուժը կորցրած ճանաչելու մասին» N02-Ն հրամանի պահանջների:
- Բացառել էկոլոգիապես վնասակար, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված թույլատրելի նորմերը գերազանցող արտանետումներ առաջացնող տեխնոլոգիաների օգտագործումը:

7.2. Հողային ռեսուրսներ.

Հողային ռեսուրսների վրա հնարավոր ազդեցությունները և վերջինիս մեջ վտանգավոր նյութերի և քսայուղերի ներթափանցումը կանխելու նպատակով նախատեսվում է.

- Հողային զանգվածն ամբողջությամբ կուտակել անմիջապես հորատվող մասում, չտարածելով տարածքում՝ ծածկված վիճակում:
- Հողային զանգվածն օգտագործել հետլիցքի և հարթեցման համար:
- Շինարարական տեխնիկան կայանել միայն գրունտային ճանապարհին:
- Մեքենաների տեղակայումը կատարել համաձայն ԱՊ-ի կանոնադրության՝10-րդ կետի պահանջներին համապատասխան/10) տրանսպորտային միջոցների մուտքն ու կանգառը՝ այդ նպատակով առանձնացված վայրերում/:
- Բուն գործունեության տարածքում յուղի, վառելիքի կամ այլ վտանգավոր հեղուկների պահման տեղամասեր չնախատեսել:
- Շինարարական նյութերի օգտագործման դեպքում դրանք տեղադրել հատուկ տակդիրների վրա:
- Բացառել տարածքում վտանգավոր նյութերի պահեստավորումը:
- Շինարարության փուլում օգտագործվող տրանսպորտային միջոցների լիցքավորումը և տեխնիկական սպասարկումը կատարել տարածքից դուրս՝ հատուկ մասնագիտացված կազմակերպություններում:

- Բացառել, առանց ԱՊ-ի համաձայնության, ընդհանուր օգտագործման ճանապարհներից և ջրային ուղիներից դուրս շարժիչային և թրթուրավոր տրանսպորտային միջոցների երթևեկությունն ու կանգառը:

7.3 Ջրային ռեսուրսներ.

Գործունեության իրականացման շինարարության փուլում ջրային ռեսուրսների վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու կամ կանխարգելու, նպատակով նախատեսվում է.

- Բացառել լճի ափային հատվածների փոփոխությունները:
- Բացառել ջրային ռեժիմը խախտող ցանկացած գործունեություն:
- Շինարարական աշխատանքների կատարման ժամանակ պահպանել լճի ջրի որակական հատկությունները:
- Օգտագործել միայն լիցենզավորված նյութեր և տեխնոլոգիաներ՝ Լճի որակական կազմի փոփոխությունն բացառելու համար:
- Ջրի տակ եռակցման աշխատանքները կատարել հատուկ որակավորում ունեցող ջրասուզակ-եռակցողների կողմից:
- Եռակցումը կատարել չոր եղանակով՝ չոր խցիկների (հիպերբարիկ) կիրառմամբ, ինչը բացառում է ջրի պղտորման և աղտոտման խնդիրը:
- Եռակցման ժամանակ կիրառել մեխանիկական ֆիլտրում, որի ժամանակ ջուրը անցնում է ցանցերի, ավազի կամ մեմբրանների միջով, կլանելով եռակցման ժամանակ առաջացող մետաղական փոշին, շլակները, կոշտ մասնիկները:
- Բացառել էկոլոգիապես վնասակար, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված թույլատրելի նորմերը գերազանցող և կեղտաջրեր առաջացնող տեխնոլոգիաների օգտագործումը:
- Բոլոր փայտյա մասերը նախօրոք՝ մինչև տարածք բերելը պատել հականեխիչ շերտով, իսկ մետաղական մասերը՝ հակակոռոզիոն նյութերով:
- Ձոդման, ջրամեկուսացման, և ներկման աշխատանքները անհրաժեշտ է իրականացնել ԱՊ տարածքից դուրս:
- Բացառել տրանսպորտային միջոցների և սարքավորումների լիցքավորումը տարածքում:
- Շինարարական տրանսպորտային միջոցների և սարքավորումների, ինչպես նաև բետոնամղիչ, բետոնային սարքավորումների սպասարկումը, լվացումը կատարել ԱՊ-ի և հարակից տարածքից դուրս՝ համայնքում գործող մասնագիտացված կետերում:
- Շինարարության համար բետոնախառնուրդը բերել պատրաստի վիճակում՝ բետոնախառնիչ մեքենաներով՝ պայմանագրային հիմունքներով:
- Շինտեխնիկայի լվացումը կատարել տարածքից դուրս
- Շինարարական աշխատանքների ավարտից հետո վերականգնել տարածքը, բացառելով լճի ափային հատվածների փոփոխությունները:

Կեղտաջրեր. Կեղտաջրերի հեռացման համար նախատեսվում է.

- Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում բանվորները պետք է օգտվեն միայն տարածքում առկա կեղտաջրերի հեռացման համակարգերից:

- Բացառել բացօթյա տարածքների օգտագործումը սանիտարա-հիգենիկ կարիքների բավարարման համար:

Շահագործման փուլ.

- Լճի վրա զբոսաշրջությունը կազմակերպել ԱՊ ՊՈԱԿ-ի հսկողությամբ՝ նախապատվությունը տալով թիավոր նավակներին:

7.4 Կենսաբազմազանություն.

Գործունեության և հարակից տարածքների կենսաբազմազանության պահպանման նպատակով նախատեսվում է .

- գոյություն ունեցող ծառերի և կանաչ տարածքների պահպանում:
- Բացառել ցանկացած այլ գործունեություն, որը կխախտի ԱՊ-ի բնական համակարգերը և սպառնում է դրանց պահպանությանը:
- Գործունեության և հարակից տարածքներում ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակների նոր պոպուլյացիաների կամ կենդանիների բնադրավայրերի հայտնաբերման դեպքում դադարեցնել շինարարական աշխատանքները, մինչև դրանց վերատնկումը առանձնացված հատուկ պահպանման գոտում:
- Բացառել բուսերի աճելավայրերի և կենդանական աշխարհի ներկայացուցիչների բնակության միջավայրի պայմանների խախտումը:
- Շինարարական աշխատանքներն իրականացնել բացառապես ցերեկային ժամերին՝ որոշ կենդանիների կենսակերպի վրա ազդեցությունից խուսափելու համար:
- Հնարավորինս նվազեցնել տարածքի գիշերային լուսավորությունը՝ կենդանիների որոշ տեսակների բնականոն վարքին չխանգարելու նպատակով:

Շահագործման փուլ.

- Էստակադայի և նավամատույցի տարածքում ապոհվել նվազագույն լուսավորություն՝ կենդանիների բնականոն վարքին չխանգարելու նպատակով:
- Զբոսաշրջության կազմակերպումը կատարել հաշվի առնելով «Կենդանաբանության և Հիդրոլոգիայի Գիտական Կենտրոն»-ի մասնագիտական կարծիքը, Լճի վրա զբոսաշրջությունը կազմակերպել հաշվի առնելով լճում ջրի մակարդակի տատանումների ազդեցությունը Արփի լճում ձկնաշխարհի և առափնյա ափերում բազմացող թռչնաֆաունայի վրա:
- Սահմանափակել զբոսաշրջային նավակների ուղեգիծը մարտից-հունիս ամիսների ընթացքում՝ կապված ձվադրության և ձագերի աճեցման ժամանակահատվածի հետ:
- Կառոցվող նավամատույցի մոտ տեղադրել տեղեկատվության ցուցանակներ, ԱՊ-ի և Արփի լճում կենդանական և բուսական աշխարհի, մարդկանց համապատասխան վարքագծի դրսևորման պահանջներով:
- Նավակների շահագործումը իրականացնել հատուկ թույլտվությամբ և էլ. անաղմուկ շարժիչներով և թիերով:

7.5 Թափոններ.

Շինարարության փուլում առաջացած թափոնների հնարավոր ազդեցությունները հողային և ջրային ռեսուրսների վրա մեղմելու նպատակով նախատեսվում է.

- շինարարական աշխատանքների ժամանակ գործունեության xտարածքը և շրջակա միջավայրը զերծ պահել թափոնների կուտակումներից:
- Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող շինարարական թափոնների պահեստավորում չնախատեսել:
- Շինարարական թափոնները՝ զոդման փոշի, բետոնյա մնացորդներ, պարկեր տարանջատել, առանձնացնել համապատասխան անջրթափանց տարաների կամ պարկերի մեջ ՝ մինչև կտեղափոխվեն համայնքի կողմից հատկացված վայր, կամ կհանձնվեն մասնագիտացված կազմակերպություններին:
- Կենցաղային աղբի հեռացումը կատարել կանոնավոր՝ ըստ անհրաժեշտության, համապատասխան պայմանագրի հիման վրա:
- Բացառել աղբի կուտակումը շիհրապարակից դուրս՝ կանաչապատ տարածքներում:
- Յուղոտված լաթերը հանձնել մասնագիտացված կազմակերպություններին:

7.6 Աղմուկ և թրթռում.

Շինարարության ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակը նվազեցնելու նպատակով նախատեսվում է.

- Վերահսկել շինտեխնիկայի աղմուկի և թրթռումների մակարադակը:
- Շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպվել ցերեկային ժամերին:
- Տրանսպորտային միջոցները և սարքերն օգտագործել սարքին վիճակում:
- Պարբերաբար ստուգել և կարգաբերել տրանսպորտային միջոցների շարժիչները:

7.7 Արտակարգ իրավիճակներ.

Գործունեության իրականացման ընթացքում արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերը մեղմելու և դրանց առաջացումը կանխարգելելու նպատակով նախատեսվում է.

- ապահովել ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման պահանաջների կատարումը:
- Տարածքն ապահովել հակահրդեհային հիդրատներով, կրակմարիչներով և շանթարգելներով:
- Նյութերը տեղափոխել շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահել հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:
- Աշխատաքները կատարել միայն որակավորված մասնագետների միջոցով, ելնելով կատարվող աշխատաքների բնույթից:
- Ջրի տակ եռակցման աշխատանքները կատարել համապատասխան սարքվորումներով՝ հատուկ մասնագետի կողմից համապաատսխան հագուստով՝ դիմակ, մեկուսիչ ձեռնոցներ, հիդրոկոստյում, էլեկտրահարման վտանգից խուսափելու համար:
- Ապահովել ջրում հիմքերի տեղադրման հաշվարկային խորությունը, ամրությունը:
- Աշխատանքները կատարել ցերեկային ժամերին:

- Մթնոլորտային տեղումների, քամու ուժեղացման և այլ վտանգավոր երևույթների ժամանակ շինարարական աշխատանքները դադարեցնել:

Շահագործման փուլ.

- Տարածքն ապահովել հակահրդեհային, արտաքին լուսավորության համակարգերով, ելնելով ազգային պարկի հրդեհանվտանգության անհրաժեշտությունից:
- Նավամատույցի վրա այցելուների ծանրաբեռնվածության վերահսկողություն ԱՊ-ի կողմից:

7.8 Պատմամշակութային և բնության հուշարձաններ.

Շինարարական աշխատանքների ընթացքում գործունեության ենթակա և մոտակա տարածքներում որևէ հնագիտական շերտի կամ հուշարձանի հայտնաբերման դեպքում շինարարական աշխատանքներն անմիջապես դադարեցնել և տեղեկացնել համապատասխան պետական մարմնին (Պատմական և մշակութային հուշարձանների պահպանության վարչությանը)՝ համաձայն ՀՀ գործող օրենսդրության հետագա գործողությունները կազմակերպելու համար: Շինարարական աշխատանքները հնարավոր կլինի շարունակել միայն համապատասխան թույլտվության տրամադրման դեպքում:

7.9 Մարդու առողջություն. Աշխատանքի կազմակերպում և անվտանգություն .

Շինարարության փուլում աշխատողների աշխատանքի կազմակերպման և աշխատանքի անվտանգությունն ապահովելու համար նախատեսվում է.

- պահպանել ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը, ՀՀ Առողջապահության նախարարության 2012թ. սեպտեմբերի 19-ի «Կազմակերպություններում աշխատողների սանիտարականկենցաղային սենքերի» N 2.2..8-003-12 սանտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին թիվ 15-Ն հրամանի պահանջները:
- Մինչև աշխատանքների սկիզբը բոլոր աշխատողները, հատկապես ջրում աշխատողները պետք է անցնեն հրահանգավորում՝ ըստ աշխատանքի անվտանգության կանոնների:
- Աշխատողներին ապահովել 1-ին բուժօգնության համար անհրաժեշտ դեղարկղիկով, անհատական պաշտպանական միջոցներով (արտահագուստ, դիմակ և այլն):
- Աշխատողների համար նախատեսել սանիտարական և հանգստի պայմաններ, որը ապահովված է լինելու անհրաժեշտ կահավորանքով (լվացարան, աթոռ, սեղան և այլն):
- Վերահսկել աշխատող սարքավորումների պիտանելիությունը, մեքենաների երթերը, հաջորդականությունը, բացառել մեքենաների կուտակումները:
- Նվազագույնի հասցնել ճանապարհների խցանումներ առաջացնող գործողություններն՝ ընդհանուր երթևեկության խոչընդոտումը՝ հասարակական անվտանգությունն ապահովելու նպատակով:
- Ապահովել բավորներին շնչառական սարքավորումով՝ խորը ջրերի դեպքում՝ անհրաժեշտ թթվածնով մատակարարման համար:

Շահագործման փուլ.

- Ապահովել այցելուների ծանրաբեռնվածության վերահսկողությունը՝ նավամատույցի վրա, ելնելով մարդու անվտանգության ապահովման անհրաժեշտությունից:

7.10 Սոցիալական գործոններ.

Նավամատույցի և էստակադայի կառուցումն ունենալու դրական ազդեցություն, քանի որ նպաստելու է բնակչության հանգստի կազմակերպմանը՝ «Արփի լիճ» ԱՊ-ի տարածքում: Շինարարության փուլում սոցիալական բացասական ազդեցություններից խուսափելու համար, շինարարական աշխատանքների ընթացքում պահպանել համապատասխան շին. նորմերի պահանջները, նախատեսված բնապահպանական միջոցառումների կատարումը:

Գործելու է բողոքների արձագանքման ընթացակարգը:

- Մեծանալու է ԱՊ-ի գրավչությունը զբոսաշրջիկների համար:
- Բացվելու են նոր աշխատատեղեր՝ 12 մարդու համար:
- Կմեծանա զբոսաշրջությունը, հետաքրքրությունը ԱՊ-ի նկատմամբ, խթանելով ԱՊ-ի և հարակից բնակավայրերի բնակիչների եկամուտների ավելացմանը:

7.11 Լանդշաֆտ. բարեկարգում, կանաչապատում.

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է.

- չխախտել և չվտանգել պարկի բնական էկոհամակարգերը:
- Չխաթարել գիտական ու մշակութային արժեք ներկայացնող օբյեկտների պահպանությունը:
- Շինարարական աշխատանքների ավարտից հետո կատարել գործունեության ենթակա տարածքների հարթեցման, բարեկարգման աշխատանքներ:
- Տարածքը մաքրել թափոններից, կենցաղային աղբից, քարերից:

Կանաչապատում. Լճի ափամերձ հատվածը կանաչապատ է խոտաբույսերով: Ազգային պարկի բնական վերաճով պայմանավորված լրացուցիչ կանաչապատման աշխատանքներ չեն նախատեսվում:

8.Նախատեսվող գործունեության կատարման ընթացքում Մոնիթորինգի իրականացում.

Մոնիթորինգը նախատեսվում է նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում նախատեսվող բնապահպանական միջոցառումների կատարման, դրանց արդյունավետությունը ստուգելու նպատակով: Մոնիթորինգի շրջանակներում վերահսկողությունը կատարվում է Պատվիրատուի և այլ հսկողություն իրականացնող այլ մարմինների կողմից**:**

Մոնիթորինգի նպատակով նախատեսվում է.

- Գործունեության իրականացման ընթացքում բնապահպանական, առողջության և աշխատանքային անվտանգության, տեխնիկական վերահսկողության իրականացում՝

ամենօրյա ռեժիմով:

- ԱՊ-ի համապատասխան մասնագետների կողմից ստուգայցերի իրականացում:
- Առաջնորդվելով «Ջրային Օրենսգրքի հոդված 19-ի պահանջներից շինարարության ընթացքում ապահովել.
  - ջրային ռեսուրսների որակական ցուցանիշների մոնիթորինգ,
  - ջրային ռեսուրսների վրա մարդածին ազդեցությունների հետևանքների, ներառյալ՝ աղտոտման հետևանքները կանխելու համար:
- Կից տարածքներում ՀՀ Կարմիր գրքում կենդանիների բնադրավայրերի հայտնաբերման նպատակով մշտադիտարկումների կատարում՝ համապատասխան մասնագետի ներգրավմամբ:
- Գործունեության տարածքում շինարարական աշխատանքների կատարման ժամանակ պարբերաբար կատարել մոնիթորինգ, առաջնորդվելով ՀՀ կառավարության 31.07.2014թ. «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N781-Ն որոշման պահանջներից՝ ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների պոպուլիացիաների հայտնաբերման և դրանց պահպանության նպատակով:
- Բոլոր աշխատողների աշխատանքի անվտանգության և արտակարգ իրավիճակների ընթացակարգի վերահսկում:
- Շինարարության կանոնները և անձնական պաշտպանության նորմերի պահպանման վերահսկում:
- Համապատասխան պայմանագրերի հիման վրա թափոնների տեղափոխման վերահսկում:
- Շին տեխնիկայի և մեքենաների համապատասխան տեխնիկական վիճակի պարբերաբար ստուգումներ՝ անսարք վիճակում գտնվող և արտահոսքեր ունեցող մեքենաների օգտագործումը բացառելու նպատակով:
- Շինարարության իրականացման ժամանակացույցի պահպանման վերահսկում:

Հաշվետվությունում ներառված՝ ԲՍԿՊ-ում և մոնիթորինգի պլանում առաջարկվող բոլոր մեղմող միջոցառումների իրականացնելու դեպքում գործունեությունը կարող է իրականացվել առանց շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա զգալի բացասական ազդեցության:

Շինարարության ընթացքում բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի համար ընկերությունը նախատեսում կատարել մոտ 600.0 հազար դրամի ծախս:

9.Բողոքների ընթացակարգ.

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում կներդրվի բողոքների արձագանքման մեխանիզմ (ԲԱՄ), որը հիմնականում ուղղված կլինի շահագրգիռ կողմերի և ազդակիր հասարակության կողմից իրականացվող գործունեության վերաբերյալ դժգոհությունների ստացմանը, գնահատմանն ու լուծմանը:

Այդ նպատակով շինարարական տեղամասերում անհրաժեշտ է ապահովել շինարարության վերաբերյալ տեղեկատվական ցուցանակների տեղադրումը, որը

կպարունակի՝ կառուցապատման օբյեկտի էսքիզային պատկերը, պատվիրատուի, կառուցապատողի կոնտակտային տվյալները, տեխնիկական վերահսկողություն իրականացնող անձանց և անվտանգության պատասխանատուի անուն(ները), հեռախոսահամարները ճարտարապետահատակագծային առաջադրանքի տրամադրման համարը, ամսաթիվը, շինթույլտվության համարը, շինարարական աշխատանքների սկիզբը և ավարատը, օբյեկտի հարկայնությունը, նպատակային նշանակությունը :

10.Բնապահպանական միջոցառումների կառավարման պլան.

Աղյուսակ 14.

№	Արտադրական գործընթացում ազդեցության ենթակա շրջակա միջավայրի բաղադրիչները և ազդող գործոնները	Մեղմող միջոցառման անվանումը	Միջոցառման իրականացման պատասխանատու	Վերահսկող
1	**Օդային ավազան**	Օդային ավազան արտանետումների քանակը մեղմելու, մթնոլորտային օդի որակի վրա հնարավոր ազդեցությունը կրճատելու նպատակով նախատեսվում է. • օդի դրական ջերմաստիճանի դեպքում շինարարական հրապարակը, բացառությամբ վերանորոգվող և վերակառուցվող փողոցների, օրվա ընթացքում պարբերաբար ջրել՝ բացառելով կեղտաջրերի թափանցումը շինարարական հրապարակի սահմաններից դուրս: • Ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը տեղափոխել փոշու համար անթափանց ծածկոցներով ծածկված տրանսպորտային միջոցներով: • Ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը պահեստավորել փակ տարածքներում կամ ծածկել անթափանց թաղանթներով: • Շինարարական աղբը տեղափոխել դրանց հեռացման համար հատուկ հատկացված վայրեր	**Կապալառու**	«Արփի Լիճ»ԱՊՊՈԱԿ

		և հատուկ սահմանված երթուղով: • Բացառել տարածքում թափոնների բաց այրումը: • Բացառել անսարք վիճակում գտնվող և արտահոսքեր ունեցող մեքենաների օգտագործումը: Այդ նպատակով իրականացվելու են պարբերաբար ստուգումներ: • Անհրաժեշտության դեպքում Փոշեորսիչ և փոշեճնշիչ սարքավորումների կիրառում՝ համաձայն քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2026 թվականի հունվարի 15-ի «ՀՀՇՆ 13-05-2026 «Շինարարական արտադրության կազմակերպում» Հայաստանի Հանրապետության շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2008 թվականի հունվարի 14-ի N11-Ն ու Հայաստանի հանրապետության քաղաքաշինության նախարարի 2008 թվականի հունվարի 14-ի N07-ն հրամաններն ուժը կորցրած ճանաչելու մասին» N02-Ն հրամանի պահանջների: • Բացառել էկոլոգիապես վնասակար, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված թույլատրելի նորմերը գերազանցող արտանետումներ առաջացնող տեխնոլոգիաների օգտագործումը:		
2.	**Հողային ռեսուրսներ**	Հողային ռեսուրսների վրա հնարավոր ազդեցությունները և վերջինիս մեջ վտանգավոր թերի և քսայուղերի ներթափանցումը կանխելու նպատակով նախատեսվում է. • Հողային զանգվածն ամբողջությամբ կուտակել անմիջապես հորատվող մասում,	**Կապալառու**	«Արփի Լիճ»ԱՊ ՊՈԱԿ

		չտարածելով տարածքում՝ ծածկված վիճակում: • Հողային զանգվածն օգտագործել հետլիցքի և հարթեցման համար: • Շինարարական տեխնիկան կայանել միայն գրունտային ճանապարհին: • Բուն գործունեության տարածքում յուղի, վառելիքի կամ այլ վտանգավոր հեղուկների պահման տեղամասեր չնախատեսել: • Շինարարական նյութերի օգտագործման դեպքում դրանք տեղադրել հատուկ տակդիրների վրա: • Բացառել տարածքում վտանգավոր նյութերի պահեստավորումը: • Շինարարության փուլում օգտագործվող տրանսպորտային միջոցների լիցքավորումը և տեխնիկական սպասարկումը կատարել տարածքից դուրս՝ հատուկ մասնագիտացված կազմակերպություններում: • Բացառել, առանց ԱՊ-ի համաձայնության, ընդհանուր օգտագործման ճանապարհներից և ջրային ուղիներից դուրս շարժիչային և թրթուրավոր տրանսպորտային միջոցների երթևեկությունն ու կանգառը:		
3	**Ջրային ռեսուրսներ**	Գործունեության իրականացման շինարարության փուլում ջրային ռեսուրսների վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու կամ կանխարգելու, նպատակով նախատեսվում է.	**Կապալառու**	«Արփի Լիճ»ԱՊ ՊՈԱԿ

		• Բացառել լճի ափային հատվածների փոփոխությունները: • Բացառել ջրային ռեժիմը խախտող ցանկացած գործունեություն: • Շինարարական աշխատանքների կատարման ժամանակ պահպանել լճի ջրի որակական հատկությունները: • Օգտագործել միայն լիցենզավորված նյութեր և տեխնոլոգիաներ՝ Լճի որակական կազմի փոփոխությունն բացառելու համար: • Բացառել էկոլոգիապես վնասակար, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված թույլատրելի նորմերը գերազանցող և կեղտաջրեր առաջացնող տեխնոլոգիաների օգտագործումը: • Բոլոր փայտյա մասերը նախօրոք՝ մինչև տարածք բերելը պատել հականեխիչ շերտով, իսկ մետաղական մասերը՝ հակակոռոզիոն նյութերով: • Ձոդման, ջրամեկուսացման, և ներկման աշխատանքները անհրաժեշտ է իրականացնել ԱՊ տարածքից դուրս: • Բացառել տրանսպորտային միջոցների և սարքավորումների լիցքավորումը տարածքում: • Շինարարական տրանսպորտային միջոցների և սարքավորումների սպասարկումը կատարել համայնքում գործող մասնագիտացված կետերում: • Շինարարության համար բետոնախառնուրդը բերել պատրաստի վիճակում՝ բետոնախառնիչ մեքենաներով՝ պայմանագրային հիմունքներով:		

		• Շինարարական աշխատանքների ավարտից հետո վերականգնել տարածքը, բացառելով լճի ափային հատվածների փոփոխությունները: Կեղտաջրեր. Կեղտաջրերի հեռացման համար նախատեսվում է. • Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում բանվորները պետք է օգտվեն միայն տարածքում առկա կեղտաջրերի հեռացման համակարգերից: • Բացառել բացօթյա տարածքների օգտագործումը սանիտարա-հիգենիկ կարիքների բավարարման համար: Շահագործման փուլ. • Լճի վրա զբոսաշրջությունը կազմակերպել ԱՊ ՊՈԱԿ-ի հսկողությամբ՝ նախապատվությունը տալով թիավոր նավակներին:		
4	**Կենսաբազմազանություն.**	• Բուսական աշխարհի պահպանման նպատակով նախատեսվում է. • գոյություն ունեցող ծառերի և կանաչ տարածքների պահպանում: • Բացառել ցանկացած այլ գործունեություն, որը կխախտի ԱՊ-ի բնական համակարգերը և սպառնում է դրանց պահպանությանը: • Գործունեության և հարակից տարածքներում ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակների նոր պոպուլյացիաների կամ կենդանիների	**Կապալառու**	«Արփի Լիճ»ԱՊ ՊՈԱԿ

		բնադրավայրերի հայտնաբերման դեպքում դադարեցնել շինարարական աշխատանքները, մինչև դրանց վերատնկումը առանձնացված հատուկ պահպանման գոտում: • Բացառել բույսերի աճելավայրերի և կենդանական աշխարհի ներկայացուցիչների բնակության միջավայրի պայմանների խախտումը: • Շինարարական աշխատանքներն իրականացնել բացառապես ցերեկային ժամերին՝ որոշ կենդանիների կենսակերպի վրա ազդեցությունից խուսափելու համար: • Հնարավորինս նվազեցնել տարածքի գիշերային լուսավորությունը՝ կենդանիների որոշ տեսակների բնականոն վարքին չխանգարելու նպատակով: • Շահագործման փուլ. • Էստակադայի և նավամատույցի տարածքում ապոհվել նվազագույն լուսավորություն՝ կենդանիների բնականոն վարքին չխանգարելու նպատակով: • Զբոսաշրջության կազմակերպումը կատարել հաշվի առնելով «Կենդանաբանության և Հիդրոլոգիայի Գիտական Կենտրոն»-ի մասնագիտական կարծիքը, Լճի վրա զբոսաշրջությունը կազմակերպել հաշվի առնելով լճում ջրի մակարդակի տատանումների ազդեցությունը Արփի լճում ձկնաշխարհի և առափնյա ափերում բազմացող թռչնաֆաունայի վրա: • Սահմանափակել զբոսաշրջային նավակների ուղեգիծը մարտից-հունիս		

		ամիսների ընթացքում՝ կապված ձվադրության և ձագերի աճեցման ժամանակահատվածի հետ: • Կառոցվող նավամատույցի մոտ տեղադրել տեղեկատվության ցուցանակներ, ԱՊ-ի և Արփի լճում կենդանական և բուսական աշխարհի, մարդկանց համապատասխան վարքագծի դրսևորման պահանջներով:		
5	**Թափոններ**	Շինարարության փուլում թափոնների հնարավոր ազդեցությունները հողային և ջրային ռեսուրսների վրա մեղմելու նպատակով նախատեսվում է. • շինարարական աշխատանքների ժամանակ գործունեության տարածքը և շրջակա միջավայրը զերծ պահել թափոնների կուտակումներից: • Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող շինարարական թափոնների պահեստավորում չնախատեսել: • Շինարարական թափոնները՝ զոդման փոշի, բետոնյա մնացորդներ, պարկեր տարանջատել, առանձնացնել համապատասխան անջրթափանց տարաների կամ պարկերի մեջ ՝ մինչև կտեղափոխվեն համայնքի կողմից հատկացված վայր, կամ կհանձնվեն մասնագիտացված կազմակերպություններին: • Կենցաղային աղբի հեռացումը կատարել կանոնավոր՝ ըստ անհրաժեշտության,	**Կապալառու**	«Արփի Լիճ»ԱՊ ՊՈԱԿ

		համապատասխան պայմանագրի հիման վրա: • Բացառել աղբի կուտակումը շիհրապարակից դուրս՝ կանաչապատ տարածքներում: • Յուղոտված լաթերը հանձնել մասնագիտացված կազմակերպություններին:		
6.	**Պատմամշակութային հուշարձաններ**	Շինարարական աշխատանքների ընթացքում որևէ հնագիտական շերտի կամ հուշարձանի հայտնաբերման դեպքում շինարարական աշխատանքներն անմիջապես դադարեցվելու և տեղեկացվելու են համապատասխան պետական մարմնին (Պատմական և մշակութային հուշարձանների պահպանության վարչությանը)՝ համաձայն ՀՀ գործող օրենսդրության հետագա գործողությունները կազմակերպելու համար: Շինարարական աշխատանքները հնարավոր կլինի շարունակել միայն համապատասխան թույլտվության տրամադրման դեպքում:	**Կապալառու**	«Արփի Լիճ»ԱՊ ՊՈԱԿ
7.	**Աղմուկ և թրթռում.**	Աղմուկի և թրթռումների մակարդակը նվազեցնելու նպատակով նախատեսվում է. • կատարվող աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել է ցերեկային ժամերին: • Տրանսպորտային միջոցները և սարքերն օգտագործել սարքին վիճակում: • Պահպանել աղմուկի, վիբրացիայի թույլատրելի նորմերը:	**Կապալառու**	«Արփի Լիճ»ԱՊ ՊՈԱԿ

		• Պարբերաբար ստուգել և կարգաբերել տրանսպորտային միջոցների շարժիչները:		
8.	Արտակարգ Իրավիճակներ.	Գործունեության իրականացման ընթացքում արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերը մեղմելու և դրանց առաջացումը կանխարգելելու նպատակով նախատեսվում է. • ապահովել ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման պահանջների կատարումը: • Տարածքն ապահովվել հակահրդեհային հիդրատներով, կրակմարիչներով և շանթարգելներով: • Նյութերը տեղափոխել շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահել հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար: • Աշխատաքները կատարել միայն որակավորված մասնագետների միջոցով, ելնելով կատարվող աշխատաքների բնույթից: • Ձրի տակ եռակցման աշխատանքները կատարել համապատասխան սարքվորումներով՝ հատուկ մասնագետի կողմից համապաատսխան հագուստով՝ դիմակ, մեկուսիչ ձեռնոցներ, հիդրոկոստյում, էլեկտրահարման վտանգից խուսափելու համար: • Ապահովել ջրում հիմքերի տեղադրման հաշվարկային խորությունը, ամրությունը: • Աշխատանքները կատարել ցերեկային ժամերին:	**Կապալառու**	«Արփի Լիճ»ԱՊ ՊՈԱԿ

		• Մթնոլորտային տեղումների, քամու ուժեղացման և այլ վտանգավոր երևույթների ժամանակ շինարարական աշխատանքները դադարեցնել: Շահագործման փուլ. • Տարածքն ապահովել հակահրդեհային, արտաքին լուսավորության համակարգերով, ելնելով ազգային պարկի հրդեհանվտանգության անհրաժեշտությունից: • Նավամատույցի վրա այցելուների ծանրաբեռնվածության վերահսկողություն ԱՊ-ի կողմից:		
9.	**Մարդու առողջություն, Աշխատանքի կազմակերպում և անվտանգություն**	Շինարարության փուլում աշխատողների աշխատանքի կազմակերպման և աշխատանքի անվտանգությունն ապահովելու համար նախատեսվում է. • պահպանել ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը, ՀՀ Առողջապահության նախարարության 2012թ. սեպտեմբերի 19-ի «Կազմակերպություններում աշխատողների սանիտարականկենցաղային սենքերի» N 2.2..8-003-12 սանտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին թիվ 15-Ն հրամանի պահանջները: • Մինչև աշխատանքների սկիզբը բոլոր աշխատողները, հատկապես ջրում աշխատողները պետք է անցնեն	**Կապալառու**	«Արփի Լիճ»ԱՊ ՊՈԱԿ **Համապատասխան գերատեսչությունների տեսչական մարմին**

		հրահանգավորում՝ ըստ աշխատանքի անվտանգության կանոնների: • Աշխատողներին ապահովել 1-ին բուժօգնության համար անհրաժեշտ դեղարկղիկով, անհատական պաշտպանական միջոցներով (արտահագուստ, դիմակ և այլն): • Աշխատողների համար նախատեսել սանիտարական և հանգստի պայմաններ, որը ապահովված է լինելու անհրաժեշտ կահավորանքով (լվացարան, աթոռ, սեղան և այլն): • Վերահսկել աշխատող սարքավորումների պիտանելիությունը, մեքենաների երթերը, հաջորդականությունը, բացառել մեքենաների կուտակումները: • Նվազագույնի հասցնել ճանապարհների խցանումներ առաջացնող գործողություններն՝ ընդհանուր երթևեկության խոչընդոտումը՝ հասարակական անվտանգությունն ապահովելու նպատակով: • Ապահովել բավորներին շնչառական սարքավորումով՝ խորը ջրերի դեպքում՝ անհրաժեշտ թթվածնով մատակարարման համար: **Շահագործման փուլ.** • Ապահովել այցելուների ծանրաբեռնվածության վերահսկողությունը՝ նավամատույցի վրա, ելնելով մարդու		

		անվտանգության ապահովման անհրաժեշտությունից:		
	Սոցիալական գործոններ.	Շինարարության փուլում սոցիալական բացասական ազդեցություններից խուսափելու համար, շինարարական աշխատանքների ընթացքում պահպանել համապատասխան շին.նորմերի պահանջները, նախատեսված միջոցառումների կատարումը: Գործելու է բողոքների արձագանքման ընթացակարգը: • Մեծանալու է ԱՊ-ի գրավչությունը զբոսաշրջիկների համար: • Բացվելու են նոր աշխատատեղեր՝ 12 մարդու համար: • Կմեծանա զբոսաշրջությունը, հետաքրքրությունը ԱՊ-ի նկատմամբ, խթանելով ԱՊ-ի և հարակից բնակակավայրերի բնակիչների եկամուտների ավելացմանը:	**Կապալառու**	«Արփի Լիճ»ԱՊ ՊՈԱԿ
10.	**Լանդշաֆտ և տարածքի բարեկարգում**	Գործունեության տարածքի և շրջակա միջավայրի լանդշաֆտի պահպանման համար նախատեսվում է. • չխախտել և չվտանգել պարկի բնական էկոհամակարգերը: • Չխաթարել գիտական ու մշակութային արժեք ներկայացնող օբյեկտների պահպանությունը: • Շինարարական աշխատանքների ավարտից հետո կատարել գործունեության ենթակա	**Կապալառու**	«Արփի Լիճ»ԱՊ ՊՈԱԿ

		տարածքների հարթեցման, բարեկարգման աշխատանքներ: • Տարածքը մաքրել թափոններից, կենցաղային աղբից, քարերից:		

11.Մշտադիտարկման (մոնիթորինգի) միջոցառումներ.

Աղյուսակ 15

հհ	Գործողություն	Ազդեցության նվազման միջոցառումը	Մոնիթորինգի վայրը	Իրականացման ձևը	Ժամանակամիջոց	Մոնիթորինգ Կատարող/ Վերահսկող
1.	Շինարարության ընթացքում օդային ավազան արտանետումների վերահսկում:	• Արտանետումների որակական և քանակական չափաքանակների պարբերական վերահսկում:	Գործունեության ենթակա տարածքում:	Ստուգայցեր, գործիքային ստուգումներ:	Ամենօրյա:	«Արփի Լիճ»ԱՊՊՈԱԿ
2.	Հողային և ջրային ռեսուրսներ	•Հողային և ջրային ռեսուրսների մեջ վտանգավոր նյութերի ներթափանցման, թափոններով աղտոտման կանխարգելմանն ուղղված նածատեսված միջոցառումների	Գործունեության ենթակա տարածքում:	Ստուգայցերի կատարում:	Պարբերաբար	«Արփի Լիճ»ԱՊՊՈԱԿ **Համապատասխան գերատեսչության տեսչական մարմիններ**

		կատարման վերահսկում: • Ապահովել լճի ջրի վերահսկողություն, առաջնորդվելով Ջրային Օրենսգրքի /հոդված 99/ 5) ջրային ռեսուրսի օգտագործման դեպքում դրա պահպանությունը պետք է ապահովի տվյալ էկոհամակարգի հավասարակշռությունը. «6) ջրային ռեսուրսը ենթակա է պահպանության աղտոտումից, աղբոտումից, վարակումից և հյուծումից» պահանջները ապահովելու նպատակով:				
3.	**Կենսաբազմազանություն**	Բուսականության և կենդանիների մոնիթորինգ՝ ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակների և կենդանիների բնադրավայրերի հայտնաբերման համար:	Գործունեության տարածքում:	Տեսողական դիտարկումներ, մասնագետի կողմից ստուգայցեր:	Գործունեության իրականացման ընթացքում:	«Արփի Լիճ»ԱՊՊՈԱԿ

4.	**Մարդու առողջություն, Աշխատանքի անվտանգություն.**	• Բնապահպանական, առողջության և աշխատանքային անվտանգության տեխնիկական վերահսկողություն: • Ամբողջ շինարարության ընթացքում շինարարության որակի չափանիշների վերահսկում: • Աղմուկի և թրթռումների մակարդակի բարձրացմանն ուղղված միջոցառումների վերահսկում: • Շինանյութերի գնում արտոնագրված մատակարարներից:	Գործունեության իրականացման ենթակա տարածքում: Գործունեության իրականացման ենթակա տարածքում:	Ստուգայցերի կատարում: Գործիքային չափումներ:	Պարբերաբար Ամենօրյա: Պարբերաբար	«Արփի Լիճ»ԱՊՊՈԱԿ **Համապատասխան գերատեսության տեսչական մարմին**
5.	**Թափոն**	Թափոնների կանոնավոր տեղափոխման վերահսկում:	Գործունեության ենթակա տարածքից:	Համապատասխան պայմանագրերի հիման վրա :	Շինարարության ընթացքում:	«Արփի Լիճ»ԱՊՊՈԱԿ
6.	**Բարեկարգում.**	Տարածքի բարեկարգման աշխատանքների վերահսկում:	Գործունեության տարածք:	Դիտողական ուսումնասիրություն:	Շինարարական աշխատանքների ավարտից հետո:	«Արփի լիճ»ԱՊՊՈԱԿ
		Շահագործման փուլ.				

1.	**Կենսաբազմազանություն.**	Լճում և լճի մերձափնյա հատվածներում Կենսաբազմազանության վերահսկում, նավակներով շրջայցի սահմանափակում՝ ձվադրման և ձագերի աճեցման շրջանում: • Նավակների շահագործումը կիրականացվի հատուկ թույլտվությամբ և էլ. անաղմուկ շարժիչներով և թիերով:	Գործունեության տարածք:	Դիտողական ուսումնասիրություններ:	Պարբերաբար	«Արփի լիճ»ԱՊՊՈԱԿ

12. Հանրային քննարկումների իրականացումը գործունեության համապատասխանությունը հաստատված հիմնադրույթային, համայնքի հեռանկարային զարգացման փաստաթղթին .

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ- 110-Ն Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին (Փոփոխությունները 2023 թվականի մայիսի 3) Օրենքի և ՀՀ կառավարության 1325-Ն և ՀՀ կառավարության 28 դեկտեմբերի 2023 թվականի «Հայաստանի հանարապետության կառավարության 2014թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 2343-Ն որոշմամբ սահմանված պահանջների: Գործունեությունն իրականացվելու է «Արփի Լիճ»ԱՊ ՊՈԱԿ-ի կողմից, կառուցապատման վերաբերյալ հանրային ծանուցումը և քննարկումները կատարվել են ՀՀ Շիրակի մարզի Ամասիա համայնքի Արդենիս բնակավայրում: Հանրային քննարկմանը մասնակցել են «Արփի լիճ»ԱՊ-ի, ՊՈԱԿ-ի, համայնքի ներկայացուցիչները, բնակավայրերի բնակիչներ:

Հանարային քննարկման ընթացքում ներկայացվել է նախատեսվող գործունեության նախագծային լուծումները և գործունեության իրականացման հետևանքով շրջակա միջավայրի բաղադրիչների և մարդու առողջության վրա հնարավոր ազդեցությունները, դրանց մեղմանն ու կանխարգելմանն ուղղված միջոցառումները:

Նախատեսվող գործունեությունը համահունչ է Ամասիա համայնքի հեռանկարային զարգացման ծրագրին: Նախատեսվող գործունեության իրականացման համար հիմք է ծառայել 2024թ.հոկտեմբերի 18-ի ՀՀ վարչապետի հանձնարարականը՝ /ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N Վ/142-2024, կետ 6/, որով Ամասիա համայնքի Բերդաշեն բնակավայրում զբոսաշրջությունը զարգացնելու և Արփի լճի գրավչությունը բարձրացնելու նպատակով պետք է ապահովել՝ «նավավարության ծառայություններ ձեռք բերելու ու Արփի լճում նավավարության նպատակով զբոսաշրջիկներին նավակներ հատկացնելու հնարավորության հարցը և արդյունքների վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն ներկայացնել Վարչապետի աշխատակազմ»:

Ելնելով համայնքի և ԱՊ-ի զարգացման առաջնահերթության պահանջներից, 20.04.2026թ տվել է ՆՆԹ-4839-26՝ ճարտարապետա-հատակագծային առաջադրանք, որտեղ դիտարկվում է գործունեության համապատասխանությունը համայնքի հեռանկարային զարգացմանը: Քննարկման արդյունքում նախագծի վերաբերյալ համայնքի Ավագանու որոշմամբ նախատեսվող գործունեությանը տրվել է նախնական համաձայնություն, որը վկայում է, որ նախատեսվող գործունեությունը համահունչ է մարզի և համայնքի զարգացման հեռանկարային ծրագրերին:
Հաշվետվությունում ներառվել են հանրային քննարկման ընթացքում բարձրացված բոլոր դիտարկումները:

13.Փակման կամ հետփակման փուլեր.

Նախատեսվող գործունեության դադարեցումից կամ գործունեության իրականացման ոչ նպատակահարմարությունից ելնելով առաջարկվում է.

- Նախապես տեղյակ պահել համայնքին և ԱՊ–ին գործունեության դադարեցման վերաբերյալ:
- Փակման փուլի գործընթացը կատարել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ համայնքի և ԱՊ-ի վերահսկողությամբ:

Փակման փուլի ազդեցություն. Փակման փուլում կարևոր է կառամատույցի և և էստակադայի ապամոնտաժման արդյունքում առաջացող թափոնների հեռացման լուծումները:

Շրջակա միջավայրին նվազագույն ազդեցություն հասցնելու համար նախատեսել համապատասխան միջոցառումներ, որոնք կբխեն «Արփի Լիճ»ԱՊ ՊՈԱԿ-ի կանոնադրությունից: Մասնավորապես.

- ✓ Թափոնների ճիշտ կառավարում, թափոնատեսակների տեսակավորում, դասակարգում, առանձնացում, թափոնների լուծումները տալ ըստ ՀՀ-ում գործող օրենսդրությանը համապատասխան:
- ✓ Տարածքը բարեկարգել, հնարավորին բերել նախկին տեսքի:

Փակման փուլը պետք է իրականացնել համապատասխան նախագծային փաստաթղթերի հիման վրա, ՀՀ Օրենսդրությամբ սահմանված կարգով: Փակման փուլում առաջացող թափոնների դասակարգման և դրանց լուծումները ճիշտ կազմակերպելու համար անհրաժեշտ է առաջնորդվել «Թափոնների մասին» ՀՀ օրենքի, ՀՀ բնապահպանության նախարարի 2006թ.-ի դեկտեմբերի 25-ի N 430-Ն, 2006թ. հոկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում գոյացող արտադրության (այդ թվում՝ ընդերքօգտագործման) և սպառման թափոնների ցանկը հաստատելու մասին» N 342-Ն, ինչպես նաև N 167-Ն N 166-Ն հրամանների պահանջներով:

14. Օգտագործվող հապավումները

ՇՄԱԳ՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում
ԲՀՊՏ՝ Բնության հատուկ պահպանվող տարածք
ԲՀՀ՝ Բնության համաշխարհային հիմնադրամ
ԲՊՄՄ՝ Բնության Պահպանության Միջազգային Միություն
ՍՊԸ՝ Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
ԱՊ՝ Ազգային պարկ
ՊՈԱԿ՝ Պետական ոչ առևտրային կազմակերպությ**ւն**
ՊՏ՝ Պահպանվող տարածք
ԿՊ՝ «Արփի լիճ»ԱՊ-ի Կառավարման պլան

15.Գնահատման հաշվետվության կազմման իրավական հիմքերը

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (2014) հունիսի 21-ի ՀՕ- 110-Ն Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին (Փոփոխությունները 2023 թվականի մայիսի 3) Օրենք՝ – Կարգավորում է նախատեսվող գործունեության իրականացման ընթացակարգը՝ դիտարկելով շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումների, անդրսահմանային և շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության ոլորտի հասարակական հարաբերությունները: Ներառում է նախատեսվող գործունեության 2 կատեգորիա՝ «Ա», «Բ»՝ ըստ շրջակա միջավայրի վրա նվազող ազդեցության աստիճանի: Համաձայն օրենքի իրականացվում է նախատեսվող գործունեության փորձաքննություն, որից հետո տրվում է եզրակացություն:

Ռամսարի կոնվենցիա/1971թ.02.02./-կարգավորում է ‹‹Միջազգային կարևոր նշանակություն ունեցող խոնավ տարածքների, հատկապես որպես ջրային թռչունների բնակավայր›› -ի միջոցառումները համաձայնեցված միջազգային գործողությունների հետ:

«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (ՀՕ-121-Ն՝ ընդունված 1994թ. և լրամշակված 2022թ.ՀՕ-522-Ն)- կարգավորում է մթնոլորտային օդի պահպանության իրավական և կազմակերպական հիմքերը՝ ուղղված մթնոլորտային օդի որակի պահպանությանը, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի համար բարենպաստ մթնոլորտային օդի որակի ապահովման նպատակով՝ մթնոլորտային օդի պահպանության բնագավառում հասարակական հարաբերությունները:

«Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքը (27.11.2006թ.) - կարգավորում է ՀՀ-ում բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները: Օրենքը նկարագրում է բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության ռեժիմները, պահպանության իրականացումը, օգտագործումը և վերահսկողությունը, սահմանում է պետական մարմինների իրավասությունները, ինչպես նաև բնության հատուկ պահպանվող տարածքներն օգտագործողների իրավունքներն ու պարտականությունները: Նախատեսում է հատուկ պահպանվող տարածքները, առանձնացնելով չորս տեսակ՝ պետական արգելոցներ, պետական պահուստավորման հողեր, ազգային պարկեր, բնական հուշարձաններ, դրանց որոշման և ղեկավարելու գործընթացները:

«Պատմության եվ մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության եվ օգտագործման մասին» ՀՀ օրենք (1998թ.) – սահմանում է պատմության և մշակույթի անշարժ հուշարձանները՝ պետական հաշվառման վերցված պատմական, գիտական, գեղարվեստական կամ մշակութային այլ արժեք ունեցող կառույցները, դրանց համակառույցներն ու համալիրները՝ իրենց գրաված կամ պատմականորեն իրենց հետ կապված տարածքով, դրանց մասը կազմող հնագիտական, գեղարվեստական, վիմագրական, ազգագրական բնույթի տարրերն ու բեկորները, պատմամշակութային և բնապատմական արգելոցները, հիշարժան վայրերը՝ անկախ պահպանվածության աստիճանից:

«Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (1999թ.) – ապահովում է բուսական տեսակների (ֆլորայի) և դրանց առաջացրած համակեցությունների (բուսականության) բազմազանության, աճելավայրերի և էկոհամակարգերի հավասարակշռվածության վրա մարդու բացասական ներգործության կանխարգելումը: Իրականացնում է բուսական աշխարհի, դրա գենոֆոնդի և ցենոֆոնդի բազմազանության, աճելավայրերի պահպանության քանակական և որակական, բուսական աշխարհի շարունակական օգտագործման և վերարտադրության գիտականորեն հիմնավորված ապահովումը, բուսական աշխարհի օգտագործման հարաբերությունների կարգավորումը, բուսական աշխարհի պահպանության և օգտագործման բնագավառում օգտագործողների իրավունքների պաշտպանությունը և պարտականությունների կատարումը:

«Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (2000թ.) – սահմանում է ՀՀ տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը: Նախատեսում է գենոֆոնդի և տեսակային բազմազանության պահպանության, պաշտպանության, բնականոն

վերարտադրության ապահովումը, կենդանիների բնակության միջավայրի ամբողջականության խախտման կանխումը, կենդանական տեսակների և դրանց պոպուլյացիաների ու համակեցությունների ամբողջականության, կենդանիների միգրացիայի ուղիների պահպանությունը, կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործման հարաբերությունների կարգավորումը, կենդանական աշխարհի պահպանության և օգտագործման բնագավառներում օգտագործողների իրավունքների պաշտպանությունն ու պարտականությունների կատարումը:

«ՀՀ հողային օրենսգիրք» (2001թ.) - սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսվարման տարբեր կազմակերպաիրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը: Կարգավորում է հողային պաշարների կառավարման, տիրապետման, օգտագործման և տնօրինման բնագավառում պետական քաղաքականության ուղղությունների սահմանումը, հողային հարաբերությունները կարգավորող օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի ընդունումն ու դրանց կատարման վերահսկողությունը, հողային ֆոնդի՝ ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի և գործառնական նշանակության դասակարգումը, հողի մոնիթորինգի, հողաշինարարության, հողերի հետազոտմանն ուղղված գործունեության լիցենզավորման միասնական սկզբունքների սահմանումը և այլն:

«Հողերի օգտագործման եվ պահպանման նկատմամբ վերահսկողության մասին» ՀՀ օրենք (2008թ.) - սահմանվում է հողերի արդյունավետ օգտագործման և պահպանման, հողային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման խնդիրները, ձևերը, վերահսկողություն իրականացնող մարմինները, ստուգող և ստուգվող անձանց իրավունքներն ու պարտականությունները, ստուգումների իրականացման կարգերը: Սույն օրենքի գործողությունը տարածվում է ՀՀ հողային ֆոնդում առկա բոլոր հողամասերի օգտագործման և պահպանության վրա՝ անկախ դրանց նպատակային նշանակությունից, սեփականության և (կամ) օգտագործման իրավունքի սուբյեկտներից:

«Թափոնների մասին» ՀՀ օրենքը (2004թ.)-սահմանում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, ինչպես նաև բնական ռեսուրսների, մարդու կյանքի և առողջության վրա թափոններից առաջացող բացասական ազդեցությունների կանխարգելման համար իրավական և տնտեսական հիմքերը:

«Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքը (2011թ.)-կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում աղբահանության և սանիտարական մաքրման հետ կապված հարաբերությունները, սահմանում է աղբահանության և սանիտարական մաքրման գործընթացի կազմակերպման սկզբունքները, աղբահանության վճարը, դրա դրույքաչափերը, վճարողների շրջանակը, նրանց իրավունքները և պարտականությունները, վճարման կարգը, պատասխանատվությունը չվճարելու, պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար, տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման կարգը աղբահանության և սանիտարական մաքրման կազմակերպման բնագավառներում:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք (1998)-կարգավորում է շինարարական գործընթացի կազմակերպումը, պահանջում է նախատեսվող գործունեության մասին տեղակատվության հրապարակումը և նախագծման փուլում հանրության մասնակցությունը:

«Քաղաքաշինության Բնագավառում Իրավախախտումների Համար պատասխանատվության մասին» ՀՀ Օրենքը (28 ապրիլի 1999 թ.) -Սույն օրենքը

սահմանում է Հայաստանի Հանրապետությունում իրավաբանական անձանց քաղաքաշինության բնագավառում իրավախախտումների համար պատասխանատվության ենթարկելու իրավական հիմքերը՝ քաղաքաշինական գործունեության բոլոր փուլերում քաղաքացիների, հասարակության ու պետության շահերը պաշտպանելու, օրենսդրական ակտերի, ստանդարտների ու կանոնների պահանջների կատարումն ապահովելու նպատակով:

ՀՀ կառավարության որոշումներ

❖ **ՀՀ կառավարության 28 դեկտեմբերի 2023 թ.** «Հայաստանի հանարապետության կառավարության 2014թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 2343 - Ն որոշում:

❖ **ՀՀ կառավարության** փետրվարի 2-ի 2006 թվականի N 160-Ն որոշում:

❖ **ՀՀ կառավարության** 29.01.2010թ.«ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին» N72-Ն որոշում :

❖ **ՀՀ կառավարության 29.01.2010թ.** «ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին» N71-Ն որոշում:

❖ **ՀՀ կառավարության 31.07.2014թ.** «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության եվ բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N781-Ն որոշում:

❖ **ՀՀ կառավարության 14.08.2008թ.** «ՀՀ բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N 967-Ն որոշում:

❖ **ՀՀ կառավարության 02.11.2017թ.** «Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը եվ հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու եվ ՀՀ կառավարության 20.07.2006թ. N1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N1404-Ն որոշում:

❖ **ՀՀ կառավարության 08.11.2011թ**. ՀՀ կառավարության 8 սեպտեմբերի 2011 թվականի 08.09. 2011թ. «ՀՈՂԻ ԲԵՐՐԻ ՇԵՐՏԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2002 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 19-Ի N 1622-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ 2001 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 12-Ի N 286-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N1396-Ն որոշում:

❖ ՀՀ կառավարության 15 մարտի 2007թ. «ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ՈՉ ԵՆԹԱԿԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 385-Ն որոշում:

❖ ՀՀ կառավարության 2009 թվականի ապրիլի 16-ի «Արփի լիճ» ազգային պարկի գործունեությունը, տարածքի պաշտպանությունն ու կառավարում» N 405-Ն որոշում:

❖ ՀՀ կառավարության 2011 թվականի 21 հուլիսի ««ԱՐՓԻ ԼԻՃ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ, ՀԱՏԱԿԱԳԻԾԸ, ՏԱՐԱԾՔԻ ՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ»» N 1151-Ն որոշում:

❖ ՀՀ կառավարության 22 դեկտեմբերի 2011 թվականի «ԱՐՓԻ ԼԻՃ» ազգային պարկի 2011-2015թթ. կառավարման պլանը հաստատելու մասին N 1854-Ա որոշում:

❖ ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշում:

❖ ՀՀ վարչապետի 2024 թվականի հոկտեմբերի 18-ի N N Վ/142-2024 արձանագրային որոշում:

16.Օգտագործված գրականության ցանկ.

1. Ամասիա համայնքի հնգամյա զարգացման պլան:

2. «Գյումրիի անտառտնտեսություն» մասնաճյուղի 2023-2032 թթ. կառավարման պլան:

4. 2014թ. «Կենսաբանական բազմազանության մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի 5-րդ ազգային զեկույց:

5.ՀՀ կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 25-ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ, ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 1059-Ա որոշում:

6.ՀՀ Առողջապահության նախարարության 2012թ. սեպտեմբերի 19-ի «Կազմակերպություններում աշխատողների սանիտարական կենցաղային սենքերի» N 2.2..8-003-12 սանտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին թիվ 15-Ն հրաման:

7.ՀՀ բնապահպանության նախարարի 2006թ. դեկտեմբերի 25-ի «Ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկի»N 430-Ն հրաման:

8. ՀՀ բնապահպանության նախարարի 2006թ. հոկտեմբերի 10-ի N342-Ն հրաման՝ «Հայաստանի հանրապետության տարածքում գոյացող արտադրության և սպառման թափոնների ցանկի» մասին:

9.ՀՀ քաղաքաշինության նախարարության ՀՀՇՆ 22-01-2024 «Շինարարական կլիմայաբանություն» նորմատիվային փաստաթուղթ:

10.Արտակարգ իրավիճակների նախարարի 2021թ. մարտի 31-ի 372-Ն հրամանով հաստատված ՀՀ տարածքի սեյսմիկ վտանգի, սեյսմիկ գոտևորման քարտեզների և Քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020թ. դեկտեմբերի 28-ի թիվ 102-Ն հրամանով հաստատված «ՀՀՇՆ 20.04_ Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր»:

11.Գլխավոր (www.armmonitoring.am) էլեկտրոնային էջ:

12.ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական /https://armstat.am/file/Map/MARZ_01.pdf/ կայք:

13.http://shirak.mtad.am/u_files/file.Արդենիսpdf:

Ամասիա համայքապետարանի կողմից տրված նախագծման թույլտվություն/ճարտարապետահատակագծային առաջադրանք/

ՁԵ N 1-2

PM7B-674A-E894-E7D5

Փաստաթղթի վավերականության ստուգումն ու էլեկտրոնային բնօրինակի ներբեռնումը հնարավոր է իրականացնել https://verify.e-gov.am կայքում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔ
ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ
(ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ)

N ՆԹ-4839-26 20.04.2026թ.

Օբյեկտ **Կառուցում, էստակադայի և նավամատույցի կառուցում,**

(օբյեկտի անվանումը, կառուցում, վերակառուցում, ուժեղացում վերականգնում, գործառնական նշանակության փոփոխություն)

150 քմ

(հակիրճ բնորոշումը, հզորությունը)

ռիսկայնության աստիճանը՝ II նախագծային փաստաթղթերի մշակման համար։

(ռիսկայնության աստիճանը (կատեգորիան) նախագծման փուլերը և այլն)

Գտնվելու վայրը **Մարզ՝ Շիրակ, համայնք՝ Ամասիա գյուղ Բերդաշեն 4-րդ փողոց 11/1 վարչական շենք, 08-028-0105-0002**

(մարզի, համայնքի, փողոցի անվանումները, շենքի համարը, հողամասի ծածկագիրը)

Կառուցապատող **«ԱՐՓԻ-ԼԻՃ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿ» ՊՈԱԿ / 05536278 / Հայաստան, ՇԻՐԱԿ, ԲԵՐԴԱՇԵՆ, -, -, 2701**

(կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը, բնակության վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)

Առաջադրանքի տրամադրման հիմքը՝ **ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ՝ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ «ԱՐՓԻ-ԼԻՃ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿ» ՊՈԱԿ 16112022-08-0033**

(կառուցապատման նպատակով ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հողամասի տրամադրման, անշարժ գույքի փոփոխման իրավունքը հաստատող անհրաժեշտ փաստաթղթերը)

Առաջադրանքի գործողության ժամկետը **մինչև 20.04.2027թ.**

(N 1 հավելվածի 32-րդ կետին համապատասխան)

Ն Ա Խ Ա Գ Ծ Վ Ո Ղ Հ Ո Ղ Ա Մ Ա Ս Ի Բ Ն Ո Ւ Թ Ա Գ Ի Ր Ը

(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)

1. Հողամասը գտնվում է	Հասարակական կառուցապատման բնակավայրերի (հողամասի դիրքը քաղաքաշինական միջավայրում, դրա նպատակային և գործառնական նշանակությունը)
2. (*) Հողամասի չափսերը	0.07704 (հողամասի սահմանները՝ կոորդինատային նշահարմամբ, մակերեսը(հա))
3. Հողամասի առկա վիճակը	Լավ (ռելիեֆի բնութագիրը, շենքերի (այդ թվում՝ քանդման ենթակա) առկայությունը, (օգտագործումը, նշանակությունը, հարկայնությունը, շինարարական նյութերը և այլն), կանաչապատումը, բարեկարգումը և այլն)
4. (*) Տրանսպորտային պայմանները	(ճանապարհների առկայությունը, երկաթուղային տրանսպորտի մոտեցումները և այլն)
5. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ (ջրամատակարարման, կոյուղու, գազամատակարարման, տաք ջրի մատակարարման, էլեկտրամատակարարման, էլեկտրոնային հաղորդակցության համակարգեր)	(նախագծվող հողամասով կամ կից տարածքով անցնող ինժեներական ենթակառուցվածքները, այդ թվում՝ ստորգետնյա)
6. (*) Կից հողամասեր	

(կից հողօգտագործումների անվանումը և դրանց սահմանները՝ համաձայն ներկայացված սխեմայի)

7. Բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների տարածքներ (պահպանական գոտիներ)

(հուշարձանի անվանումը)

8. (*) Հատակագծային սահմանափակումներ

(տեղանքում գործող արտադրական, պաշտպանվող օբյեկտների, ինժեներաենսպորտային ենթակառուցվածքների և այլ օբյեկտների նկատմամբ սահմանափակումները, այդ թվում՝ սերվիտուտները)

Ն Ա Խ Ա Գ Ծ Ա Յ Ի Ն Պ Ա Հ Ա Ն Ջ Ն Ե Ր Ը

(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)

9. Ճարտարապետահատակագծային պահանջներ

էստակադայի և նավամատույցի կառուցում

(ելնելով Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներից, առկա քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի դրույթներից կամ դրանց բացակայության դեպքում՝ կազմավորված (կազմավորվող) քաղաքաշինական միջավայրի պայմաններից, առաջարկություններ ճակատների ձևավորման, տանիքների, արտաքին դռների, պատուհանների համամասնությունների և գունային լուծումների վերաբերյալ)

9.1.(*) օբյեկտի հեռավորությունը կարմիր գծից (մետր)

9.2.(*) հեռավորությունը հարևան հողակտորներից (օբյեկտներից) (մետր)

9.3.(*) թույլատրելի բարձրությունը (մետր)

սահմանային հարկայնության բարձրությունը գերազանցող շենքերի և շինությունների նախագծման դեպքում՝ ՀՀՇՆ II-6.02-2006 «Սեյսմակայուն շինարարություն. Նախագծման նորմեր» շինարարական նորմերով սահմանված պահանջների ապահովման (հատուկ հաշվարկային մեթոդներ, սեյսմակայունության բարձրացման միջոցառումներ և այլն)

9.4. կառուցապատման խտության գործակիցը (կառույցի, (կառույցների) ընդհանուր մակերեսի հարաբերությունը հողամասի մակերեսին)

9.5. կառուցապատման տոկոսը (կառուցապատվող (անջրանցիկ) տարածքի հարաբերությունը հողամասի տարածքին՝ տոկոսներով) (%)

9.6 կանաչապատման տոկոսը (կանաչապատ տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով՝ (%))

9.7 այլ պահանջներ

10. Հողամասում գտնվող շենքերի ու շինությունների քանդման կամ տեղափոխման (ապամոնտաժման) պայմանները և աշխատանքների հերթականությունը

օրենքով սահմանված պահանջների

11. Ստորգետնյա, կիսանկուղի և առաջին հարկերի տարածքների օգտագործման պայմանները

օրենքով սահմանված պահանջների

12. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ

օրենքով սահմանված պահանջների

12.1 (*) ջրամատակարարում կոյուղի, տաք ջրի մատակարարում

(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.2 (*) Էլեկտրամատակարարում

(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.3. (*) գազամատակարարում	
	(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)
12.4. (*) Էլեկտրոնային հաղորդակցություն մալուխատար կոյուղու (ներառյալ դիտահորը) տեղադիրքը	
	(համաձայն N 1 հավելվածի 57-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված էլեկտրային տվյալների)
12.5. թույլ հոսանքներ	չի պահանջվում
12.6. աղբահանություն	
13. Տարածքի ինժեներական նախապատրաստում	
	(ռելիեֆի կազմակերպման, ջրահեռացման, ինժեներական պաշտպանության միջոցառումները)
14. Բարեկարգում	Հարակից տարածքը բարեկարգել
	(լանդշաֆտային պլանավորման վերաբերյալ պահանջները, կանաչապատում, ճարտարապետական փոքր ձևեր, ցանկապատում, գովազդ և այլն)
15. Շինարարական նյութեր	
	(շինարարական նյութերի օգտագործման առաջարկությունները տանիքների, ճակատների լուծումների, արտաքին դռների, պատուհանների վերաբերյալ)
16. Պաշտպանական կառույցներ	Ըստ նորմատիվ պահանջների
	(արտակարգ իրավիճակներում մարդկանց և օբյեկտների պաշտպանության միջոցառումները)
17. Հակահրդեհային պահանջներներ	Ըստ նորմատիվ պահանջների
	(հակահրդեհային անվտանգության ապահովման միջոցառումները)
18. Հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի պաշտպանության միջոցառումներ	
19. Շրջակա միջավայրի պահպանում	Նախատեսել շրջակա միջավայրը վտանգավոր միջոցներից բացառելու միջոցառումներ
	(շրջակա միջավայրը վտանգավոր ազդեցությունից բացառելու միջոցառումները)
20. Շինարարության կազմակերպում	Շին- աշխատանքների կազմակերպման նախագծի համաձայն
	(առաջարկություններ շինարարության հետ կապված անբարենպաստ ազդեցության բացառման, քաղաքային տնտեսության և տրանսպորտի անխափան աշխատանքի ապահովման վերաբերյալ)
21. Առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը	մինչև 20.04.2027թ.,
	(նշվում են առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը)

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

22. Նախագծային փաստաթղթերի փորձաքննությանը ներկայացվող պահանջներ	
	(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված փորձաքննության տեսակը կամ նախագծողի երաշխավորագիրը՝ հողում կատարելով համապատասխան իրավական ակտին)
23. Միջանկյալ համաձայնեցում	Համաձայնացնել Ամասիա համայնքի ղեկավարի հետ
	(իրավասու մարմնի կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում շահագրգիռ մարմինների հետ էսքիզային նախագծի նախնական համաձայնեցում, նշվում է նաև առաջադրանքի փոփոխման հնարավորությունը՝ N 1 հավելվածի 87-րդ կետով նախատեսված դեպքում)
24. Հասարակական քննարկումներ	
	(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքում և կարգով)
25. Համաձայնեցումների կամ Մասնագիտական եզրակացությունների ստացում	
	(նշվում են տվյալ օբյեկտի համաձայնեցման օրենքով սահմանված պահանջները՝ հուշարձանների ու բնության պահպանության և այլ լիազորված մարմինների հետ, ինչպես նաև N 1 հավելվածի 56-րդ կետով սահմանված դեպքերում՝ ինժեներական ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտահործողի) հետ)
26. Փոստային բաժանորդային պահարանների տեղադրում	
	(նշվում են տվյալ օբյեկտի համաձայնեցման օրենքով սահմանված պահանջները՝ հուշարձանների ու բնության պահպանության և այլ լիազորված մարմինների հետ, ինչպես նաև N 1 հավելվածի 56-րդ կետով սահմանված դեպքերում՝ ինժեներական ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտահործողի) հետ)
27. Քաղաքաշինական կանոնադրությամբ ամրագրված լրացուցիչ պայմաններ	


28. Այլ պայմաններ


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՋԵՄՄԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

(ստորագրությունը, անունը, ազգանունը)


20.04.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է

Հավելված 2. Տարածքի հատակագիծը՝ WGS կորդինատներով





ԱՌԱՋՄՈՒՅԻՆ ՀԱՏՎԱԾՔԻ Մ 1:100
ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇՈՒՄՆԵՐ
+2051.0
+2048.1 ~ +2051.0
+2049.65 ~ +2051.0
+2049.41 ~ +2051.0
+2048.48 ~ +2051.0
+2047.58 ~ +2051.0
+2051.03
X - 31° 4' 1.387"
Y - 43° 39' 1.387"
Z - 2051
Активация Windows

Հավելված 3. Ամասիա էլ ցանցի համաձայնությունը



Հավելված 4.

«Գազպրոմ Արմենիա»ՓԲԸ-ի համաձայնությունը



Закрытое акционерное общество
«Газпром Армения»
(ЗАО «Газпром Армения»)

Ширакский ФГГ

ул. Чайковского, 2, Гюмри, Ширакская область,
Республика Армения, 3501
тел.: (374 10) 294-156, факс: (374 312) 5-28-06
e-mail: shirak@gazpromarmenia.am, gazpromarmenia.am

«____» _____ 202____թ.

«Գազպրոմ Արմենիա»
փակ բաժնետիրական ընկերություն
(«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ)

Շիրակի ԳԳՄ

3501, ՀՀ Շիրակի մարզ,
ք. Գյումրի, Չայկովսկու 2
Հեռ.՝ (374 10) 294-156, Ֆաքս՝ (374 312) 5-28-06
Է-փոստ՝ shirak@gazpromarmenia.am, gazpromarmenia.am

№ _____

«Արփի-Լիճ Ազգային Պարկ»
ՊՈԱԿ-ի տնօրեն
պարոն՝ Ս. Հարությունյանին

Հարգելի պարոն Հարությունյան

Ի պատասխան ՃՀԱ/890/10620-26 հայտի՝ Շիրակի մարզ, համայնք Ամասիա, Բերդաշեն բնակավայրի 4-րդ փողոց թիվ 11/1 վարչական շենք հողամասում գտնվող (08-028-0105-0002) էստակադայի և նավամատույցի կառուցման աշխատանքների հետ կապված Շիրակի ԳԳՄ-ն առարկություն չունի:

Հարգանքով՝

Տնօրենի տեղակալ
Գլխավոր ճարտարագետ **Ս.Ալեքսանյան**

Վ. Ղազարյան
Հեռ.՝ (312) 5-28-06

Հավելված 5.

Ամասիա համայնքի Ավագանու նախնական համաձայնությունը չի ներկայացվում, քանի որ ավագանին գտնվում էր արձակուրդում և լրացել է 30 աշխատանքային օրյա ժամկետը:

Հավելված 6.

Հանրային լսման արձանագրություն, մասնակիցների ցանկ, լուսնկարներ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

25.06.2026 Արդենիս բնակավայր

2026 թվականի հունիսի 25-ին, ժամը 12:00-ին, ՀՀ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (21.06.2014թ. ՀՕ-110-Ն) և ՀՀ կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 2343-Ն որոշմամբ սահմանված կարգի համաձայն, Շիրակի մարզի Ամասիա համայնքի Արդենիս բնակավայրում կայացավ «Արփի Լիճ» Ազգային Պարկ» ՊՈԱԿ կողմից նախատեսվող հետիոտնային էստակադի եւ նավամատույցի կառուցման նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ 1-րդ հանրային լսումը:

Ներկա էին Արդենիս բնակավայրի վարչական ղեկավար՝ Ռոզա Քանանյանը, «Արփի Լիճ» Ազգային Պարկ» ՊՈԱԿ-ի տնօրեն Սևակ Հարությունյանը, Արդենիս և Բերդաշեն բնակավայրերի բնակիչները, նախատեսվող գործունեության պատվիրատուի ներկայացուցիչները, հաշվետվությունը մշակող կազմակերպության ներկայացուցիչները, շահագրգիռ հանրության ներկայացուցիչներ:

Նշվեց, որ հանրային քննարկման նպատակն է ներկայացնել նախաձեռնողի գործունեությունը, դրա իրականացման վայրը, հիմնական նախագծային լուծումները,ինչպես նաև լսել շահագրգիռ հանրության առաջարկությունները, դիտողություններն ու հարցադրումները:

Ելույթ ունեցան

Հանրային լսումը բացեց Արդենիս բնակավայրի վարչական ղեկավար՝ Ռոզա Քանանյանը, որը ներկայացրեց հանրային լսման նպատակը, իրավական հիմքերը և անցկացման կարգը՝ համաձայն ՀՀ գործող օրենսդրության:

Նախագծային լուծումները ներկայացրեց «Արփի Լիճ» Ազգային Պարկ» ՊՈԱԿ-ի տնօրեն Սևակ Հարությունյանը:

Քննարկման ընթացքում բնակիչների և շահագրգիռ հանրության կողմից բարձրացվեցին հարցեր, որոնք վերաբերում էին հետիոտնային էստակադայի և նավամատույցի կառուցման նպատակին, տարածքի ընտրությանը, հնարավոր ազդեցություններին ազգային պարկի բնական էկոհամակարգերի, կենդանական և բուսական աշխարհի, ինչպես նաև հետագա շահագործման կազմակերպմանը: Ներկայացված բոլոր հարցերին տրվեցին համապատասխան պարզաբանումներ:

Բնակիչների կողմից առարկություններ և առաջարկություններ չեն ներկայացվել:

Սույն արձանագրությունը, մասնակիցների ցանկը և հանրային լսման լուսանկարները սահմանված կարգով կներկայացվեն նախաձեռնողին՝ ՇՄԱԳ գործընթացի հետագա ընթացքն ապահովելու նպատակով

Վարող՝
Արդենիս բնակավայրի վարչական ղեկավար՝




Ռոզա Քանանյան

ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության
«Արփի Լիճ» Ազգային Պարկ» ՊՈԱԿ-ի
տնօրեն



Սևակ Հարությունյանը







AMERIABANK

+374 10 56 11 11
info@ameriabank.am
Վազգեն Սարգսյան 2, Երևան, ՀՀ

Բյուջե փոխանցում

Բանկ	Ամերիաբանկ
Վճարողի անուն	Հրանուշ Ալեքսանյան
Հաստատման ամսաթիվ	5 Օգոստոս 2026
Կարգավիճակ	Հաստատված է

Ստացող	Շրջակա միջավայրի վրա ազդեցության
Ելքագրվող հաշիվ	1570084545120100
Մուտքագրվող հաշիվ	900005000196
Գումար	300 000.00 AMD
Մանրամասներ	Արփի լիճ ԱՊ էստակադի և նավամատույցի կառուցման ՇՄԱԳ փորձաքննության համար